

# Ահնէ

## ԱՄԱՍԱԳԻՐ

ԿՐՈՒԺՄ - ԳՐԱԿՐՈՒԺՄ - ԲԱԼԱՀԻՐԱԿՐՈՒԺՄ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԿՐՈՒԺՄԻ ԵՐԱԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՊԵՏՐՈՎԻ ՎԱՐԴԱՐԵՆ



ՓԱԿՈՒՄՆ ՅՈՒԵԼԻՆԱԿԱՆ ՏՈՐԻՈՅ

Ֆ. ԴԱՐԱԳԻՐՁՔ ՆՈՀԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՈՐՈՅ ՎՈՐՄԱՆԱՅՅ ԶՈՐԱՎՈՐՈՅՆ ՄԵՐՈՅ  
ՀԱԶԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԳԵՂ ԳԿԱՅՏՅՆ

# ≡ ՍԻՐՈՎ ≡

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՌՈՒԹԵՐԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԿԵԼԻՔԵԱՆ



ԵՐԱՆԱՇՆՈՐ  
S. S. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎԱՆՔԵԱՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

— Հայ Եկեղեցւոյ մեծ սուզը .

Եկեղեցականը .

Պերճախօս Քարոզիչը .

Քրաքէք Գարեգին Կարողիկոսի մէջ .

Մեծ Հայրենասէրը .

Սոխտացող Կաղնին .

«Օրն էր Աւրբար, լուս ի Շաբար» .

Միասնականուրեան առաքեալը .

Պատմիչը՝ Հայ Արուեստին և Մշակոյրին .

«Մի՛ երկնիր, բայց միայն հաւատա՛» .

Ցիատակարան Զեռագրաց .

ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

Ե .

ԶԱԿԵՆ ԱԲՊ. ԶԻՆՉԻՆԵԱՆ

ԿԻՒՐԵԴ. ԱԲԵՂԱՅ

ԵՂԻՎԱՐԴ

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ

ՆՈՐ ՆԱԽԻԶԵՒԱՆՅԻ

Յ. ՕՇԱԿԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՓԻՍԿՈՊՈՍ

Ն. ԵՊՈ. ԾՈՎԱԿԱՆ

## Ս. ՑԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

— Հեռազիրներ .

— Եկեղեցականք - Բեմականք .

Հոգենանգստեան Ս. Պատարացներ .

— Ասմ. Տիկին Նուարդ Կիւլպէնկեան .

— Երանաշնորհ Տ. Տ. Գարեգին Ա. Կարողիկոս .

— Պատօնականք .

Դպրոցական նանդիպուրիւններ Ս. Արուեկ Շերս .

— Դաւանանդէս Ս. Թարգմանչաց վարժարան .

— Ամավեշի նանդէս Ս. Թարգմ. վարժարանի Մանկապարտէզի բաժնին .

— Ամավեշի նանդէս Ս. Թարգմ. վարժարանի Նախակրթարանի բաժնին .

Տեղեկագիր Մերոց Թարգմանչաց վարժարանի 1951-1952 տարե-  
ըրշանի .

ԿԻՒՐԵԴ. ԱԲՊ. ԳԱԲԻԿԵԱՆ

— Նոր պատօններ .

— Նուիրատուրիւն .

## ՏԽՐՈՒՆԻ

— Դատնիկ Կիւլպէնկեան .

— Տիկին Նուարդ Կիւլպէնկեան .

**ՄԻՈՆԻ Տարեկան բաժնեզինն է՝ բոլոր երկիրներու համար՝ Ս.ԲՈԼ. Շիլին 15**

*Redaction of the Armenian Monthly SION*

*Armenian Patriarchate,*

*P. O. B. 4001*

*Old City - Jerusalem*

*Via Amman (Jordan)*

**"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology**

Printed in

JERUSALEM

# —=ՍԻՐՈՒ=

ԽԶ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1952

≈ ՅՈՒՆԻՍ-ՕԳՈՍՏՈՒՍ ≈

ԹԻՒ 7-8



ԵՐԱՆԱԴՆՈՐՀ ՎԵՀԱՓԱՌ Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԴԻ ՏԱՐԻ 80-ՆԻ ԵՎՐՈՊԱ

## ԽՄԲԵԳՐԱԿԱՆ

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԾ ՍՈՒԳԸ

Երական մեծութիւն մըն է որ կը բաժնուի մեր եկեղեցական և ազգային կեանքէն, յանձին երանաշնորհ Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսի Մեծի Տանն Եկեղեցոյ, որուն եթէ ոչ անակնկալ, սակայն աղիտաւոր մահը, Հայ Եկեղեցու ներկայ իրականութեան մէջ կը թողու բաց մը որ անզոցելի կը թուի ըլլալ:

Վստահ ենք ցաւազինօրէն՝ թէ իր մահը ի խոր խոցեց բոլոր հայ հոգիները, ինչպէս արտասահմանի՝ այսպէս ալ Մայր Հայրենիքի մէջ, վասնդի զգայուն, հոգեսէր, զիտուն, և միանդամայն արուեստագէտ այս հոգեւորականին նկատմամբ, հայ ժողովուրդը միայն յարգանք ու սէր ունէր: Ան ազգին ու Եկեղեցին ամենէն բախտորոշ շրջաններուն, աւելի քան վաթսունամեակ մը ամբողջ, գէպքերու, հարցերու, յոյսերու և աղէտներու յորձանուաներուն միշտ մօտիկը, այս ժողովուրդի հոգին փոթորկող եղելութեանց ականատեսն ու վկանեղաւ, անոր ճակատազրի կառուցման արժէքներու վերբերման ու յայանութեան դործին ալ մեծ չափով բերելով իր բարձրորակ մասնակցութիւնը:

Հանգուցեալ Հայրապետին վրայ կը շողային, ակնախտիդ շքանշաններու պէս՝ ձիրքեր, որոնց զուզակչինը դժուար է ընել, և որոնցմէ իւրաքանչիւրը կինար նշանաւոր հանդիսացնել որեէ անհատ: Հոգեկան կեանքի ճշմարիտ կոչում ունեցող մը, բարոյական մարդ մը, բազմահմուտ պատմաբանասէր մը, զրագէտ մը, արուեստագէտ մը, աննման քարոզիչ մը և նոյն ատեն անդուլ և անյագ ուսանող մը, միշտ ի խնդիր հետազօտութեանց մեր անցեալ արժէքներու, մութերէն և աւերակներու ծովէն վերբերելու հայ հոգին կազմող տարրերը: Երբ կը կենանք երանաշնորհ հայրապետով պայմանաւոր այս արժետափակին առջե, մեր միաքը երկիւղածօրէն կ'երթայ այս բոլորը կարելի ընող, իմի ձուլող և շքեղօրէն ցոլացնող մարգուն, անձնաւորութեանը:

Յետագարձ ակնարկ մը իր կեանքին ու զործունէութեան վրայ, կընայ ցոյց տալ արդարեւ այդ անձնաւորութիւնը՝ իրը հոգեւորական, իբր զրչի մարդ, իբր բեմի մարդ և վարչական դորձերու յանձանձիչ: Իր եկեղեցական ասպարէզին առաջին սանդղամտին վրայ իսկ՝ ուշագրաւ կը դառնայ երանաշնորհ Վեհը, զրական և մանաւանդ բանահաւաքման և պատմական աշխատութիւններով: Անհուն է իր վաստակը, նուիրուած մեր հնապիտական արժէք ներկայացնող վայրերու ուսումնասիրութեան, մեր ձեռագիրներու և մանրանկարներու մանրակիտ ու հմուտ պրագտումներուն: Զենք գներ հոս ցուցակը իր գործերուն, հրատարակուած և անտիպ, որոնց թիւը քանի մը տամնեակ հատորներու կը հասնի:

Ժողովրդային բանահիւսութեան վերաբերեալ հաւաքումներ, պատմանասիրական և մատենազրական զործեր, հայ արուեստի վերաբերեալ, զեղադական, զարդանկարչական, մանրանկարչական և որմանկարչական աշխատու-

թիւններ, որոնք զմեղ կը դնեն ցարդ անժանօթ մնացած զեղեցկութեանց ամբողջական կալուածներու առջեւ:

Ընդարձակ է իր տաղանդը, ինչպէս ընդարձակ իր զործը: Հանգուցեալ վեհափառը իրը մտքի բանուոր կը բացառուի մեր մէջ իր նմաններէն կարդ մը հաղուազիւտ տուաւելութիւններով: Պատմական իր վերկառուցումները միայն ատաղձ, նօթազրութիւն և համեմատութիւններ չեն, ինչ որ սիրելի և տիրական մեթուր կազմեց մեր կարդ մը բանասէրներուն և պատմաբանասիրական դպրոցներուն, ան զիտական ոգիրով և բարձրապսյն քննադատութեան սկզբունքներով կը դիմաւորէր հարցերը: Թուականէն, փաստէն, պատմական ստուգութենէն վեր կար իրեն համար ոգեղէն իրականութիւնը անցեալին: Պատմութիւնը հանգուցեալ վեհին համար յուշազրութիւն մը չէր մեռած բաներու, այլ զիտութիւն մը և արուեստ մը, որոնց չնորհիւ միայն կընայ կենդանանու անցեալը, զայն ընելով նոր և բարախուն: Հանգուցեալը տէրն էր գեղագիտական աշջի մը, զատորոշել կարենալու համար հայ արուեստի հանդէսին մէջ կեղծն ու իրաւը, եկամուտն ու հարազատը:

Սիրելի էր տեսնել և հաստատել եռամեծար Վեհին զուրզուրանքը մեր անցեալի մնացորդացին հանդէս, երբ անվիճելի ձեռնահասութեամբ կը վերակազմէր մեր պատմական շրջանները, անոնց ոգեղէն կառոյցները, մատնանշելով մեր բազմերախտ իշխանական տուններու շինարարական, ճարտարապետական, դեղարուեստական և քաղաքակրթիչ զգայարանքին յանկուցիչ բնութագրութիւնները: Հանգուցեալ վեհափառը կը հաւատար թէ հայ հոգիէն ծուէններ կային պահուած այդ վանքերու և պալատներու ներքեւ, և այդ ոգին վերբերելու իր ճիզվն մէջ, ինք ևս յաճախ կը հոգիանար, անցեալէն մադնիսացած: Խոր կուզար միանալու Հանգուցեալ վեհին խորունկ հայրենասիրութիւնը, ոսկի չահի մը պէս բացուող մեր անցեալի աւելներուն վրայ: Անոններէն տոնմերու և անոնցմէ քաղաքակրթութիւններու գացող իր միտքը, մեր անցեալը կը զըրկէր այնպիսի խորունկ զորովով մը, որ միայն մեծերու սիրար զիտաէ զգալ և տալ:

Գալով Երանաշնորհ վեհի սպասին, մեր ամենէն քիչ մշակուած աշխատանքին, մանրանկարչութեան, ուրիշ բարիք: Անշուշտ որ վեհնետիկն ու Վիեննան թանկազին արդիւնքներ ունին այս տեսակէտէն, սակայն Գարեզին Կաթողիկոսին երեան բերած արդիւնքին մէջ բարախող շունչը հայրենիքէն կ'առնէ իր ըլսումը: Հանգուցեալը նկարներ միայն չէ չափած, անոնց գոյնը միայն չէ վերլուծած, այլ անոնց ծնունդ տուող կեանքը ունեցած է իր աշխերուն, իր ոտքերուն և մատներուն: Ան առանձինն ստեղծեց մեր մանրանկարչական, զարդանկարչական և որմանկարչութեան մեծ Գպրոցը, որ կը շահայ մեր ժողովուրդին հոգեկան թափանցումը իրազործել:

Այս տեսակէտէն պէտք է ըսել թէ Հանգուցեալը բախտաւոր եղաւ, վասնզի զիրքերէն և թուղթերէն աւելի քարեր՝ աւերակներ ունեցաւ իր ոտքին, որուն համար զործաւորն ու զործը զիրար պաշտպանած են իր վաստակին մէջ: Ան զիտցաւ կորուսէ փրկել վտանգուած զեղեցկութիւնները, կործանումներու ընդարձակ ծովէն վերբերելու անզին զոհարներ, համիրամի ու լուսքներ, եթէ կարելի է այսկերպ պատկերաւորել:

Աստուծոյ և ազգին զերազանցապէս նորիրուած զործիչի իր ազնուական

ու բարի հողին, տարիներու անձանձը վոյթի, խորիմաստ թափանցումի և աննահանջ խուզարկողի խորհրդանիշ անձնաւորութեան բարձրացուց զինքը մեր օրերու զահընկեց իմաստութեան սպասին մէջ : Իր խորին համոզումն էր, որ Աստուած մեր մեծ ու երջանիկ նախնեաց կեանքով սքանչելի գործեր, հրաշք ներ կատարած է մեր անցեալին մէջ, իր ճակատագրին բարձրութեան վրայ բռնելու համար մեր ազգը, ու պատմական անդրադարձումներուն իր մեծագոյն ճիզր եղած է ցուցնել այդ խորհուրդը : Իր բովանդակ կեանքը հետ ի հե վազք մը եղաւ ի խնդիր այդ արժէքներուն : Ապրելու տեսչը մեծ էր իր մէջ, սակայն ասիկա ոչ հասարակ տուումով և հասկացողութեամբ, որ ամէն մարդուն յատուկ է : Իր Աստուածէ խնդրած տարիները իրեն համար չէին, այլ իր վեր ջաւորութեան զալ չուզող գործերու և նպատակներու իրագործման ի հաշիւ Այդ էր պատճառ որ իր հզօր հողին միշտ քարշ տալ կը փորձէր իր մարմինը, զայն իրեն վահան գործածել ուզելով մահուան դէմ . մինչեւ այն չարաշուք օրը, երբ ստիպուեցաւ վար գնելու իր այլևս անկրելի բեռք, ութսունհինդ տարիներ զայն իրը ընտիր անօթ մը ծառայեցնելէ վերջ բարձր ու բարի նպատակներու իրագործման :

Լաւատես, անվեհեր, համբերող, անդուլ և ուժգին . ահա իր նկարագրին ամենէն կարկառուն զիծերը : Պարզ, անպատրուակ և անկեղծ էր ինքը, ուշազրաւ ըլլալու աստիճան : Հակառակ ասոր սակայն, զգալի էր իր հողին բարձր որակը, անուշ լոյս մը կը ճառագայթէր կարծես իր բովանդակ էութենէն, այդ լոյսը չէր չացնէր, սակայն յարածուն քաղցրութեամբ կը համակէր զինք դիմագրաւողը, և կը զգայիր թէ հայրական բարութիւնն էր որ կը բարխէր իր սրտին մէջ : Իր հմայքը և ուժը այդ բարութեան և պարզունակ քաղցրութեան մէջէն էր որ ի յայտ կուզար և կը համակէր իր շուրջինները : Զօրութիւն՝ որ բարութեան մէջ կը կատարուի, գործիչ մը համար, որ բարձրագոյն իտէալէ մը կ'առնէ իր ներքին մղումը, յաջողութեան ամենէն անհրաժեշտ պայմանն է :

Զազդուիլ ատելութիւններէ, վերէն նայիլ փոքրութիւններու, մարդերու և գործերու աւելի բարի կողմերը տեսնել, չանալով ստէպ բացատրել միայն յոռի կողմերը, յստակ և ազնիւ նկարագրի և ներքին քաջութիւն կը պահանջէ, որուն համար անհրաժեշտ է ամէն բանէ առաջ որ մարդ ունենայ հողին ոյժ և սրտի բարութիւն . առանց այս առաքինութեանց անհնար է տիրանալ միւս բարձրագոյն և աւելի կարեոր այն յատկութեան, որ պառւզն է Աստուծոյ հանդէպ անխախտ հաւատքին և մարդոց վերաբերմամբ քաղցր վստահութեան, զոր աւելի ընտանի բառով մը կը կոչենք լաւատեսութիւն : Հողելոյս Վեհին ամենէն շեշտուած առաքինութիւնն էր այս, այն ճառագայթուն հեռապատկերը որ կ'արենուէր իր ապազայի բոլոր յառաջադրութիւնները, կազմելով բանալին իր մեծ իրազործումներուն և յաջողութեանց :

Միշտ կը հաւատար թէ պիտի ապրի, վասնզի խորունկ զգացում ունէր թէ սահմանուած էր բան մը՝ օգտակար և տեսական գործ մը կատարելու Աստուծոյ փառքին և ազգին օգտին համար : Այդ լոյսը չխաբեց զինքը բնաւ, որուն իրազործման վերջին հանգրուանը հանդիսացաւ Անթլիկաս, որ չործիւ հանգուցեալի յառաջահայեաց նպատակներուն և ճիզերուն, ոչ միայն իր բարու

յական հմայքին և կարելի արդիւնաւորութեանց մէջ մեծ յաջողութիւններ արձանագրեց, այլ մանաւանդ տնտեսական գետնի վրայ ևս զգալի ապահովութիւններ ունեցաւ։ Շնորհիւ իր նախորդներուն սկսած, բայց իրմով աւելի նպատակաւորուած կառոյցները, կաթողիկոսարան, կաթողիկէ, դպրոց, տպարան, տակաւ խորացուցին հիմերը աւագուատի մը վրայ նստած այս հաստատութեանը, և շնորհիւ սիրոյ և խնամքի նուիրումին, հասցուցին զայն այսօրուան դոհացուցիչ վիճակին։ Ոչ մէկ ատեն կիլիկիոյ Աթոռու բախտը չէր ունեցած այսքան ժամը բայց այսքան օգտաւէտ առաքելութեան մը հանդիսարանը ըլլալու, և ասկիա շնորհիւ եռամեծար հանգուցեալ Գարեգին կաթողիկոսի ստեղծած ողիին ու հմայքին։ Ոհա այս կարգի անստգիւտ արժանիքներով սժառուած անձնաւորութիւն մըն էր հանգուցեալ Գարեգին կաթողիկոսը։ Եկեղեցական մը, որ աւելի քան վաթուուն տարիներ ծառայեց իր ժողովութիւն՝ զրով, խօսքով ու զործով, իր կոչումին ու գերին արժանավայել զիտակցութեամբ, որ ևսակաւ ընտրեալներու առանձնաշնորհն է լոկ։

Հեռուէն միայն դիտուած արժանիքի այս ընդհանուր նշմարները կընան տրդէն ցոյց տալ թէ որքան ժանր է կորուստը զոր ազգն ու եկեղեցին կը կըեն իր մահովը։ Անհուն է վիշտը որ կը համակէ ամէնքս, մտածումին առջե, թէ ինչկայ այլևս Գարեգին կաթողիկոսը Մեծի Տանն կիլիկիոյ, և այս նախ իր անձին տեսակէտովը, այսինքն իրեն նման մեծարժէք Հայրապետէ մը զրկուելնու համար, և յետոյ Անթիլիասի Աթոռին և մեր Եկեղեցւոյ տեսակէտով, երբ մանաւանդ նկատի ունենանք այն փափուկ կացութիւնը, ուր կը դտնուին Եկեղեցին և ազգը։

Իր մահովը ամենուրեք զգացուած սուզը և իր թեմին մէջ ժողովրդային իր մահունք մասնակցութիւնը իր յուղարկաւորութեան և թաղման, պաշտօնական և սովորական ըլլալէ աւելի բան մը կը զգացնէին։

Աղօթենք որ Անմահութեան Տէրը ընդունի իր հաւատարիմ ծառայի հոգին ի շարս հոգւոց երանեալ հայրապետաց։ Տայ միտիթարութիւն, մանաւանդ հոգին ի շարս հոգւոց երանեալ հայրապետաց։ Տայ միտիթարութիւն, մանաւանդ սէր և կորով աստէն մնացողաց, հոգեւանդն ուխտով կենդանի պահելու համար սէր զործը, շարունակելու իր հոգին Անթիլիասի Աթոռէն ներս և բովանդակ Հայ Եկեղեցւոյ համար։ Աղօթենք որ Բարին Աստուած այցելէ ազգիս և Եկեղեցւոյ Հայաստանեայց, անփորձ պահէ իր արիւնով զնեալ հօտը, անսասան և անդորր պահէ մանաւանդ անոր նուիրապետական իշխանութիւնը, զՄայր Աթոռն Արարատեան և անոր քաջարթուն գահակալը, վշտաբեկ իր ամենէն քաղցր սիրոյն մէջ, իր հոգեհարազատին այս մահովը։

Հանգիստ յոգնատանշ իր մարմնոյն, անդո՞րր մշտայոյզ իր մոքին, խաղաղութիւն իր հոգիին։



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆԸ

Քարեգին կաթողիկոսի անձին մէջ, անկախաբար իր միւս իրաւ և ամուր չնորհներէն, տիրական պիտի մնայ իր եկեղեցականի պայծառ նկարագիրը, խօս ու հաւատաւոր, Աւետարանի կեանքին ու ճշշմարտութեան լոյսով ողողուն։ Տեղին է իրեն համար կիրարկել ոյորովայնէ» կամ սասկաւաթիւ ընտրեալներէն ըլլալու տարազը, որով եկեղեցին սկիզբէն սովոր է ուրակել հաւատքի ու ճշմարտութեան համար իրենց անձը ամբողջովին նուիրաբերող նահատակները, մարտիրոսներն ու սուրբերը և սմանչելապործ հայրապետները։ Այսպիսի անհատներ կը ծնին կամ կը կոչուին Աստուծմէ՝ հարիւրամեակներու ընթացքին՝ զօրութենաբար իրենց հոգւոյն խորը ունենալով հաւատքին անմար և մշտարձարձ հուրքը, որ իրը ի «հրահոսան աղբերե» մղում ու կերպարանք կուտայ արդիւնարար հաւատքի գործերու՝ անզիմազրելի, հրամայական ու գերող զօրութեամբ։

Անոնք որ մտերմութեան մէջ եղած են բազմանորհ Վեհին, ու հաղորդ՝ անոր հոգիի ու մտքի ազատ ու անկաշկանդ թոփչներուն, կրնան անվերապահօրէն վկայել թէ անոր հոգին մշտածորան աղբիւրն էր հաւատքի, ու առ Աստուծած ունեցած իր աներկմիտ վստահութիւնը իր կեանքին ու գործերուն մանաւանդ յաջողութիւններուն կուտար ձեւ ու կերպարանք, և այս բարի ու վստահ հաւատքը՝ իր մէջ տարրացած՝ դաղտնիքը կը կազմէր ինչպէս վտանդներէ իր կեանքը պահպանելու նոյնպէս և իր առաջադրութիւններու պակումին։

Հաւատքը իր մէջ աղբիւրն էր լուսաւոր ու անշամանդաղ աստուծային իրականութեան ու ճշմարտութեան ուղղի հաւակացողութեան, և դրապատճառը, կեանքով ու գործով զայն իրագործելու՝ զիտակից, զոհաբերող ու ինքնանուէր ճիգով մը իր եկեղեցւոյն ու ազգին մէծ սպասին ի ինզիր, դառնալու համար յետոյ՝ ամուր ապաւուն ու յոյսի հզօր աւտարակը մեր մութ ու արիւնոտ ճակատագրին գիմաց՝ իրը լուսատու աստղ՝ որուն պիտի յառէին յուսահատ և լքուն նայուած քները իր գժրախտ


ժողովուրդի զաւակներուն։ Իրեւ անզիքաջ և առաջնորդ, Արտարապատի ու Կարսի անկման մէջ, ազատարարն ու խրախուսիչը եղած է ան, օրինակելի ու համբուրելի անձնուիրութեամբ մը, ուր իր անձին մէջ, Հայաստանեայց գարաւոր Ս. Ե. Կեղեցին՝ իրը տապան ապրեցուցիչ զարձեալ կրկէս կը նետուէր, ազատազրելու իր ժողովուրդին հաւատքին ու ազատութեան իրաւունքները, հորդաներու բռնարարումին ու վայրագութեան մոլուցքէն։

Աներկեան ամէն ոք կը խոստովանի և կ'ընդունի թէ Եռամեն ու բազմանորհ Գարեգին Վեհը, բացառիկ ու անստղիւտ, հուսոր, զիտուն ու իմաստուն հովուապետ մըն էր և իրեւ եկեղեցական Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, հին սերունդի այս վերջին շրջանի փառքերէն կը մնար, որուն հոգին՝ հանգէտ Ռուկեղարու մեր անզուզական զայք Մուրբերուն, ու անոնց Թարգմանիչ աշակերտներու հոյլին, ու Արծաթի գարուն, լուսեղինացած՝ հոգիի, բարութեան ու հեղութեան բիւրեղացում եղող Շնորհալի հայրապետին՝ մարմին առած էր մեր ժամանակին, անոնց հաւատքին ու մեծագործութեանց հրայրքները հրաշագործելու, օտարութեան մաշումի ենթակայ Սփիւրքի վայրավատին հայութեան ճակատագրի ճամբուն վրայ։

Գարեգին կաթողիկոսի միտքին մէջ երկու գաղափարներ կային, իրարու լծորդ ու զիրար ամբողջացնող, Հայաստանեայց Ռողղափառ Ս. Եկեղեցին ու Հայ մշակոյթը, իր բաղկացուցիչ բոլոր մասիրով։ Այս երկու հրայրքներն էին որ թափ ու թուիչք կուտային իր հոգեկան ու իմացական ապրումներուն, իր խօսքին՝ պարզ ու առուհոսող պերճութեան։ Տարօրինակ էր իր մօտ հաստատել այս գաղափարներու մշտատել յեղյեղումը՝ տեսակ մը մտասիեռում դարձած յաճախտնք, որ կուգար այն խոր աղապատանքէն՝ գրեթէ պաշտամունքի մարմին զգեցած զգացումէն, որ հրայրքն է իր ժողովուրդի մեծութեան ու վառքին՝ անոր մէջ «ստեղծագործ ոյժ» ամբարտակող ու ատի արանց լիօնակաց արձանի գործերով հարուստ, քաղաքակերթ ու յառաջադէմ ազգի մը միտքի անմեռ ոգորումներուն ու երկունքի իրականութեան, գարուց ի գարս։ Ու հապատանքի առինք-

նողայս զգացումը՝ տեսակ մը պայծառ կերպարանք՝ այլակերպում կուտար իր շնորհալիք արուեստագէտի չարժուձևերուն՝ խօսքի ու արտայայտութեան զեղումին, առիթներու ու դասախոսութեան պահերուն, իր այնքան կինոսւնակ ու յոգնիլ չճանչցող աշխայթին։ Այսպէս, իբրև եկեղեցական իր մէջ ոգեղինացած էր հաւատքի ու զիտութեան լոյսը, արժէքներու ըմբռնումին ու

տատող այն անստերիւր հետեւողութիւնն ու հաւատարմութիւնը, զօր ունեցած է արեւելահայ եկեղեցական միտքը, հանդէպ ազգային, ու կրօնական գուրզութալի արժէքներուն, զանոնք լոյսին բերելու կարովի ճիպին։ Արեւելահայ եկեղեցականութիւնը, վաթսունական թուականներուն, իւրացնելով գերման մտքին յառաջահայեց գիտութիւնը, կրցած էր մէթոսի ու դիտութեան



ճանաչողութեան տեսիլքը, մագաղաթներու էջերէն ու հողին ընդերքներէն երեւան բերելու այն բոլոր արձանացումները, որոնք նպաստը կը բերէին հայ մշակոյթին, իշխանական տուներու յայտնաբերման, վանքերու, դպրոցներու և եկեղեցիներու արգադիր ընծայաբերութեան և փառքի կոնթողումին։

Կ'արժէ հոս փակազիծ մը բանալ հաս-

այդ բարեքը ծառայեցնել ողգային ու կրօնական մեր արժէքներու ինքնաւրոյն յայտնաբերման, խղճելով եղծել անոր շեշտագային դիմագիծը։ Սյդ իսկ պատճառով օժտուած ուսանողներ — Գարեգին Ասրկաւագ մինն էր անսոնցէ — նիւթական բարերարութեամբ կը զրկուէին Գերմանիա՝ համալսարաններու մէջ Աստուածաբանական, իմաստասիրական ու պատմական ուշ-

սումերու մէջ հմտանալու համար։ Եւ այս ժէսթը բարիք մը ու առաւելութիւն մընէր հայ մշակոյթի պատմութեան՝ որուն անսխոնչ ու հաւատարիմ վաստակաւորը հանդիսացաւ Գարեգին Վեհը, իր կեանքի երկարամեայ բովանդակ տեւողութեան ընթացքին՝ բերելով նորութեան ու որակի անդնահատելի նպաստ, միայնակը, իր ետին թողով տիտանեան պատկառելի վաստակ մը, որուն նման աշխատանքի մը իրագործումը արեւմտեան մեր զոյգ կեղրոններու մէջ, գուցէ տասնեակ մը կեղինակներու հաւաքական աշխատութեան ճիգերով հազիւ թէ լոյսին կարենային զալ, հարիւրամեակի մը տեւողութեան։ Հայ եկեղեցականը ինքն իր մէջ բազմապատկուած տաղանդներու, կամքի ու իրագործման հսկայ մընէ ինքնին՝ երբ կը կոխէ հայ հողին վրայ և հաւատարիմ է ազգային անմեռ ու զարաւոր զգացումներուն։

Այս ամենուն հետ և աւելին՝ մեծ եղած է նպաստը Ս. Էջմիածնի, իր միտքին ու հոգիին կերտուածքին վրայ, վասնզի ան եղած է մեր մտաւոր ու հոգեկան լուսաւորութեան կեղրոնը և տապանակը նոր ուխտի աւանդին, քրիստոնէական լոյսին ու ճշմարտութեան, զոր գուրգուրանքով ու երկիւղած զգուշութեամբ պահպանած են զայն մեր նախնիքը, աններող ու անթոյւլատու ըլլալով որ նորամուտ և օտար որոմ կամ աղանդ չընդխառնուի իր ցորենին կամ նաշինին, ու դարերավ Աւետարանի անխարդախ ու անարատ կաթն է ջամբած հաւատաւոր սերունդներուն։ Ու Մայրենի Ս. Եկեղեցիէն ներշնչուած այս աւանդը զգուշացուցիչ աղդաբարութիւնն ու սաստն է եղած Էջմիածնական եկեղեցականներու, որոնք արևմտեան գիտութեամբ ճոխանակով հանդերձ չեն փորձած աղարտել կամ ընդխառնել հայ աւանդութեան ու կրօնական արժէքներուն՝ ինչ որ օտար էր և նորածայն։

Կրօնական ու ազգային արժէքներու առջև կենալու այս պատկառոտ ու խանդաղատալից վերաբերմունքին արդիւնքն էր այն անդնահատելի ճիգը, որ հակառակ եւրոպական գիտութեան մէթոտին ու ուսման իւրացումին, աննուած ու աննահանջ, արեւելահայ եկեղեցականութիւնը իր ամէն կարելի չանք ու հոգածութիւն ի զործդրաւ, պահելու տոհմային ու ազգային նը-

կարագիրն ու ինքնուրոյնութիւնը այդ չեստ ազգային արժէքներուն, ու զանոնք լոյսին բերելու, և լուսաբանուելու տեսակէտները կը մնան ազգային արժէքներու գնահատան իսկական ճշգրտակներ, ազատագրուելով աւերակներու և աւերի ճանկիրէն, օգտագործելի ատաղձներ ու նիւթեր դառնալով ուսումնասիրական հետաքրքրութեան, ազգային և օտար հեղինակներէ։

Այդ համբերութիւն ու աշխատանք պարտապրող գործը, փառքով ու պատուավ կատարեց, զիտութեամբ և գեղարուեստի նրբութեամբ ճոխանակէ յետոյ, արեւելահայ մտաւորական եկեղեցականներու ընտրանի հոյլը, որոնց ամենէն փայլուն ու արժանեօք պասկաւորներէն մին պիտի մնայ առյաւէտ Գարեգին կաթողիկոս, իրարև մեթուտիկ ու կոթողական երկերու արդիւնաշատ սպասարկուն։

Ու կը հաւատանք զեռ թէ Ս. Էջմիածնի կաթողիէն, և շուրջի գեղակերտ ու միաձոյլ միւս հրաշակերտները հայ ճարտարապետութեան, որոնք կը սլաքուին դէպի երկինք, ու Մասիսի ձիւնափառ կոնածե գագաթները՝ որոնք, կը խիզախին պատուի երկնքի կապոյտը ու Արագածի կատարէն՝ «առանց պարան»ի կախուած Լուսաւորչի հիւատարածած կանթեղը, իր ժորքին ու հոգիին մէջ հրաշակերտեր էին «հայ հոգու սենդագործ ոյժքին, մեծութեան փառքն ու արդար հպարտանքը, զոր իր ալ փառքն ու հպարտութիւնը նկատած էր անոնց գեղեցկութիւնն ու զօրութիւնը փոխանցելու սերունդներուն։

Ու իբրև լուսամիտ ու զիտակից եկեղեցական, այդ թեման, Սարկաւագութեան խոնարհ աստիճաններէն մինչև նուրիապետական կարգերու բարձրագոյնը՝ կաթողիկոսութիւնը, իր հանապազօրեայ ուսուցման ու գնահատանքի առարկան եղաւ սերունդներու հոգւոյն մէջ տպաւորելու շայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Սէրը և Հայ Մշակոյթի հրապոյրը։ Կը հաւատար մեր պատմական ճակատագրի սուուգութեան՝ փաստուած դարերու ընթացքին, թէ Հայաստանեայց Ս. Եկեղեցին է կանգնած՝ իբրև «տապանակ ապրեցուցիչ» հայ ժողովուրդի արիւնոտ ու արտօմ գիրախտութեանց զիմաց, կատարելու իր փրկարար ու նախախնամական գերը, խուր-

թերէ ու փոթորիկներէ բռնուած նաւը աւաշնորդելու դէպի անքոյթ նաւահանգիստ, թէ Ավիւաքի և թէ հայրենիքի մէջ:

թէ ածնուցիչ և գաստիարակ» Մայրինի Ա. Եկեղեցւոյն լծորդուած պէտք է ֆայ Հայ Մշակոյթը, դպրութիւնը, անսնք է որ ապագայնացումէ ու օտարաժողութեան ախտէն պիտի փրկէին Սփիւռքի հայութիւնը: Ու ներշնչուած այս զգացումէն ու հաւատքէն, ամենուրեք և ամէն ժամանակ, երբ առիթը ներկայանար, Աւլիսիր Վեհը, խանդաբորբ ու յափշտակուած, այս կրկնակ զգալափար-տեսիլքներու հրապոյրն ու կազդոյրը՝ իրրե կրակէ բառերու գուրայի մը ընդմէջէն, տաք, պարզ ու արտայայտիչ շեշտերով, հրամայական որքան համոզիչ, կը փոխանցէր ամենուն, հայրական առինքնող զգացումի մը զեղումավ: Ու այս է եղած Աստուծոյ և ազգին առջև իր յաւիտենական ուխտը, իր ասպարէզի առաջին օրերէն սկսեալ: իր թեմակալի և առաջնորդական փոխանորդի ըլլաններուն, ժամագրավայրը ըրած է իր պաշտօնատեղին, իրր նոր իմն կաճառ ժամանակի մեծարժէք մտաւորականներու, աննց հրացումին ու գնահատութեան արժանանալով և զանոնք հաղորդ պահելով Հայ Դրչութեան, Մանրանկարչութեան, ժողովրդային գիւցազնավէպէկրու, զանքերու և դպրոցներու ու իշխանական տուներու շուրջ կատարած իր ուսումնական վաստակին ու անոնց մով վերբերուած նոր գիւտերու և լոյսի նպաստին: Մտաւոր իր աշխատութիւնները, «Արարատ» ամսագրի խմբագրապետ և աշխատակից գառնալով աւելի համբաւէի կը բերեն զինքը և քաղաքական ու կրօնական հարցերու շուրջ իր առաջնորդութեանը մեծ հետաքրքրութիւն և գնահատանք առաջ կը բերեն մտաւորականներու ըրջանակին մէջ, իրրե ողջամիտ և զարգուն մտաւորական եկեղեցական գրչի ու մտածողութեան արժէքաւոր արտայայտութիւններ:

իր երեսումը, իրրե նուիրակ և լիազօր ներկայացուցիչ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ն. Ա. Օծութիւն Տ. Տ. Խորէն Ա. Սրբազնազոյն Կաթողիկոսի, 1934-ին, Սփիւռքի հայութեան հայաշատ կեդրոններուն մէջ, Լոնտոն, Փարիզ, Եղիպտոս, Թունաստան, Պաղեստին, Սիւրիա, Լիբա-

նան, Իրազ և Հուսկ, Հիւախային Ամերիկա, Հոգեկան ի՞նչ թարմութիւն և խանդավառութիւն առաջ բերաւ, ուր ուրեք որ անցաւ իր Սիրիելի անձը, ամենուն Արքոյն ու խանդապատանքին առարկայ եղաւ, ու պանդուխտ հայը իր մէջ ողջունեց ու ողջագուբեց իր գարերու տեսիլքը, իր Հայրենիքը, Ա. էջմիածինը, իր գոյութեան պատուանդանը և հաւատքին Արքութիւն Արքոցը, անսնց ամենուն կարօտանքն ու պաշտանքը իր շառնչէն և խօսքին ոյժէն առնելով, անդամ մը ևս իր ակնկալութեան ու պանդստութեան սպասումին մէջ իր թմրած հոգին ու միտքը ջրդեղուած զդալով: Ու իրրե ճշմարիտ հովիւ և լուսամիտ եկեղեցական, իրրե հոհետոր և հայրենանուէր հոգեորական, հայրենիքի կարօտն ու Ա. էջմիածնի հաւատքը փոխանցեց ամենուն, ուր և զնաց տարաւ այդ զգացումը, ի միխթարութիւն և ի սփոփանս՝ վտարանդի Սփիւռքի հայ բեկորներուն և Հայրենիքը ու Ա. էջմիածնի զգալափարին՝ ինչպէս ըսած ենք վերագոյն՝ լծորդելով հայ մշակոյթի ու արուեստի հրապոյրը, գեղեցկութիւնն ու մեծասաքանչութիւնը:

Ով որ լսած է զինքը Ա. Եկեղեցիներու բեմէն, կամ բանախօսութեան ամբիոններէն, հոգւով ցնծացող ալեփառ Վեհը, ոչ միայն չի կրնար մտահան ընել իր խօսքին չերմութիւնն ու յորդազեղ անկեղծութիւնը, այլ անոր պի խորոց սրտին և «ի հաւատոց» ըսուած ճշմարտութեան ուժգնութիւնը, որ բանադատին ու անառարկելի շեշտ մը ունէր. իսկ իր արուեստագէտի մեծագայելուչ ու կիրթ շարժումները՝ հրացում ու կախարդանք միայն կ'առթէին ունկնդիր հօծ բազմութիւններուն: Ի մի քան, Շնորհալի, մեծանձն, ներող ու անիշշար, համակ բարուրիմ, սուրբ և անարատ հովաւափետի տիպար մին եր ան. ու իր այդ շնորհներուն համար համազգային միրոյ և մեծարանքի արժանացաւ: Այս գեղեցիկ ու բարի զգացումը, իր երեակ Յօրեկեանները տօնելու առաջազրութիւնը, զար յլացաւ և իրազործց լայն և պատուաւոր չափով և նիւթական միջոցներով, Ամերիկահայութիւննը, ոչ միայն մեծարանքի ծոյլ արտայայտութիւնն էր մեծ ու աղքանուէր եկեղեցականի անստղիւտ և իրաւ արժանիքներու գնահատութեան, այլ

և մեծագին օժանդակութիւնը, լսենք իշխանական, իր նոր Աթոռին վերելքին ու իրագործութերու զիւրութեան և արդիւնաւորման համար:

Ամէն տեղ, քաղաքներու և հայուշատ կեզրաններու մէջ, Ամերիկահայութիւնը կազմեց Յորելինաւական յանձնախռութեր և տօնեց Ն. Ս. Օճութեան յորելեանը արժանաւոր չուքով և հնչուն օժանդակութեամբ, որոնց կը նախազանէր ինքը ու կը խանդավառէր ներկանները շնորհակալութեան և հայրական օրհնաձիր զեղութմերով:

Ամերիկահայութիւնը սիրեց ու գնահատեց ալեփառ Վեհը, իր մտքի, հոգիի ու հաւատքի անկեղծ ու նուրիեալ առաքեալը, ու, իր առաջնորդական պաշտօնավարութեան եօթնամեջ շրջանը, Հիւսիսային Ամերիկայի թեմին մէջ, անգորը խաղաղութեան և իրերահանգուրժութեան ինչպէս և մասամբ համագործակցութեան ըըրջան մը եղաւ, իր սիրելի ու կախարդիչ անձին չուրջ համախմբելով ամերիկահայ մտաւորական ընտրանին ու անոնց հետ խորհրդակցաբար, չիջոյց առաջնորդաբանի պարտքին վիշապը և ամենուն մէջ արթենցոց Աէր ու գնահատանք Հայաստանեաց Ս. Եկեղեցոյ և հայ մշակութիւն հանդէպ:

Ամերիկահայութիւնէն յետոյ, Եպիպտահայութիւնը, երկրորդ ըլլալով արժանաւորապէս սիրեց ու պատուեց այս քաջ հոգուապեալ, բերելով իր լայնազայն օժանդակութիւնը, ոչ միայն յորելինական հանդէսին, այլև յարհնայնի զօրավիզ ու բարերար հանդիսանալով իր եկեղեցանուէր գործունէութեան:

Ս. Յակովիքանց Միաբանութիւնն ու Պաղեստինի հայութիւնը ես, ի նշան սիրոյ և մեծարանքի ու արժանեաց գնահատութեան, կազմակերպեց ու արդիւնաւորեց՝ իր չնորհաբեր ներկայութեան, յօրելինական հանդիսութիւնը և իրովանն և լայնազայն միջացներով փառաւորեց Վեհը անձը և արդիւնաւորեց Յորելինաը:

Անմառանալի պիտի մնայ և Պատկ իր եկեղեցականի արժանիքներուն ու փառքին, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վերելքը, եօթը սուր տարիներու շրջանին, ուր, այնքան արագ արդիւնքի առաջնորդեց Անթիւնի Աթոռը, զայն օժտելով զարգացած երիտասարդ վարդապետներու հոգով մը, ու

անգույն և անդադրում ճռնչել տուաւ ապարանը, հրատարակելով արժէքաւոր երկեր Դպրեթանքի աշակերտութեան թուականան ճռւմը ու արժէքաւոր մատարութեան պահանջնին թեմերու կազմակերպութիւնը ուրիշ բարիք մը որ թափ առաւ և օժտուեցաւ երիտասարդ թեմակալ եպիսկոպոսներով, որոնք, կը հաւատանք ձեռնասունները ըլլալով Ալեփառ Վեհին իւրացուցած են ու պիտի իրագործեն իր իտէլլը ու պաշտամունքներու կանգնին Հայաստանիաց Ս. Եկեղեցոյ գերազոյն շահերուն և նուրիականութեան ոզնով ամէն գնով և պարագային՝ քարոզողները և քաջալերողները պիտի հանդիսանան Հայ Մշակոյթի և գեղարուեսուի, այսպէսով յարգած ըլլալու իրենց հոգեծնողին անմետեսիւքը և յիշատակը:

Իր մեծագոյն մտահոգութիւններէ մինէր նաև՝ իր երկար պահպատութենէն յետոյ, երթալ Ս. Էջմիածին ու Հայրենիք, օծելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Եկեղեցոյ կանոնագործ ամերիկանական ապեկցութիւնը, ու միայն յօրելինական հանդէսին, այլև յարհնայնի զօրավիզ ու բարերար հանդիսանալով իր եկեղեցանուէր գործունէութեան:

Մեծ է իր կորուսոը Հայաստանեաց Ս. Եկեղեցոյ, Կիլիկեան վատարանդի Աթոռուին և Միաբանութեան, Հայ Մշակոյթի Պանդէսնին, Ս. Էջմիածին և Մայր Հայրենիքին միանգամայն:

ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

## ՊԵՐՃԱԽՈՍՈՒ ՔԱՐՈՉԻՉԸ

Պերճախոսուրիւնը, առևէ բան առաջ, առևես մըն է, հոգեւոր լուսաւորութեան և զաղափարներ արտայալքելու կերպ մը ըլլակ յետոյ: Անտարակոյս բարոգի կարենալու համար, ենթական պէտք է ունենայ բաւարար կրօնական ուսում և որու պատրաստին, ընդհանուր զարգացում, լեզու, հնութիւն, և տակաւին բնախոսական և այլ յարմարութիւններ, սակայն ամենին կարեւոր, ենթին բերումը, ենթենչումը, հոգին և նուիրական խօսքին օրէնքը: Երբ բարոգիշը ունի այդ հոգին, խօսքին զօրութիւնը կ'ամենայ ու կ'աղբերանայ խօսողի ըրբեւուն քայ: Առանց այս բերումին չի կրնար կատարուիլ արուեստի որեւէ գործ:

Խօսքը սպաւութիչ է եւ հազորդական, ոչ թէ իր գոլցը ու յանկուցիչ ոնին կամ ըն- սուած ու զասաւորուած զաղափարներուն համար, այլ հոգեկան այն ժնորհին մանաւանդ, որ խօսքին նիւրէն, խօսողին անձեն և արտայայտումի կերպէն կը բնի յանախ:

Եռանաւուրի Գարեգին կարողիկոսը գերազանցունքն ենթացնումի մարզն էր, խօսքը իրեն համար զաղափարներու և բաներու տարահիւսուրիւն մը ըլլակ առաջ՝ ոգիի մը եւ պարող իրականութեան մը արտայայտութիւնն էր: Այդ իրականութիւնը կուգար իրեն մեր կրօնէն, մեր անցեալէն և անոնց իր մեջ սեղծած բարախուն և զեղուն ճրեմարտութիւններն: Հանգուցեալ Վեհր նախանձայոյց, նուիրեալ և հաւատարիմ մասկն էր իր հանցերու Ասունծոյն և իր ժողովուրդի անցեալ սիրազարծութեան: Անոնցմազ հաւատարիմ իր նոգին զիտէր վերածուիլ ապառուի կամուրջի մը, մեր անցեալէն ապա- զային երկարող: Աւրիւ խօսքով կը հաւա- տար անցեալէն դեպի ապազան ձգուող մեր հակասագրին:

Հակառակ ժամանակի պահանջներուն եւ արդիականութեան սխալ ըմբռնումներու տեղին, անիկան ամրախարիսխ կը մնար հաւատարիմ մեր անցեալին՝ և անով պայմա- նաւոր մեր արժեքներուն: Հայ Նկեղեցին ա- նոր հոգիին մեջ հրաժեներու և սիրազու- թութիւններու շարք մը ըլլակ վերջ, կը մնար տակաւին անկործանելի դրօք մեր դժբախ-

տուրիւններուն եւ աւերներուն դիմաց ծածա- նող: Հայ Նկեղեցին, իրեն համար, մեր ցե- ղային բիւրեղացած իտկալներու և ձգում- ներու աւանդաւանն էր. անոր զօրացումն ու կինսունակութիւնը, անոր նկատմամբ մեր անվերապան զուրգուրաններ միայն ի վիճակի պիտի ընկին այդ որբազան Հաստատութիւնը դիմակալելու օստր ու մասող ազդեցութիւն- ները, եւ մեղմելու ժամանակին պատճառած աւերները: Գասկզի Հայ Նկեղեցին իրեն հա- մար մեր ամեննեն նոր բնազդն էր, մեր ցե- ղային ինքնուրիւնը. այն վայրիկանին որ հանգուեր եւ եղուուեր իր աւանդական ու մասուր հասկացողութիւնը մեր մեջ, հոգե- բանական նետեղազականութեամբ մը՝ այդ բնազդը իր սեունդը պիտի վնասներ զիմն ձեւ- ւալորով հոգիի անհարազա կերպարաննե- րու ներքեւ, եւ պիտի ալլասերէր: Անո թէ ինչու երանաւուրի Վեհր նամար Հայ Նկե- ղեցին կը կազմէր մեր սամէն բան վերը և մեր փրկութեան անկործանելի գենքը: Այդ մատեսին մղումին տակ է որ ան սո- րիներով խօսած, ուսուցած, առաջնորդած եւ հեղինակած է, հաւատար եռանդով, ու գրիշը մատներուն իշած գերեզման:

Մեր պատմական ու եկեղեցական կերպի վեցին երեք խուռադ դարու ընթացքին, եկու զիտաւոր խօսքի վարպետներու, Օր- մանեանի և Դուռեանի, բարոգի ոնն ու մերուր առանձին զպրցներու ծնունդ պիտի տային: Առաջինին պիերախօսութիւնը քիս- տունական եռանդուն ջատագովութեան առ- ուեսի օրինակը կը հանդիսանար, իսկ Դուռեանինը, բարձունքն ուրականոր ու հա- խորակուած խօսքն էր, օրորուն ու ծփուն, որ բանասեղծական օծութեամբ ու ուղիւն- ներով կը հմայէր ունկնդիրները, եռան- թեամբ լցնելով բարեպատճիկ ու խորեզա- զած հոգիները:

Հանգուցեալ Գարեգին կարողիկոսին ե- ղանակը եւ արտայայտութեան ձեւը կուգար Օրմանեանին, իսկ նոգեզզած սլայքը կը մօ- տեցնէր Դուռեանին: Մեր պիերախօ- սութեան կրօնական զոյդ բնենաներու միա- ձուլեալ այս համադրութիւնը, որին ներ- գանակ ու ինքնելի, նոյնան հարսար ու ցցուն, զիմք կ'ընէին իրական ու փնտուած մեծ պիերախօսներէն մին: Եր խօսքին իրակութիւնը ինքնամուլ փառաբնութիւնն էր մեր անցեալին, անոր արձեններուն, եւ

ապրելու իրաւունքին: Սակայն ինքը այդ քմբունութեռուն սովորական արտայալտիչը չէ միայն, այլ աժամանակաց ունեցող նկարագիր մը՝ որ ունի իր սեպական հաւատքը եւ զայն կիրարկելու եղանակը, ինչպես եղած են եկեղեցւոյ եւ հաւատքի մեծ ներկայացուցիչները:

Վասնի հօմարտուրին մը եւ զաղսփառ մը երբ շանձնանար անոր սպասը ընող հոգիին մէջ, օտա խնախ կը մնայ անապատին մէջ ննչող ձայն մը միայն, անազդեցիկ եւ անարգասիք: Ճշմարիտ խօսողը, ինչպէս ըսուած է այնքան իրաւամբ, ան ե' որ կը հայ ըլլալ իր ժողովուրդին եւ անով պայմանաւոր արժեկներուն եւ հօմարտուրիններուն ձայնը: Քարոզիչը ձայնն է Աւետարանին, պատգամաւորը հօմարտուրեան: Պարտի՛ եւ Հայութի՛, ուրիշ բացարուրեամբ, ճշմարտութի՛ եւ աշխատութի՛, երկու հիմնական եւ զիրար ամբողջացնող իրողուրինները կը մնան հօմարի խօսքին: Պիտի չկրնանք մեզի աւանդուած պատգամն ու հօմարտուրինը աւանդել ուրիշներուն, մինչեւ որ ան չինայ մեր սեպական փորձառուրեանը ներեւ, մինչեւ որ չկարենանք անոր տալ մեր անձնական վկայուրինը:

Քրիստոնեական հօմարտուրինը անձնական է զերազանցօրեն, եւ հօմարտուրինը անհատականուրեան միշոցաւ հօմարին նկարագիրն է խօսքին: Ճշմարտուրինը պէտք է բխի խօսքիչ աշխատ, նկարութի՛, ոչ քէ ըսրենին: Հռու է խնայ արքերուրինը խօսքներու, աւետարանական հօմարտուրինները կուզան մեզմէ խնախ անոնցմէ ուսանց վրային, զունաւորուած ու խարարուած անոնց մակերեսային նկարագրով, խառնուած ստեղ անոնց փոքրուրեամբ: Աւետարանը ընդհակառակն է բխի հօմարի խօսքիչն, դրումուած ու թեւաւորուած իր անձին օծումով ու լրջուրեամբը, որ իրենն է, իր բարոյական եւրեանը: Առաջինը խողովակ մըն է լոկ, երկրորդը՝ իրական պատգամաւերը Ասունծոյ:

Հանգուցեալ Դարեզին կարողիկոսը Աւետարանի հօմարի խօսքին էր, իր մասնութեար կը յօրդէին այն մեծ հօմարտուրիններով, որոնք մեր կրօնին են, մեր ժողովուրդին, մեր պատմուրեան եւ մեր լուսաւոր ու մուր հակատագրին: Անիկա մեծ հաւատաւոր մըն էր կրօնական եւ ազգային

հօմարտուրիններուն, ի վերջոյ կրակին միայն կը սացուի կրակ, եւ Հանգուցեալ Վեհը ապակիի բափանցկոսուրին սացած հօմարին հաղորդիչ մըն էր հօմարտուրինը մարդոց արժանավայել կերպով բաժինելու:

Թէ ի՞նչ է արքերուրինը որ կը բացառէ այս կարգի իրաւ խօսքինները նաև սարակ պիտակաւորներէն, զիւրին չէ ուս կել, խա՞նդ, խօսելու դիւրուրի՛ն, մաւ նիշականուրի՛ն, խարոզելու ըն՞ո՞ն, բոլոր բերեւս, վերջապէս այն ուրախուրինը, զոր կը զգայ մարդ հօմարտուրինը մարդոց տանձ լու իր կերպին մէջ: Այն ոյժը, որուն ընորհի մարդը կը կորսնցնէ ինեզինքը եւ կը զանայ համակրուրին մը, անհուն յօժարուրին մը, դէպի հօմարտուրին եւ դէպի եղբայր մարդ հաւասարապէս բացուած:

Իր խօսքներու եւ խօսին զիսաւոր գետիններն էին, Աւետարանը եւ մեր անցեալը, իրենց մէծ ու սիւրագործ երեսներով, որոնց կուրզային խառնութիլ եւ զանոնք համատարած եւ մեծ չափերու բարձրացնել, իմաստապիտական, հոգեբանական, ընդհանուր պատմուրեան եւ բարոյականի արքի զիտիններին առնուած զաղափարներն ու օրինակները, որոնք ժուժկալ բայց օգեղ բափով մը կ'արտաքերուեին ոչ քէ պերենափայլ արտայալուրեան մը ի հասիւ, այլ իբրեւ լուսաբանուրիններ եւ պատապանուրիններ հօմարտուրիններուն՝ որոնք մերն են եղած անցեալի մէջ եւ պարտին մնալ մեր ներկայի ու պազգային ի խնդիր, իբրեւ զերազի ապակիններ եւ կարելիուրիններ մեր գյուրեան եւ մեր յառաջացման:

Սակայն իր խօսին շենքը՝ խարսխուած միօտ Աւետարանին վրայ՝ կը վերջանար ու կը կամարուէր յանախ մեր անցեալ մեծագործուրեան մը օրինակովն ու մածումովի՛: Վեհին համար Քրիստոնեուրինն ու Հայուրինը զիրար ամբողջացնող եւ երջանիկ միուրեան մը եկած իրողուրիններ էին: Ուսուցողական եւ զատագովական էր իր խօսքը զերազանցօրեն, հման Քրիստոնեական եկեղեցւոյ մէծ ու արքազան հայրեռուն, որոնց զիսաւոր նպատակն էր սպաւութիվ աւելի լուսաբանել, եւ հօմարտուրեան ազգի շերմուրեամբ եւ ոգիսկ լիցնել իրենց ունկընդիրները: իր «Դեկոյ լոյս եւ կեսեմ» հասուրը, որուն մէջ խնի մը սարիներ առաջ Հանգուցեալ Վեհը ի մի ամփոփեց իր կրօ-

նական մածումներն ու պղպային ապրումները, ազնուական խռովել կը լիցնեն ընթեցազր: Սակայն անոնք հակառակ իրենց արտառու զաղափառներուն եւ արտայայտութեան ձեւին, չեն կրեար փոխարինել այն լինդամի արտայայտութեար զոր ուներ Վեհափառ բնեմին վրայ, բարձրաբռիչ եւ անհատարելի: Հոս, այս զիտնին վրայ, իր խօսքը կ'ամրանար այն անանուն զգացումն, որ մեր պատմութեան, մեր անցեալին, մեր ստղդագործութեան բափին եւ տառապահեմին է եղած:

Հանգուցեալ Վեհին խօսքը պէտք էր լսել բնին: Գերճախօսութիւնը իր կեցուածքին ու ժպիտին, պերճախօսութիւնն իր ձեւերուն եւ շարժումներուն, պերճախօսութիւնը իր ձայնի ենթեշներուն, որոնք ասինանաբար բարձրանալով եւ իմաստառուելով, երեմն իրեւ սաս՝ բայց իր բացը ժպիտով խոցրացած, յանախ իրեւ պաղասան՝ իր նոգին դառնութիւններովն արցունեա, սակայն միօտ հայրական ու զօրովալիր: Այդ պահերուն անիկա հրատօիք իմն կը պայծառափայլէր, իր բովանդակ անձը զավանակէ մը մոլուած՝ կ'ելեքտրականանար կարծես. մեր զորքան երգերու գեղեցիկ բացառութեան համաձայն, մազերը կը բոցավառէին, եւ աշլքները կրակէ կարիքներու վերածուած, ամբողջովին ոյժ եւ զօրութիւն կ'արտայաշէին, մինչ հզօր մազնիսի մը մեզ բռնուած ժողովուրդը, կ'ըթիհատէր ամեն մրմունչ ու մնառութիւն:

Լայն էին իր շարժումները, եւ ազաս ու անկառա իր խօսքը: Անիկա իմաստութիւն եւ նորութիւն ծախսել փորձող խորզներու նման, իր նիւթերը չեր որոներ Ս. Դրէի անծանօք անկիւններուն մէջ: Սովորութիւն չուներ փղոսկրեայ մանրանկարներով եւ նրապուրիչ ու հմայական խօսերու նարառութիւններով նիւթելու իր բարզները, ուժեն աւելի որամուրիւն եւ հօմարութենեն աւելի ինքնասպուրիւն զգացնելու համար: Իր նախասիրութիւնները կ'երային պարզագոյն բայց մեծ բնաբաններու, որոնք խուռա գետերու նման կը նոսին միօտ ամեն ժամանակի կեաներու մէջն: Ասունոյ գերիշանութիւնը, Քրիստոսի Փրկազգործիւնը, պարտականութեան առանձնաւուրհամը, Ս. Հոգուոյն յոյսը, եւ նման մեծ իրողութիւններ, որոնք յարաբերութեան մէջ

կը դնեն զնեզ ամբողջ Քրիստոնեական պատմութեան ներ, զիաւուր նիւթերը կը կազմէին իր սրբազն պերճախօսութեանը: Խոյ ազգային արմեններու աւրփողման տեսակեսով, մեր անցեալ ստղդագործութեանց զեղեցիկ արդիւնները մօսասեւեն իրականութիւնը կը կազմէին իր հոգիին:

Խոնոյ չեր իր խօսքը, ուր եւ բազմակերպ մածողութիւններով, անիկա պարզ եր՝ իր նօխութեանը մէջ, եւ ուժգին՝ իր արտայայտութեանը բափով: Կը նախընտեր իրեւու գրաւիչ տեսարան մը եւ անհրաժեշտ զաղափար մը ներկայացնել, բայ անոնց ուրշը ու վրան բազմապիսի նկատողութիւններ եւ մածումներ դիզել: Ու ինչպէս արուեստի բոլոր արտադրութեանց պարագային, այնպէս ալ սրբազն խօսին նպատակն է իրաղութիւնները մարդոց նոգիին առջեւ բոնիլ այնպիսի ձեւով մը, որ ամեն բան մէկ անզամն կարելի ըլլայ տեսնել: Հարասուրին, պարզութիւն եւ միուրին, որոնք խօսքը կ'ընեն ուժգին ու սպաւորիչ զիաւուր յակարիւններն ենին Վեհի պերճախօսութեան: Հանգուցեալին խօսքը, իրեւ յօրինում եւ արտայայտութիւն, հազիւ թէ կը մօսնար գասականուն ըմբռնուած մերտոններուն: Անիկա յանախ փրրումն էր առաջին զաղափարին, հարացած միօտ մեր անցեալի իրաղութիւններով: Յօրինումի ամբողջական միուրիւննեն աւելի, ոգիի միուրիւնն էր զինք վարողը, ինչ որ մենաւորհնեալ մերոն է եղած բոլոր մեծ միտերուն:

Անիկա օտա յանախ չեր իսկ մահոցուեր յօրինումի օրենքներով: Ներենչումը, այսինքն Ասունոյ նոգին ուր ընչ ուր եւ կամք այն նոգին որ մեր ներէին օրենքն է, այնքան ներուծ էր իր մէջ, որ ուումքի մը նման կրուար պայրիլ, առանց մնիելու տամաբանական ու կարգաւորեալ օրենքն մէջ: Սիրոյ կարգ, պիտի յորջորջէին այս կերպը, բարզ արուեստագէնները, որ նոգինները ցընցելու զաղսնին ունի, առանց այդ զաղսնիքը սորվեցնել փորձելու:

Միւս կողմէն իր խօսքը ուժական ինչ մը ուներ, ոգեղեն շարժում մը, որ զաղափարները զելու եւ դասաւորելու փոխարէն, զանոնք բոլոր նպատակի մը կ'ուղղէ, բանոնք բոլոր նպատակի մը կազմէի մած, յաղքական յարձակումին ի խնդիր: Ցիրուի խօսք մը այն ատեն միայն գեղեցիկ է եւ կենզանի,

## ԳՐԱԳԵՏԸ

## ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԷՋ

Կեանքի մէջ երբեմն անփոխարինելի կորուստներ կան, որոնց առջև զմեղ կը գտնենք անմիտթար ու խոռվուն: Անոնցմէ մին անտարակոյս, Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսին վախճանումն է: Անոր հետախաղ մահուամբ գոյացած պարապը չի մասնաւորուիր կեանքի որոշ մարզի մը վրայ: Մեր վերջին շրջանի պատմութեան մէջ քիչ եկեղեցականներ կան որոնց գործունութեան ծիրը այնքան լայն ըլլայ ազգային, եկեղեցական, իմացական, և առաջարարկ մշակութային մարզերուն մէջ, որքան լուսահողի Վեհափառին:

Մատենագրական կալուածին մէջ զինք արժեկորելու փորձ մը գտուար պիտի չըլլար մեզի, հակառակ իր գործին վերին աստիճանի մասնազիտական հանգամանք մը ներկայացնելլ: Ու ազգային բազմաթիւ մեր կարիքներուն քովի ի վեր — որոնց

երբ կը զսպանակուի ոգեկան շարժումն մը եւ կ'իրազործէ շարժում մը: Այս պարագային խնդրոյ առարկայ եղած յօրինուածքը՝ յօրինուածք մըն է ուժերու եւ ժեստերու, բառին բոլոր առումներով, յօրինուածք մը զբացական, բանական, ձայնական շարժումներու:

Հանգուցեալ Վեհիր թէ իբրեւ մածում եւ զգացում եւ թէ իբրեւ արտայայտուրին, ոգի ու շարժում եւ ամբողջապէս, ու իր կենդանի ու եռուն եռը ենենք բխող խօսքը, ազգին ու եկեղեցին սիրով բարախուն, կը գտներ միօտ իր խորունկ արձագանքը ունենալիքին ենոդին մէջ: Իրենվ կ'անենանի մեր սրբազն բեմին ու կանոնական բանահիւսութեան բանահիւսութեան մէջ կ'անենանի մեր հանգիւսութեան էն խորունկ լարերը թթվացնել: Նման նրամեանի, Արուանձտեանցի, որոնք գիտցան ժողովուրդի հոգիէն խօսիլ, ժողովուրդին առնուած քանքարը աւելցնելով ժողովուրդին հատուցաննել:

Ապասը լնելու կանչուած էր ան — եկեղեցական, քաղաքական, ուսուցանողական, բարոյական, գրական և լուսամանակը, տրամադրութիւնը կերտելու փառայել իր գործը:

Պատանի օրերէն, անիկա եղած է տղան որ՝ իր հոգին կը բանայ գեղեցկութիւններու և աչքերը սեեռաբիր բարձունքներու, կը տենջայ համազրական աշխատանքի մը մէջ ամփոփելու «ՀԱՅ ՄՇԱԿՈՒՑՅ» յդացքին տակ ինկող մէն մի արժէք որ աղջային նկարագիր ունի:

Արևմտահայոց մէջ, ի մասնաւորի Պալմու, երբ Զարթօնքի սերունդը կ'ապրի առաւելաբար ընութենապաշտ ու օմանթիզմը, անդին Արևելահայ Զարթօնքի սերունդը ժողովուրդին օգտակար ըլլալու, ժողովուրդին կարիքները հոգալու տազնապանքը կ'ապրի: Այսպէս պէտք է բացատրել Արևելահայ սերունդին օգտագաշտ ձգտումը Այսպէս գարձեալ հասկնալի կ'ըլլայ այն աշխատանքը զոր տարած է Վեհափառ իրը Սարկաւագ երբ ամառները ժուղթն ու մատիտը ձեռքին ժողովրդական հէքեաթներ և ասութիւններ հաւաքքելու կը զրադի գիւղերը: Նման այն անմահ զարդապետին որ ժողովրդական պղտիկ երգերէն գիտցան մեր հոգիներուն էն խորունկ լարերը թթվացնել: Նման նրամեանի, Արուանձտեանցի, որոնք գիտցան ժողովուրդի հոգիէն խօսիլ, ժողովուրդին առնուած քանքարը աւելցնելով ժողովուրդին հատուցաննել:

Հանգուցեալ Վեհափառին առաջին աշխատութիւնը ժողովրդական բանահիւսութեանէն առնուած պատառիկներ եղած են, ու յաջորդաբար հրատարակութեան տուած է Սամայ Ծռեր, Խոստմ Զալ, Զագավանից ժողովը:

Երբեմն ժողովուրդներու հպարտութիւնը եղած և անոնց խորունկ համակրանքը վայելող մարդոց կեանքին մէջ կան դէպքեր որոնք՝ անոնց կեանքին անկիւնադարձերը կը կազմեն: Այդ դէպքերէն մին վեհափառին Գերմանիա լրկուիլն է իբրև ուսանող: 19րդ գարու առաջին կէսէն՝ Գերմանիոյ մէջ սկիզբ կ'առնէ Արևելեան ժողովուրդներու և անոնց պատմութեան հանդէպ մասնաւոր հետաքրքրութիւն, պատմական, հնագիտական ու բանասիրական մարզերուն մէջ: Վեհափառը — տակաւին

իր առաջին երիտասարդութեան, իր նաւասիրած ճիւղերուն մէջ մտքի մասնաւոր կազմութեամբ մը և գիտական մեթոսներով կը վերագառնայ իր ժողովուրդին ծացը, չարունակելով իր հաւաքչական գործը, մերթ ընդ մերթ լոյսին բերելով Հայ Մատենագրութենէն դէմքեր որոնք մինչև իր ժամանակը չէին ծանօթացուած հանրութեան կամ մասամբ ստուերի մէջ էին մնացած: Գերմանիայէն վերագառնալէն ետք պարբերաբար կ'աշխատակցի և ժամանակ մըն ալ խմբագիրը կ'ըլլայ իշմիածնայ օձաբատոց հայագիտական հանդէսին: Մակայն մեր հայրենիքի հորիզոնին վերև կուտակուած ու ամպեր տրուում բաներէ կը պատմին: Ժողովուրդի մէկ մասին մէջ Համբաւեան ջարուրը, միւս մասին մէջ Զարական բանութիւնները և իշմիածնայ բռնազրաւումը խորունկ անդրագարձներ կ'ունենան ամէն մէկ Հայու հոգիին մէջ: Քաղաքական տագնապները և անոնց յառաջացուցած լքութիւնը պատճառ մը չեն ըլլար սակայն, որպէսզի անիկա խաղաղ գոտիներ փնտոէ իր աշխատանքին համար, այլ երեան կը բերեն իր մէջ թաքուն ուժեր և իր նկարագրին միւս հաւասարապէս զօրաւոր կողմէն ալ:

Վեհափառի գիտակցութեան գալու առաջին մէկ օրէն մինչև իր խոր ալեռոյթը իր գործին մեկնակէտը եղող մեծապոյն առաջադրութիւնը եղած է երեան բերել մեր պապերուն իրագործած մեծութիւնները. Պանոնք դասաւորելով, մարմին մը տալ անոնց և ըսել. — «Ահաւասիկ ՀՈՅ ՄՇԵԿԻՑԹԸ»: Այսպիսի առաջագրութիւն մը ունենալ և զայն իրագործել տարօրէն դժուար է եթէ ոչ անկարելի; Տրուած ըլլալով որ մեր նախնիքներու իրագործութիւններէն փշուրներ մնացած են միայն: Մեր պապերու կեանքն ի վեր եղած է երբեիցէ, գոնէ հարիւր տարիներու խաղաղ շըջան մը, որ մեր երկրին վրայէն չարչաւէին վայրենիներ, աւերելով ամէն մէկ յիշատակարան, կոթող, վկայարան: Բայց ան վեհափառութէն քալեր է ատարօրէն դժուար իր առաջադրութեանց ետեէն, ամէն օր քիչ մը աւելցնելով, գեղեցկացնելով իրագործուող և մարմին առնող իր երազը. ու ճշմարիտ մեծութիւնն ալ ատոր մէջ չէ<sup>o</sup> արգէն: Աշխատեցաւ անիկա քաջ գիտնալով թէ որ-

քան որ պայծառացնէր մեր նախնիքներուն անցեալը, նոյն համեմատութեամբ պիտի փոքրացնէր մեր ներկայ կեանքի նուեմութիւնը:

Մեր ներկան հանդերձել տեսակ մը ուղելինութեամբ, որպէսզի մեր ներկայի քառսին մէջ սնանինք մեր անցեալով: Տեսակ մը նոր եսայի<sup>o</sup>: ապահովաբար:

Հաւաքչական առաջին աշխատանքներուն յաջորդած են մատենագրական ուսումնասիրութիւններ. — Միփրար Սասնեցի, Խորովիլ Թարգմանիչ, Թովման Մհծովեցու Կեանիք, Միփրար Սյրիվանեցի որոնց քովիլ ի վեր ու մէջ ընդ մէջ պատմահանագիտական աշխատանքներ. — Խալբակեանք կամ Պուռեհանք, Հաւուց Թառի Ամենափրկիչը, Մի էջ Հայ Արուեստի եւ Մշակորիի Պատմութիւնից, Վախրանի Արդի Աւմեկալ Հաղբարի պարոցի մի վլուխ զործոց, Կառանդին Ա. Կարողիլոս, և լու.:

Ամենէն յատկանշականը այս պատմահագիտական աշխատանքներուն մէջ անտարակոյս մեր նախարարական առւները լոյսին բերելու խղճամիտ և մանրամասն վերլուծութիւննէ, ինչպէս է օրինակի մը համար «Խալբակեանք կամ Պուռեհանք» ուսումնասիրութիւնը: Շատ յաճախ, վեհափառը կըցած է մասերէն, վշուրներէն ամբողջին երթալ, ու ամբողջ մը կառուցանել: Բլրան մը կազին վրայ, փոքրիկ եկեղեցիի մը անտեսուած մէկ պատին վրայի արձանագրութիւնը, խաչքարի մը ներքեւ երկաթազրերը պատմութիւններ ունին պատմելիք . . . կարդալ գիտցողին:

Վեհափառը ստորագրած է նաև տպաւորապաշտ էջեր. — Արագածի կատարին ի խնդիր Լուսաւորչի կանքեղին: Կեանիքի ամենենի դժբախտ օրը եւ երշանկութեանս բայցեն:

Կրօնական և բարոյական էջեր. — Արոնք ամփոփուած են Գիպի Կեանիք և Լոյս հատորին մէջ:

Բնդարձակ ուսումնասիրութիւններ Գրչագրութեան և Մանրանկարչութեան շուրջ:

Ինչպէս կը տեսնուի այս թուագրութէն, ընդարձակ և երբեմն ալ չխուզարկուած գետիններու վրայ է որ աշխատած է վեհափառ Հայրապետը: Այս թուագրութիւն վրայ պէտք է աւելցնել նաև իր անտիպարագրերը որոնք արժանահաւատ աղբիւլներու

համաձայն մեր մտաենազբութեան, արուեստի ու առասարակ մշակոյթի պատմութեան վրայ մեծ յաւելումներ կը բերեն:

Իր բոլոր գործերուն մէջ ալ կարելի է ըսել, վեհափառին զրելու կերպը խօսապէս հմուտ, խղճամբտ և կոկիկ ոճ մը կը յայտնաբերէ:

Վեհափառին զրական վաստակը զուշընթաց է իր մատենազբական, բանասիրական, պատմական, հնագիտական և մանրանկարչական գործին: Իր բոլոր գործերուն ալ մէջ անիկա չի ներկայանար մեզի իրքն չոր գիտնական մը, որուն ըսելիք ները կուդան միայն թուականներէ, փաստերէ, վայրերէ: այլ պատմա-հնագիտական գործերուն մէջ մասնաւորաբար և իր գործին ամբողջութեան մէջէն ընդհանրապէս մեր պապերուն կեանքն է որ իր զանազան կողմերով վերբերել կ'աշխատի:

Գարեգին կաթողիկոսին բոլոր գործերուն մէջ, անայլայլ կերպով կարելի է հանգիպիլ զգայուն ու խանդավառ գրագէտ բանասէրին, որ զիտէ հմտութեան ու անցեալի բազմազան գտիններէն բարձրանալ զգացումին՝ և զայն խանգավառ պահող իրականութիւններու: Եկարագրի գիծ մընէ այս, որ զիտէ լուսաւորել փաստերու, թիւերու և վկայութեանց հանգոյցները, և զանոնք ընել աւելին՝ քան ինչ որ անոնք կրնան արժել ըստ ինքեան:

Կախարդիչ ու խանդավառ մարդը, որ աւելի ոգեկան արժեքներուն կը հաւատայ, ժողովրդի մը կեանքին մէջ, քան պատմական բազմախիլ մանրամասնութիւններու կազուած փիրուն գործերուն: Հայ անցեալին ու մշակոյթին նուիրուած այս մեծ եկեղեցականը Հայ մտքի «բազում» կոչեցեալներէն, սակայն «սակաւ» ընտրեալներէն մին էր, Առաջակի ու Մեսրոպի շուքն ու շունչը կենդանի դարձնելու չափ մեզի: Գրգէտը եթէ իր մէջ չարտայայտուեցաւ սովորական ու ծանօթ տարագներով, սակայն ապրեցաւ իր գործին մէջ և թեւուրեց իր խանգավառ հոգին: Ոգեղէն իրութիւններու մարդը մնաց միշտ և նուիրեալի այս սիրով միայն կրնայ բացատրուիլ իր վաթսունէ աւելի տարիներու տենդազին ու բոցավառ աշխատանքը, որ անխոնջ ճիզի մը հռնձքը ըլլալէ վերջ, զրական չունչով չաղախուած գեղեցկութիւն մըն է

## ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԸ

Վերի տարազը, իր վեհ անձովը պարմանաւոր, մեզի եկած բոլոր տարագներին ամենէն աւելին կը խտացնէ անտարակոյն հանգուցեալի արժէքներէն:

Կըսեն թէ Հայրենի աշխարհամարը ուր ծնաւ ու սնաւ, իր բնագրական, քաղաքական, ընկերային կազմաւորութեամբ եղած ըլլայ ներշնչարանը, կերտելու իր մէջ բացառիկ տարողութեամբ Հայրենասէրը: Թերեւս: Եւ սակայն անհրաժեշտ՝ արտաքին պայմաններու զիմաց՝ զսպմահաւորութիւնն է ներքին, հոգեկան վիճակներուն, որը կը կենսաւորէ նախ ինք իր մէջ գուպարը մհծ ապրումներուն և ապա անոր դրկարար վարակումին ենթարկել կուտայ որքան կարելի է լայն տարած քով իր ըրջապատը: Արուեստագէտը առանց ներքին այդ զսպմահակաւորման չի կրնար ստեղծագործել, ինչքան ալ ըլլան ձեռնոտու մընապատող արտաքին աղդակները:

Գարեգին վեհի մէջ Հայրենասիրութիւնը սովորական հասկացողութիւններէ վեր իսկութիւն մըն է, տեսակ մը արուեստագիտական իրագործում, կապուած արտաքին պայմաններէ անդին՝ ներքին հոգեկան արժանիքներու: Ահա թէ ինչու Հայրենասիրութիւնը իր մէջ իրաւն է, բացառիկը ու աչքառուն կարգին իր շատ մը գեղեցիկ ուրիշ յատկութիւններուն:

Ան արուեստագէտն է մեծ հայրենասիրութեան:

Գարեգին կաթողիկոսի մէջ հայրենասիրութիւնը չեղաւ լոկ ներքին ապրումներու յորգում մը, այլ արուեստագէտի մը վայելչութեամբ վերածուեցաւ շարժումի:

ամբողջապէս: Կայծերով սկսած ու ջահարձած կեանք մը որ կը շիջի ահա, իր մհծարժէք գործին վրայ, եղերական անկումով:

Կեանք մը ամբողջ, իր արշալոյսէն մինչև շիջումը Հայ մշակոյթով խանդազառուիլ, անով լեցուիլ՝ ինքն իր մէջ մեծութիւն մըն է արդէն:

ԶԱՀԻԿՆ ԱԲԴ. ԶԻՆՉԻՆԵԱՆ

դրձի, արդիւնաբար ստեղծագործութեան որուն միակ նշանաբանը եղաւ իր ժողովրդին մեծ բարին:

Այս յայտարարին միայն կարելի է վերածի իր գիտական, բանասիրական, պատմական, գրական ստեղծագործութիւններուն հակայ գումարը, ուր գարերու փոշիին անթեղուած ամբողջ անցեալ մը իր իշխանական տուններով, իր վանքերով, վանականներով, մեծ ուսուցիչներով, զարատուններով ու գրչագրական մեծ արուեստով ողի և շունչ կ'առնէ, ըլլալու համար ապրող ու ներշնչող ամբողջութիւն մը: Խնչպէս բացատրել անչափելի իր փարումը, նուիրումը այս բոլորին մինչև բոպէն իսկ հոգեւարքի իր վայրկեաններուն, եթէ ոչ պաշտամունքի անչափելի խանդ մը արժէքներուն որ իր ժողովուրդինը եղաւ, եթէ ոչ՝ ճիգը, գտնելու ինչ որ բարին ու գեղեցիկն է իր ժողովուրդին, որպէսզի սիրէ այդ ժողովուրդը իրաւամբ, սիրէ՝ փերերելով զայն իր մեծ արժէքներուն ընդմէջէն: Ու աւելին՝ սիրցուց այդ ժողովուրդը զայն կոթողելով իր արժէքներուն մէջ ու հրիտակելով յաւիտեաններուն իրքն հպարտանքի առարկան իր ժողովուրդի ներկայ ու գալիք բոլոր զաւակներուն: Անա իսկական ու մեծ Հայրենասիրութիւնը որ ի յայտ կուզայ իր մէջ, ոչ միայն իրքն ազգում, զգացում, այլ նաև իրքն ոյժ ու մղում տաղանդաւոր ստեղծագործութեան մը Գիւըր Հայ մօակոյրի մեկ երեսին:

Գարեգին Կաթողիկոս իրրե մեծ հայրենասէր զգաց ու չնչեց սերտօրէն իր ժողովուրդի անցեալէն ասդին նաև ներկան, անոր թէ տագնապի և թէ խաղաղութեան օրերուն: Գիղեցիկ զրուագութեր պիտի մնան իր կեանքէն, ըրջանը Սարտարապատի ու Կարսի կոիւներուն՝ ուր հայը կեանքի և մահուան կոփւը կը մզէր իր թշնամիներէն ամինէն անագորոյնին զիմաց: Ու հոն է մեծ երէցը իր ժողովուրդին ու անոր արժէքներու զէն ի ձեռին պաշտամութեան ի խնդիր, կռուելու, քարոզելու, ներշնչելու, մինչև վերջին այն բոպէն ուր կը խլրտի դաւը կռուող հոգիներէն ներս, լքելու ճակատն ու բազմահազար ժողովուրդը, որոնք կը մնան ապաւինած քաջարի ու անահանչ երէցի փէշերուն որ զերազոյն նուիրումը, մը խոյանքով գնդակներու տե-

ղատարափին տակ, կ'իջնէ բերդէն, ապահովելու գութը յաղթողին ու հազարաւոր անմեղներու կեանքն ու պատիւը:

Այս է ահաւասիկ գնացքը նուիրումին անոր կեանքի բոլոր էջերուն մէջ, ուր անջեղուն հայրենասիրութեամբ երբեմն խնամատարն է Հայ Արքին ու արկածեալ-թըշտառին, երբեմն մեծանուն առաջնորդը մտքի և ուսուցումի տան մը և կամ թեմի մը՝ ուր իր հոգին կը գառնայ հուր կիզիչ, սրբելու հոգիները խանդովը եկեղեցին ու ազգին: Այդ հրաշքը իր գեղեցիկ ազգեցութիւնը ունեցաւ նոյնպէս Հիւսիսային Ամերիկայի մէջ ուր իր տաղանդը գիտցաւ առաջ բերել, կազմակերպել ազգային ու եկեղեցական տեսականացման բոլոր կարելի օժանդակներն ու արդիւնքները:

Իօկ Անթիլիասի կաթողիկոսութեան իր ըրջանը եղաւ մշակութային, տնտեսական, կրօնական կազմակերպումի ըրջան մը, անանախլոնքաց այդ Աթոռի պատմութեան մէջ:

Հայրենասիրութիւնը մեր օրերուն շատերուն համար դարձած է պիտակ մը, իր խորութենէն պարզուած ձրի տարագ մը, զուրկ հոգեկան բարձրագոյն մղութերէ, իրք սակարանը նիւթապաշտիկ ըմբանումներու և անսնցմով առաջնորդուած ամբոխային հիւանդկախ տրամադրութիւններու, որոնք այսօր, աւելի քան երբեք, Հայ սփիւռքը վերածել կը փորձեն Քառսի մը, վաճառքի հանելով՝ մեր ցեղային միութեան և հոգեկան բարձրագոյն իրազորածութեներու կռուան եղաղ սրբութիւններ, եկեղեցի, Մշակոյթ և Հայրենիք:

Գարեգին կաթողիկոս այս տրաում տուեալներու ընդմէջէն յայտնուող Հայրենասիրութեան լուսաւոր ըմբանումը եղաւ, որուն խորագոյն թափանցումը պիտի ըլլայ բարիք մեր հոգմակոծեալ օրերուն: Դըժախտաբար խեռ հոգիներ չուզեցին հասկընալ զինք իր զգացութերու պայծառութեանն ու ամբութեանը մէջ:

Դիխաւորաբար Հայրենիքի և սփիւռքի Հայութեան փոխ յարաբերութեան հարցը, որ իր ետին ունեցաւ թեր ու զէմ խմբաւորութերը մեր ժողովուրդին, եղաւ ցաւոտ կնձիր մը որ գառնացաց վերջին օրերը Հայրապետին, անոր համար որ ան զիտցաւ ճշգել իր կցուածքը որ անվարան իրը մեծ հայրենասէրի պիտի ըլլար այն ինչ որ

չահն է Ազգին ու Եկեղեցին: — Թրքահայ եղենը զրկեց մեզ մեր ազգային զոյնութեան կռուանը եղող Հայրենի հազի մը, ու կեդրոնի մը շուրջ գօրաւոր ազգային մրութեան մը բախտաւորութենէն: Այս պաշտամներու տակ ցրուած մեր ժողովուրդին համար ապրումի ու ներշնչումի ինչ խոր տուեալներ են Հայրենիքին ու անոր ծոցին Հայաստանեայց Հայրապետութեան մը իրողութիւնները: Աչինչ է մեացեր մեր անցեալի փառքերէն, ու եթէ պիտի կտրուինք այս վերջին միսիթարութիւններէն, այլև չենք գիտեր թէ ինչ արժէքներով պիտի փախարիննենք զանոնք: տաքցնելու համար հոգին մեր ժողովուրդին: Եթէ կան իսկ տրտմութիւններ Հայրենիքի ու Հայրապետութեան իրականութիւններուն զուգնթաց, կ'անցնին անոնք, բայց կը մնայ Եկեղեցին, Հայրենիքը, ժողովուրդը իր մեծ ողեկանով ու ստեղծագործութիւններով:

Հայրապետութիւնը ու Հայրենի աշխարհին ժողովուրդը ինչ պայմաններու տակ աւ ըլլան, արտասահմանի Հայութիւնը պարտի ըլլալ անվերապահօրէն հետը իր եղբայրներու հոծ զանգուածին, ու հոգեծին մօր՝ Հայաստանեայց Հայրապետութեան, կանզնի անոնց քաջալեր, զօրավիզ և բաժնէ ցան անոնց եթէ ունին, ինչպէս հաւատարիմ զաւակը՝ որ պիտի չի լքեր մայրը իր ցաւի-անկարողութեան օրերուն: Խոկ եթէ հակառակին հաւաստիքովը կրնանք յուսալ և երաշխաւորուիլ, այն ատեն ոչ միայն զուր ջանք ու վաստակ կը դառնան հանգեց Հայրենիքին, որոշ մարդոց կեցուածքը ու տրամադրութիւնը, բաժնելու Հայութեան երկու մեծ զանգուածները, Հայրենիքն ու արտասահմանը, այլև մեր աւելորդ վլվլուկներով մեզ կասկածելի դարձնել պիտի տան կլւրընկալ կառավարութիւններու աչքին: Որքա՞ն պատշաճ պիտի ըլլար մեր օրերուն՝ արտասահմանի Հայութեան անազմուկ աշխատանքը ներքին ազգային, եկեղեցական, մշակութային կազմակերպման ի խնդիր, առանց կտրուելու մեր հոգեկանութեան ներշնչարանը եղող Հայրենիքի և Հայց: Հայրապետութեան իրողութիւններէն: Ապահովաբար այս պիտի ըլլար նախընտրելի՝ բոլոր մեր հատուած ական, աւերիչ պայքարներէն, որոնք տկարացուցած են սփիւռքը, իր Ազգային-Եկեղեցաւ-

կան-մշակութային զետիններու վրայ, ու աւելին՝ առիթ տուած որպէսզի հայանուն օտարագաւաններ նետեն իրենց մարդու ուութեան ուսկանները աւելի լայն տարածքներու վրայ:

Գարեգին Կաթողիկոս չունեցաւ ոչ մի քաղաքական, հատուածաւորում, ու որպէս ճշմարիտ ազգային ու հայր, բարձաց իրագործել ամէն քաղաքական տեսարանութիւններէ անկախ՝ հոգեկան-ազգային կրօնական միասնականութիւնը իր զաւակներուն, Հայրենիքը ներս թէ զուրս: Սրբազնութիւնները պիտի մնան 1945-ին կաթողիկոսական ընտրութեան, յանուն միասնականութեան, իր ամենէն յառաջած տարիքին իսկ իր երկարակն ճամբորդութիւնը գէպի Հայրենիքը ու անկէ յետոյ, մինչև իր հոգեաբքի օրերուն, յանուն արդ միասնականութեան իր անկաշառ ու արդ կեցուածքը:

Իր մահով կը զերեզ մանուի մեր ժողովուրդի ու Եկեղեցւոյ մեծ ազոյն զաւակներէն մին՝ ծգելով Ազգն ու Եկեղեցին տագնապի մը առջև: Ազօթենք որ Աստուած երանաշնորհ Հայրապետին արի ու անվկանդ, հոգեսէր ու Հայրենանուէր հոգիսվ լեցնէ բոլոր զաւակները Հայց: Եկեղեցին, ու մինք անգամ մը ևս տեսնենք անքան փափաքելի ու սիրելի Հայաստանեայց եկեղեցւոյն ու ժողովուրդին միասնականութիւնը, վերականգնուած ու յաղթական, ընդուէմ բոլոր չարաշահութեանց:

Կիրիլեղ Սբեղաթ

Քրիստոնէութեան համար աշխատանքը նուիրական զաղափար է և ծուռութիւնը մահացու մեղքերից մէկը: Քրիստոնէայ մարդու կեանքի սկզբունքներից մէկը պէտք է լինի աշխատանքի զաղափարը:

Դորձն է կեանքի և շարժման նշանը:

\* \* \*

Զի կարելի հին ազգերի կեանքի վերջալուսին և նոր ազգերի ծագման և զարգացման ամբողջ շրջանում հոգեսր բարոյական-քաղաքակրթական որևէ վերջ քրիստոնի հոգու ներգործութիւնը, եւրոպական ներկայ նշանաւոր ազգերի քաղաքակըրթութեան, զրի և զրականութեան ծագումը կապուած է Քրիստոնէութեան հետ:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

# ՄոԽՉՈՅՈՂ ԿԱՂՆԻՆ

Փիւին ներեւել Մայր Տաճարին  
Սնքիլիասի,  
Զայմն է նորէն մահասարսուռ  
Ճակատազրի մուր բռչութին:  
Ծովն այն գիշեր հազար խուրձով  
Նուշաններու,  
Հեծկլաղէն գալար, գալար,  
Աւազներու սիրտին վրայ  
Թեւ կը բանար:

Աւազանին մէջ խեղբուռող,  
Մանուկ մ'ինչպէս,  
Լուսնակն հեռուս լուռ կ'ընկղմի,  
Լոկ նառագայր մը բացխփիկ,  
Ամպի փէշին,  
Ճրագի ինչպէս լոււած նիւղի,  
Դեւ կը վառի:

Մահինին մէջ,  
Սնբաւութեան դէմ միայնակ,  
Վեհն է ինկած,  
Ա՛լ աւարտած  
Կեանի գնացքն իր երկրաւոր,  
Նայուածքն սեւեռ  
Երմէն անդին,  
Երկինքներուն ասեղափայլ:

Բայց պատկերէ իր աչքերուն,  
Ու իր հոգին կը սաւառնի  
Դէպի օրերն այն սիրալի,

Որոնք երթեմն կը բուէին  
Իրեն անվերջ:

Ահա սարեւն իր հայրենի,  
Պատերն զմրուխս,  
Եւ այգիներն առալոյսի  
Ցողով օծուն:  
Թուխսի նրասած բռչուն մ'ինչպէս,  
Գիւղն է ահա լեռան ոսքին,  
Հիւղն ընտանի,  
Ուր կը ողջար, մինչեւ երեկ  
Կենդանութեան խորհրդանին  
Բոցն օնախսին:

Ահա մայրն իր,  
Հեզ ու բարի,  
Պատկերն որուն,  
Մեծ օրհասին իր օրերուն,  
Մնաց միւս բարմ ու կենդանի:

Ու պատկերէ իր աչքերուն,  
Երկիրն անուս մեր հայրերուն,  
Որուն սրտին՝  
Կառոյցներ ձոյլ մեր վանքերուն:  
Վէտերն ի վար արեւառող  
Իր երազին,  
Պատկեր մ'ինչպէս խոր ու զեղուն  
Էջմիածինն:  
Ու ուրշն իրեն, մանեակն աղբւոր  
Ժամանակէն անխզելի,  
Հոխիսիմէն եւ նողակար

Եւ Գայանեն.

Նայուածքն որոնց կ'իյնայ խոժոռ  
Բեկորներուն Զուարքնոցի,  
Փշուած քազն մեր արուեստին:

Ահա Տիկոր, ահա Գեղարդ,  
Ահա Տարեւն ու Հաղարծին,  
Քիչ մը անդին,  
Թալատներու, Տանարներու  
Անհուն կղզին,  
Ճակատագրէն դեռ ներքուած  
Մըրուայլ Անին,  
Որուն իղձէն կ'արցունենուին  
Ահա նորէն  
Աչլըներն իր:

Ու կը բըսի,  
Թէ կ'երկարին մատներն իրեն  
Մատեաններուն մազաղարեայ,  
Գանձերուն սուրբ մեր անցեալին:  
Մահինին մէջ,  
Կ'երերայ ձեռքն իր դողդոջուն,  
Ա՞հ, ո՞վ զիտէ  
Որ մազաղարն է դողացող  
Իր մատներուն:

Իր հոգին քուխալ ու մոայլ,  
Ամպէ, կ'անցնի.  
Հեռուն, հեռուն, հորիզոնին  
Թեւն է փլրթեր կարաւանին.  
Ա՞խ, տեսարան սրակեղեք,  
Մանուկներուն եւ կիներուն,  
Կտոր կտոր հալածական,  
Գայլերու կեր հօօթ նման:  
Աչերն անոնց՝ բացուած անդունդ,  
Փորուած խղցի, փորուած մահուան  
Մատըներով:

Վերջալոյսի բոցերուն մէջ,  
Պատկեր մինչպէս հովի բերնին,

Սարտարապատ, Պարավիսէն:

Սպա հեռուն,  
Ժամանակի կամարին տակ  
Արիւագոյն,  
Սմբոցն ահա,  
Գրոհին տակ բրենամիին:  
Ու կը դողան ոսկորներն իր,  
Այնտան ուժգին սարսափն անոր,  
Պատկերին դէմ այդ չարառուք:

Ան հետք չէ մահինին մէջ  
Պառկող կմալսին այս մահաղէմ,  
Փակ են աչերն,  
Բայց ըրբներուն՝ դեռ կը դողայ  
Բառը վերջին,  
Իր օրերու առեղծուածին:

Ահա Մասիսն,  
Լեռն հայրենի,  
Երազներուն մեր անմատոյց,  
Դրած զլուխն ոսկի ըէմին  
Երկիններու:  
Ու դէմ առ դէմ ան կը կենայ  
Նահապետին այդ դարաւոր,  
Համակ կարօս, համակ երազ,  
Իր ըրբներուն՝  
Բառն անմատոյց, կախարդական,  
Բաղձաններուն մեր դարաւոր:

Ու դէմ առ դէմ ան կը կենայ  
Նոյի լերան,  
Դէմին զայրոյք,  
Աչլըներուն չիթեր կրակ,  
Որոնց մէջէն ան կը տեսնէ,  
Ինչ որ օրերն  
Զեն խոստանար մեզի տալու:

Լուսաղէմին,  
Լոյսը կապոյս

Կր, Կիյան դեմքին  
Յս Ասուածարեալ Հայրապետին,  
Դը Դրենով նոն փառքը մահուան,  
Փա փառքը կեանքին,  
Հու Հաւաքենով իր աչքերէն  
Յս Յան օրերուն անմարսելի:

Ես ժամանակի անխին տակ  
Ան Անդիմադիր, մահաբաւալ,  
Եմ նման ջահին որ ՚կրօպառէ  
Այ Վեցչին ցունցով բոցն իր ամբողջ,  
Խասաղաղօրէն կ'անշարժանան  
Նրբնրութեներն իր,  
Քիչքիւրուան մէջ աղօթասաց  
Են ննջող մանկան մը հանգունակ:



Խա Խաղաղութիւն իր հոգիին,  
Որ Արուն սըրտին, մըտին վրայ  
Միւ Մինչեւ երեկ կը ծանրանար  
Մեր Մեր օրերու խոստումն ոսկի:

Հանգիս անոր,  
Որ հովիտէն մեր այս մըրին,  
Եղաւ լոյսի ձոյլ աւտանակ,  
Խարոյկ անմեռ,  
Նըսեմանիս իմաստութեան,  
Որուն հոգին,  
Ոսկի կոչնակն մեր օրերուն,  
Հսպասին մէջ հայրենիքին  
Ու Ասուծոյ,  
Եղաւ արի ու աննահանջ,  
Քալելով իր պարտի ճամբէն,  
Որ կը տանի կաւը մարդուն  
Փառքին ըստոյ:

Բերնին անոր բառն էր կրակ,  
Նետուած ընդդէմ մեծ ու պատիկ

Հանրանիներուն ու դաւերուն:  
Հուրբն այդ խոնին,  
Պիտի փրեւէր  
Սկինն աղուոր իր հոգիին,  
Պոռքկումին մէջն իր ահաւոր:

Հանգիս խոնջած սկորներուն,  
Հայրապետին եռամեծար,  
Որ ցոյց տուա, տարիներ ձիզ,  
Դուռը մուրին ու աւերին,  
Օտարութեան համբաներուն,  
Նենգ մըսուչին, պիղծ հաւիսին  
Հսպասարկու,  
Զաւկըներուն իր սիրելի,  
Մնալով միւս հաւատարիմ,  
Մեծ տարագին,  
Թէ մեղմերէն սրբուած հոգին  
Ունի միայն բեւեր ներմակ,  
Սաւաննելու իր երազին:

Լուսադէմին՝  
Կը հնչէին զանգերն ուժգին  
Արցունիներու ծովին դիմաց  
Ժողովուրդին:  
Լուսադէմին՝  
Գերեզմանի երախն անհուն  
Կը յօրանչէր  
Հսպասումին մէջն անհամբէր.  
Ու ձայնն է խոր, համատարած,  
Միհերուն մէջ բեւ արձակող  
Թէ պիտ' բաղեն  
Մեծ Հայրապետն ասուածարեալ,  
Միջօրէին:

— Մեծեր չունին հողին մէջ տեղ,  
Կ'ըսէր ուրիշ ձայն մը հընչեղ:  
Ի զուր կ'երգուին մահուան երգեր,  
Ի զուր կազմած հըսկայ բափօր,

Կայիշերէ կայք կը փոխադրենի  
Ափ մը փոչի, բուռ մը ոսկոր - :

Ո՞վ է ըսեր թէ կը քաղուի,  
Ամբծութեան, զբհողութեան,  
Միւրոյ, յոյսի, լոյսն անըսուեր,  
Ո՞ր ամբարիչն կրնայ խորհիլ,  
Թէ մեր իղձերն ու երազներ,  
Կրնան օր մը հուսկ մոխրանալ:  
Թէ խորս մը մուր,  
Կրնայ լափել ու ընկլուզել  
Խորն իր ալֆին հոգին անոր,  
Որ տեսիլ էր ու գաղափար,  
Պատկն աննիւր հիւսուած այսպէս,  
Մեզմէ անդին կեանին համար:

Զանգերն ի զուր կը դողանչեն  
Հոգիներուն ցաւին դիմաց:  
Խոսումն անհուն  
Երկինքներուն,  
Մահն է զլեր լեռնէն ասդին,  
Մեր օրերու մոայլ ունին:

Ան որ մեզի ցոյց տալ ուզեց,  
Հոգեդաշերն մեր հայրերուն,  
Հողն ու երկինք,  
Ու ժողովուրդն Հայաստանեաց.  
Ան որ մեզի քողուց իբրեւ  
Կտակ անմեռ,  
Իր էութեան մասն ադամանդ,

Որ ունչն եղաւ մեր անցեալին,  
Որուն ձայնէն մեռելական,  
Շիրիմներէն մեզի եկան  
Հազար գրիչ, հազար իշխան,  
Որ քարերէն, փուշիներէն,  
Ժամանակէն ալ հերքուած,  
Կտոր կտոր, եւ լոյս առ լոյս,  
Հիւսեց պատկերն մեր հոգիին  
Մոււաքաղ,  
Ան չի կրնար մահուան ունչէն  
Անէանալ:

Պէտք ունէին դեռ իր հոգւոյն,  
Պարտի, զոհի ու զիսութեան  
Սուրբ ճամբայէն՝  
Մեզի ռահորդ,  
Յաւերժօրէն մեզ խրախոյս  
Մեր օրերու մուրերուն զէմ,  
Մահէն ալ վեր, մահէն ալ վեր:

Բայց լոութիւնն,  
Մահն է կ'անցնի,  
Զեռքերուն մէջ ափ մը մոխիր:  
Ալ մի՛ խօսիք,  
Տահարին մէջ քողուցէք զինք,  
Դագաղն իրեն նաւ է մահուան  
Որ կը տանի լոկ մարմինն իր:

ԵՂԻՎՈՐԴ



## «ՕՐՆ ԷՐ ՈՒՐԲԱԹ, ԼՈՒՄ Ի ՇԱԲԱԹ»

Աւրելաթ, 20 Յունիսի 1952, կէս գիշեր:

իրական կէս գիշեր:

Ո՞րքան տաեն է որ ոտքի եմ Վեհափառի մաւրճին քով...: Մահամերձ է Վեհափառը. իր մէկ բաղկերակը բժիշկին մեքն է: Հիւանդապահուհին կը սրբէ մահամերձ Վեհափառին ճակտի քրտինքը: Բաց են պատուհանները, ուրկէ կ'երեան ծանր հովին խոնարհող ու կանգնող ծառերու չուքերը...:

Բժիշկը կ'ըսէ. «Դեռ մէկ երկու ժամ ևս կրնայ առելք: Խօնչ... չէ՞ք լուր, վեհափառ, թէ ի՞նչ կ'ըսէ բժիշկը:»

Սենեակին մէջ գարձեալ կը տիրէ լուսւթիւնը: Կը լուսւի միայն Վեհափառի շնչառութիւնը, անկանոն ընդհատներով...:

Ոտքերս չեն յոզնիր, հակառակ օրուան ծանր յոզնութեան ու տառապանքին: Քարցած եմ ու չեմ զգար... ոչինչ կը զգամ: Յառած եմ աչքերս Վեհափառին: Ես ինձմէ հեռացած եմ: Ես կամ ու չկամ: Կարծէք սենեակին մէջ չեմ: Մահուան այդ սենեակին մէջ կարծէք ձգած եմ միայն իմ աչքերս, որոնք յառած են Վեհափառի աչքերուն: Վեհափառի աչքինը... անոնք բաց են ու սառած...: Ի՞մ ալ աչքերս սառած են...: Ու երկու զոյտ սառած աչքեր իրարու յառած են, իրարու կապուած են անբեկանելի մագնիսականութեամբ:»

Կը յորդի լուսւթիւնը: Թերեւ ես խլացած եմ:

Բնազդաբար աչքերս կ'իյնան պատի օրացոյցին: Վեհափառի օրացոյցը... կը կարդամ 20 Յունիս, Ուրբաթ: Արդեօք ալեւս այդ օրացոյցին թերթերը պիտի մնան կ'ոն, այդ էջին վրայ...: Կը նայիմ թեկի ժամացոյցիս: Ժամը 12ը կ'անցնի 5 րոպէ: Ուրեմն կարելի է թերթ մըն ալ փրցնել այդ օրացոյցէն:

Իմ ներսս կը սկսի մեղմ ու վսեմ երաժշտութիւն մը: Անանուն դաշնակ մը կը նուազուի: Երգի մը սկիզբն է: Ու ապա կը սկսի ինքը՝ Երգը:

«Օրն էր Ուրբաթ,

Լուս ի Շաբաթ...»:

Կը բարձրանայ երաժշտութիւնը, կ'ուղղէ զիս, կը վառէ զիս, կ'այրիմ քաղց-

բութեամբ մը: Կոմիտասի «Մոկաց Միրգեն» է: Այդ երկար երգէն միայն այս տողերը կը նուազուին ու կ'երգուին: Ո՞վ է երգողը: — Անանուն ու մե՛ծ երգիչ մը: 0<sup>0</sup>, ներսս ո՞րքան ազմուկ, մահամերձի այս սենեակին վեհափառ լուսւթեանը մէջ: Երգիչ, երգէ, մի կտրեր թելը: Թող քու երգը նմանի յաւելտեան դարձող այն սկառակին, որուն առանցքին չուրչ ակօնուած ըլլան միայն:

— «Օրն էր Ալեքսար,

Լուս ի նաբար...»:

Ու երգը կը դառնայ իմ մէջս: Այդ երգը չի՛ դագբիր իմ մէջս: Անվախճան երգ, մի՛ կանց առներ, ես քու հլու ունենակիր իմ:

Բայց, կանգ կ'առնէ աՄոկաց Միրգենն...: որովհետեւ բժիշկը կը խոսի և կ'ըսէ:

— Տաքութիւնը 42 եղաւ: Քիչ ետք կրնայ 43 և 44 ըլլալ...:

Կը սթափիմ: Կը նայիմ ժամացոյցիս: Ժամը 1ն է: Որը արգէն Ուրբաթ չէ, այլ՝

— մուս ի նաբար...»:

Կը սկսի նոյն երգը, բայց այս անդամ միայն անանուն ու մեծ երգիչը կ'երգէ,

— մուս ի նաբար...»:

Կ'ողողում երգով: Իմ ներսս Վեհափառն ու Մոկաց Միրգէն կը տեսակցին...: Անանուն ու մեծ երգիչը որ իմ մէջս կ'երգէ, ոոր առղ մը ևս կ'աւելցնէ.

— «Հազար ափսոս Մոկաց Միրգեն»:

Կը նայիմ Վեհափառին, այսինքն կը նայիմ Անոր աչքերուն...: Սառած են. Նայիմ Անոր աչքերուն...: Սառած են. Ժառագալթ մը հոն ծիլ է արձակեր: Միտքիս մէջ տող մը կ'իշնայ՝ «Ճառապայրը Հիքաղուիր...» ու կը ստանայ արձագանգ՝ «Մենք չենք քալեր նառապայրը»:

Վեհափառը շարժում մը կ'ընէ: Վեհափառը երկար չունչ մը կ'առնէ: Վեհափառը կը չնչէ: ի՞նչ երջանկութիւն: Վեհափառի աջ ձեռքը կը սկսի շարժիլ. Վեհափառը կը... զրէ, ի՞նչպէս ԱՌԵ օրերուն: Անչուշտ հիմա Վեհափառը կը նկար մանրանկարչական ձեռագիր մը. ըազըէ մանրանկարչական ձեռագիր մը. համա՛, կեռան թագուհի Աւետարանը, համակ ոսկեգրուագ, անթիւ մանրանկարներ, թունազրի, լուսանցազարկեր, երփնեան գլխատառեր կը տողանցեն իր առանց գլխատառեր կը տողանցեն իր առանց զնէն: Զարմանալի... կը լիչեմ կեռան

թագուհիի Աւետարանին թիւը - նոմէրը, ինչպէս կը հնչէր Վեհափառը . . . Նոմէր 2563, ձեռագիր Երուսաղէմի . . . :

Վեհափառը կը գրէ իր ա'ջ ձեռքով . որքա՞ն նկատողութիւններ կ'արձանագրէ . . . Կարծէք հիմա պիտի ըսէ ինձի .

Պարո՞ն Ախմոնեան, արտագրիր յիշատակարանները, դասաւորիր ծանօթազգութիւնները: Սա կիլիկեան մանրանկարչութեան գլուխ - գործոցն է: Նկարչի անունը չի տրուած, բայց ես կարծում եմ Թորոս Ռոսլինը պիտի լինի . . . Աւետարանի ոսկերչական կազմը հրաշալի է, բայց ուշ գարու գործ է . . . :

այդ ձեռագիրն աւ, Երուսաղէմի No. 2 Ձեռագիրն է, Հեթում Սեւաստոսի Բժջը բանը: Ու կը յիշեմ այդ բժշկարանէն, տեսալ խօսքերը, զօրս Վեհափառը Կիլիջ, անոյշ օրօրութեալով և ա'յնքան յուղը: Կերպով կը կրկնէր.

— «Յիսուս Քրիստոս, որ բժիշկ հնոգւց եւ մարմնոց, բժեկեա՞լ վեր հոգած եւ մարմնոյ ծառալին են . . . »:

Նոյնիսկ բժշկարանի մէջ, զի՞ն հեք բժիշկը իրրե գերագոյն դեկ կը հայցէ, Յիշ սուսի՞ բժշկութիւնը: Յիսո՞ւս, բժշկէ՞ զօրի հափառի վէրքերը: Բայց Վեհափառը լիտառապիր վէրքերէ. Վեհափառի վէրքերը



Յուղարկաւորութեան բափորէն տեսարան մը:

Այժմ, կը յիշեմ թէ ինչպէս 1947 թուի ամրան, Երուսաղէմի մէջ Վեհափառը ժամեր յուղուած մնաց կեռան թագուհիի այս Աւետարանի առջև, ապա զայն զրկեց, ու իր սուրբ կուրծքին վրայ պահեց Երկար, ինչպէս մայր մը իր անդրանիկ մանչը, առաջին դիցումին . . . :

Կանգ կ'առնէ Վեհափառի աջ ձեռքը: Դէմքը դաժան պրկում մը կ'ունենայ, ծնուար անմասն կը մնայ պրկումէն: Նորէն կը հանգարտի Վեհափառը, աչքերը միշտ բաց են ու սառած: Աջ ձեռքը լայն բայց հանդարտ շարժում մը կ'ընէ նորէն: Անշուշտ նոր ձեռագիր մը կը թերթէ: Գիտեմ

կը գտնուին մարդոց հոգիներուն մէ Աստուած՝, բժշկէ ա'յդ մարդոց վէրքերը: Վանականները կը մտնեն Վեհափառի սենեակը. բարի ու երիտասարդ միարաններ, որոնք կարծէք կ'ապրին որբացման նախավայրկեանը . . . :

Վեհափառի մահուան մահճը կարծէք նաւահանգիստի մէջ նաւ մըն է, որ քիչ ետք պիտի քաշէ իր խարիսխները և պիտի հեռանայ դէպի բաց ծով: Կեանքէն դէպի Մահ: Ահ, այս որքա՞ն կարծ միջոց կեանքի ու Մահուան միջեւ: Կեանքն ու Մահը փառ կած են իրարու:

Բաւական ժամանակ է անցեր, արդէ կ'երակ

ծառացիր հնք Շաբաթ օրուան պատճեն : Պէտք է հեռանալ . կը սպասեն առւնէն : Խնչպէս հեռանալ : Վերջի՞ն բաժանում մը... կը խոնարհիմ ու կը համբուրեմ վեհափառի Աջը, որ այնքան ձեռագիրներ է առումնասիրած : Այդ Զեռքը ինքնին երկաթագիր ձեռագիր մըն է :

Երբ կը բաժնուէի Վեհափառէն, Անիկանան էր իզնատիս մանրանկարչի մէկ նկարին . . .

Ես հասած եմ իմ տունս :  
Խոր քունի մէջ են բոլորը :  
Կանցնիմ սենեեկս . կը բանամ լոյսը .  
պատէն ինծի կը ժապի Հ. Աճառեանը :  
Հա՛, կը յիշեմ թէ երեք անձեր սիրած եմ .  
Եղիչէ Դուրեանը, Գարեգին Կաթողիկոսը  
և Հ. Աճառեանը : Բախտը ունեցեր եմ  
տեսնելու միայն Գարեգին Կաթողիկոսը :  
Թիշտակները կ'ողոզեն զիս : 1935: Մեր  
տուածին հանդիպումը : 1946-1952: Բայց  
առիկա տարբեր ու խոռվիչ պատմութիւն  
մըն է : Պէտք է քնանալ . . . Կարելի՞ն է  
միթէ : Անքնութիւնը կ'աճեցնէ մէջս հա-  
ստառքը թէ Վեհափառը պիտի չմեռնի :

Ու այդ հաւատքը զիս կը պահէ ան-  
քուն մինչև «Լուս ի Շաբաթ» : Դարձեալ  
երաժշտութիւն, գարեհալ Մոկաց Միրզէն :  
Վեհափառը քանի անգամներ զիմակալեր է  
մահը, մանաւանդ վերջին 18 ամիսներուն :  
Վեհափառը չի յարգեր ժամագրութիւնը  
Մահուան : Վեհափառը չ'ուզեր մեռնիլ . իր  
անտիպները, իր անաւարտ աշխատութիւն-  
ները և իր նոր ծրագիրները իր զինակից-  
ներն են Մահուան դէմ : Մահը մինակը  
ինչպէս պիտի յաղթէ այդ բազմահազար  
զինուորներուն :

Կ'արթննամ, Կ'արթննամ ոչ թէ քու-  
նէն, այլ անքնութենէն : Ժամը 5.30ն է :  
Տունէս կը լսեմ Վանքի տառաօտեան ժա-  
մերգութեան առաջին կոչնակները, քաղց-  
րալուր և աւետարեր : Աւրեմ Վեհափառը  
զիմացեր է, չէ մեռեր : Կը յիշեմ Ալֆոնս  
Տոտէի «La chèvre de monsieur Ségur» : . . .  
Վասահ էի որ Վեհափառը պիտի չմեռնէր :  
Վեհափառը չի մեռնիր : Բայց . . . քիչ ետք,  
երբ ժամը 5.45ն է, այդ ինչ զօղանջ է,  
հատհատ . . . ու չի վերջանար : Աւրեմ

## ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԱԼԸ

Մեծասքանչ մեր լեզուին նոյնքան  
մեծասքանչ բառերը, կարծես թէ իրենց  
խմասն ու թափը կը կորսնցնեն և կը նոհ-  
մանան Աստուածարեալ Գարեգին Ա. Հայ-  
րապետին մահաւան մէջ, երբ կը փորձենք  
նոյն տրյու բառերովը իր մահը պատմեն :

Բօթարեր գոյժը, որ հնչեց Անթիլիասի  
կաթողիկոսարանէն, արձագանգեց, ամէն  
տեղ, Լիքանանի մայրաքաղաքէն մինչև  
Ա. Էջմիածին, մինչև Հայոստանի բարձ-  
րաբերձ և սպիտակափառ լեռները, Հիւ-  
սիսային և Հարաւային Ամերիկաները, Ափ-  
րիկէի և Ասիու խորերը, Ատլանտիսն և  
Խաղաղական Ավկիանոսներու տփերը, և  
Հնդկաստանի հառուները, վերջապէս բո-  
վանգակ հայութեան ամենահեռաւոր ան-  
կւունները . . .

Որքան տեղին է կրկնելու Սուսուղ թո-  
գաւորի մահերգը և Լեռինք Հայոստանի մի՛  
իցցէ ի ձեզ յօդ, և մի՛ եկեսցէ ի վերայ-  
ձեր անձրի . . . ո, երբ իրենց Մեծ Զա-  
ւակը, իր պաշտօն և սիրած հայրենիքէն  
հառու, օտար ավելու վրայ կը վախճանի  
անմուրատ . . .

Մահն է որ կը քոչէ չուանը ժամուն զան-  
գակին :

... Մահուան զանգակն է :  
Վեհափառը մեռեր է :  
Վեհափառը չի մեռնիր :  
«Ճառագայթը չի թաղաւիր» :  
կը սկսի հին երաժշտութիւնը : Անա-  
նուն ու մեծ երգիչը կ'երգէ :  
— «Օրն եր Աւրեար,  
Լուս ի նաբար» . . .

\* \* \*

Մինք այսօր, Կիրակի օրով Ճառա-  
գայթը պիտի թաղենք :

— Լսեցէք, ազգ և ազինք, իսպ  
պիտի ընենք ու Ճառագայթը պիտի թա-  
ղենք :

— Անզար ափսոս Մոկաց Միրզէն :

Ալլոյն Ալլոյնեան

Հաստաբեստ մեծ կաղնին, նման երբեմնի Լիբանանի դարաւոր մայրիներուն, յեղակարծօրէն կ'իշնայ և ահաւոր ու մեծ բաց մը կը ձգէ իր ետին:

Որքան խոր և անչափելի եղաւ Հայրապետին մահուամբ գոյացած կորուսոր, նոյն համեմատութեամբ առ համազգային և համայնական եղաւ հայ ազգին վիշտը: Դժուար է Հանգուցեալ Վեհ. Պարեզին Ա., Կաթողիկոսին կեանքը պատկերացնել: Բազմանուար հայրենասէրը, բեմբառացը, մեծ ուսանողը, Հայ Եկեղեցւոյ Միասնականութեան Առաքեալը, միացած և ի մի խառնուած էին Վեհ. Պարեզին Կաթողիկոսին մէջ, կազմելով ճշմարիտ և իսկատիպ հայ հոգեւորականը:

Իր անձը համակ հոգիի, հաւատքի, սիրոյ, նուիրումի միւսոնաբոյր օծութիւն մը, աստուած ային չնորհք մը ու լուսեղէն կառոյցք մը ունէր: Եթէ ուղէինք բարացուցիլ Եսումնեծ Հայրապետին անձը, պէտք է ըսէինք անգարան: Հայ Եկեղեցւոյ Միասնականութեան Առաքեալը, որ միութեան ախոյիան Եկեղեցականը եղաւ ամենուրեք: Ան՝ մեր օրերուն իրական և ճշմարիտ տեսանողն էր, մարգարէական հզօր և շանթահարսղ չունչով, որ կուգար մեր երանաշնորհ Հայրապետներէն:

Դարապաղցի (Արցախ) էր, ժառանգած հայ Եսոնաշխարհի ազատութեան չունչը, իսկ Ա. Էջմիածինը անօր սրտին և հոգիին մէջ հրդեհած էր հայրենիքին սէրը, անկիզելի մորենիին կրակովը վառուած:

Հանգուցեալ Հայրապետը, իր ծննդաւ վայրին մէջ (Զիւանշիր գաւառուին, Չարտախւուու գիւղը) իր նախնական կրթութիւնը ստանալէն վերը, մօրեղբօրը Անտոն Վարդապետին հոգածութեամբը կը մէկնի Ա. Էջմիածին և Կ'աշակերտի Կէորգեան Ճեմաւանին, ուր՝ բոլորին ուշադրութեան առարկայ կը գտնայ: 1888ին Աւագ Սարկաւագ կը ձեռնազրուի և Օրմանեան Սրբազնին հնարամիտ կարգադրութեամբը կը յաջողի 1892ին Գերմանիա մեկնիլ: Ան՝ Լայրցիկի, Պերլինի և Վիէննայի գերմանական համալսարաններուն մէջ մօտ 5 տարիներ, իր երիտասարդական կրակու և աշխոյժ տարիներուն մէջ, ուսաւ աստուածաբանութիւն և փիլիսոփայական պատմութիւն և ապա իբրև աւարտաճառ (Thèse) գրեց «Մի կամքի

վարդապետութեան ծագումը», Հայ և Յոյն աղբեւբների քննադատութեամբ» աշխատասիրութիւնը և ստացաւ Փիլիսոփայական Տօքթորի աստիճանը (1897):

1897ին Գերմանիայէն Ա. Էջմիածին կը վերագանակ նոյն տարին, Ա. Գայիանէի վանքին եկեղեցիին մէջ արեղայ կը ձեռ նադրուի պահելով իր աւագանին անունը և Գէորգիան ճեմարանին մէջ ուսուցիչ կ'անուանուի, ուր կ'աւանդէ Հայ Հին Մատենագրութեան և Աստուածաբանութեան գասընթացքները: 1900ին Կ'լնտրուի Թիֆլիսի Հայոց Առաջնորդական Փոխանորդի ինչպէս որ Կ. Պոլիս Արևմտեան Հայրումտարական և հարուստ գասակարգին մշակոյթի կեղծրնն էր Թիֆլիսը: Հոգելոյս Հայրապետը, Թիֆլիսի մէջ ազգային և մտաւորական մեծ գործունեւթիւն մը կ'ունենայ: հակառակ իր կամքին 1905ին կը վերագանայ Ա. Էջմիածին և իրեն կը յանձնուի Գէորգեան ճեմարանին վերատեսչութիւնը և Ա. Էջմիածին պաշտօնաթերթ «Արարտ» ամսագլին խրմագրութիւնը: Այդ թուականէն սկսեալ, Վեհափառ Հայրապետը կը խորացնէ իր զիտական, բանասիրական, զրչագրական հետազոտութիւններն և ուսումնասիրութիւնները և ինքինքն քը կը նուիրէ Հայ մանրարուեստներու և բանասիրութեան: Կ'լնտրուի իսկական անդամ Խուռ Կայսերական Հնագիտական Ընկերութեան: Երևանի համալսարանին հնագիտական ամպիսնի զեկավար կը նշանակուի, նոյն տանն Երևանի գիտական հետազոտութեան անդամ կ'լնտրուի, նկատի ունենալով իր բազմերես և զիտական ուսումնասիրութիւնները: 1911ին Երևանաղէմ կ'այցելէ ուխտաւորութեան և ձեռագիրներու ուսումնասիրութեան համար: 1917-ին եպիսկոպոս կը ձեռնադրուի, իսկ 1927-ին արքեպիսկոպոս: 1927-ին Խրիմի, Նոր-Եամինիջեանի և Ռուսաստանի Առաջնորդ կը նշանակուի: Հոգելոյս Հայրապետը, իր յարատե ուսումնասիրող և գերծանող, զույն գագար չունեցաւ և իբրև այդ կոթողական և մագիստրոսական աշխատութիւններ արտադրեց: Հոգելոյս Հայրապետին միակ տեսլականը եղաւ իր ժողովուրդին տալ մեր անցեալին մեծ և անկորնչելի արժէքները:

ՊՐԵՄԻ ԳՐԱՎԱԳԼԻՐՆԵՐԸ և անոնց յարաբերական  
պահանջարկացումը յընթացս դարերու, անոնց  
վկանով գրական, պատմական, գիտական և  
սովորական ուսումնասիրութիւններ, մէկ  
բովոսքով ցոյց տալ հայ ժողովրդին անցեալի

և խրախուսեց հայկական բանակը և հայ-  
րենասիրական բոցաշունչ խօսքերով հրա-  
զինեց հայ հոգիները:

Կարսի անկումը խոշոր վէրք մը՞րացաւ,  
ինչ պէս բովանդակ հայութեան նոյնպէս և  
բովոսքով ցոյց տալ հայ ժողովրդին անցեալի



Վեհ. Հայրապետին դագաղը Անրիիլասի Մայր Տաճարին մէջ:

Կ արուեստը իբրև ստեղծագործող և շինարար  
մի մեծ ժողովուրդ . . . Ան՛ Սարտարապատի  
պատերազմին (Հոկտ. 1920) մասնակցեցաւ  
և այդ պատմական հերոսամարտին նախըն-  
թաց օրը, իբրև մեր օրերուն նոր Դեւոնդ  
երէցը, խաչ և սուր ի ձեռին, քաջալերեց

Հայրապետին սրտին մէջ: 1934-ին, Լու-  
սահոգի և երջանկայիշատակ վեհ. Խորէն  
Ա. Կաթողիկոսին կողմէն հայրապետական  
վիազօր նույիրակ նշանակուեցաւ և Սփիռ-  
քի բովանդակ հայութեան մէջ, իր հայ-  
րապետական առաքելութիւնը, մեծ խան-

## ՊԱՏՄԻՉԸ ՀՈՅ ԱՐՈՒԵՍՏԻՆ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻՆ

Պարտաւոր եմ իմ վերնագիրին յանդրզնութիւնն ու յաւակնութիւնը մեղմել Գ. Յովսէփեանին իսկ բառերովը որոնք զմալլելի պարկեցտութեամբ մը, գիտակցութեամբ մը կը մնան աւելի ասդին քան համադրութեանց արտօնած արծակութիւնները :

Խօսեցայ հաղբակեաննէն, իոն մուտք ունեցող իրաւ մատենագիրներուն առիթով։ Ու հազիւ թելադրեցի թէ այդ մեծածաւալ գործին տիրական նկարագիրը կերպնկալ արուեստի յիշատակարաններուն մեզի մատուցումովն էր պայմանաւոր։ Գիտենք որ մասնակարչութեան անտիպ աշխատափրութիւնը նոյն ոգիով մատուցումներու հանդէս մըն է։ Կարդացէք Նիւթեր եւ ու-

սումնասիրութիւններ հայ արուեստի եւ մատակարակութիւններ կոյրի պատմութեան ընդհանուր վերնագրին տակ լոյս տեսած գործերը։

Ով որ այցելած է Վեհափառին ու կախած յոզնած նայուածքը մը անոր դարձներուն հասակին, որոնց իւրաքանչիւր խորշին — աչքին — մէջ այս անունները մատուցող նախանիւթերը, մեծ պահարաններու մէջ կը քնանան, սպասելով յարութեան կոչին, ալ չի կրնար մոռնալ զանձին հարըստութեան չափով, հաւաքողին անհուն աշխատանքը։

... «Կը յաջողութեան մեզ ամբողջական դարձնել գործը, Աստուծոյ կամքն է, մեր կեանքի տեւողութեան եւ գիտական աշխատանքներով զբաղուելու յարմարութիւն-

դավառութիւն ստեղծեց հանգէստ հայրինիքին և Ս. Էջմիածնին։ 1938-ին, Հիւս. Ամերիկայի առաջնորդ ընտրուեցաւ, ուր մօտ 5 տարիներ պաշտօնավարեց։

10 Մայիս 1943-ին, Անթիլիաս գումարուած Պատգամաւորական ժողովը գրեթէ միաձայնութեամբ զինքը կիլիկիոյ Կաթողիկոս ընտրեց, իրեւ արժանաւոր յաջորդ և գահակալ Շնորհալիներու աստանական Աթոռին։ Իրապէս ինք եղաւ ազգը ընտիր, արժանընտիր և արժանավայել կաթողիկոս մը։ Իր ընտրութենէն 1945-1952 լման եօթը տարիներ գահակալեց, իսկ վերջին մէկուկէս տարին անկողին ինկաւ, իր ըն հիւսներ։

Հոգելոյս Հայրապետին թաղումը եղաւ համազգային, և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը 5 անձերէ բաղկացեալ պատուիրակութիւն մը նշանակեց թաղման հանգիսութեանց ներկայ գտնուելու համար։

Իրեն համար, իրեւ արուեստագէտ և մշակուած միտք, գրչագիրները, ուր ցոլացած և հայելիացած կը մնան հայ ստեղծագործ համարին գանձերը, մեր պատմութիւնը և արուեստի նուաճումները, նըլուրական և թանկարժէք սրբութիւններ էին։

Իր կողմէն աշխատասիրուած բոլոր

գործերը կոթօղական գործեր եղան, մին միւսէն զեղեցիկ, մին միւսէն հմտալից և թանկարժէք։

Իրական մեծութիւն մը, հանձարափայլ անձնաւորութիւն մը իր ամբողջ ունեցածը Հայ ազգին և Հայ Եկեղեցիին տալով մեզմէ կը մեկնի, կոթողական յիշատակներ ձգելով մեզի։

Պատմական, բանասիրական իր գործերը, ի մասնաւորի մեր բազմահազար զբանագիրները որոնց մեծ մասը իր կողմէն հանգամանօրէն և զիտնականօրէն քննուած և ուսումնասիրուած են, փոքր մասով միայն հրատարակուած են։ Հոգելոյս Հայրապետը թանկարժէք ժառանգութիւն մը և կտակ մը կը թողու Հայ ազգին, Հայոց Եկեղեցիին և ի մասնաւորի Մեծի Տանն կիլիկիոյ Միաբանութեան, որպէսզի՝ անոնք մաս առ մաս տպագրուին և հրատարակուին, ասով միայն իր երազը կ'իրականանայ և Հոգելոյս ու մեծ Հայրապետին հոգին կը հրճուի երկնային ու յաւիտենական օթեւանէն։

Խունկ ու արցունք իր անթառամ յիշատակին և անունին։

ՆԱՐ ՆԱԽԻՋԵԼԱՆՑԻ  
ԵՐԱՎԱԾԵԼ

ներից կախուած բայց աշխատում ենք այդ ժամանակից» (ՊՐԱԿ Գ., առաջաբան, 1944, և նորը):

Այդ թուականէն ասղին զրական - գիտական սա «աշխատանքների» վրայ աւելցոց է դ. Յովսէփեան  
ա) - Կարոլիկոսուրիւն Մեծի Տանի պիտիիոյ,

բ) - Անրիլիասի Գոյրեվանիը,

գ) - Կազմակերպուրիւնը հրատարակի գործութեան:

Տուած ևմ, համակէ մը առնելով, մինչեւ 1952 տարին հասնող աշխատանքներու կարգացոյց մը, Մարդը գլուխին մէջ:

Այս ամենուն միտք բանի՞ն:

- Ան որ Գ. Յովսէփեան չարաչար կը դարտի իր հարստութեան հետ:

\* \* \*

Պարտքը կը զգամ ընթերցողին մտքին մէջ նորոգելու իմ փարձին տարողութիւնը որ չի կրնար ծաւալիլ ընդգրկելու համար նայ մշակոյրին տիրական համայնապատկրը, ինձմէ, ինչաչէս նիւթէն բխող պայմաններու իբրեւ նետեւանք: Դրական վերածումը, երբ իր կալուածէն գուրս գետիններու վրայ կը փորձուի, յաճախ բառ մատուցանելու մարզանք մը կը դառնայ, նոյնիսկ ամենէն հանգամանաւոր, «պատրաստուած» տեսաբանի մը գրչին տակ: Մասօթ էք թերեւս նիմնական մէկ պահանչիս որ գրական քննադատութիւնը կը տեսակառիչ, զայն ենթարկելով վառքերու թափանցումին (այսինքն անոր մերժելով ինքնիրու գոյ գեղագիտութեան մը օքնքներէն դեկավարում մը) կամ պատմութիւն ընկու պարտքին: Այս տեսակէտէն քննադատը որ վէպ մը չէ կարող լաստակերտել, պարկեցտ բան մը կ'ընէ... լրելով վէպի մը մասին: Ու ասիկա այսպէս միւս սեռերուն ալ համար: Ասոր զեղծանումը մենք կը հաստատենք հայ ճարտարապետութեան վրայ ծնունդ առած գրական լայն շահասիրութեամբ: Այս տողերուն նեղինակը ոչ նազէտ մըն է, ոչ բանասէր մը, ոչ ալ ճարտարապետ մը: Դրականութեան պատմիք իր զերը կը հաւատայ թէ կարող է արժեցնել գրական գործերու վրայ: Գ. Յովսէփեանին գործը առաւելազանց աստիճանով մը պատմա-գիտական, հնագիտական,

անոր մատչիլի է ուրիմն իր այն մասերով ուր կան զրական կինդանազիրներ, մեր ժողովուրդին համայնապատկերը թելազրող իրացումներ:

Երկորդարար կայ նայ մօսկովի և արաւեսի պատմութիւն ինքնին թիչ մը խոշոր տարավին տակ, այսօրուան մեր զտածին, դրածին նկարագիրը: Աչքէ անցուցէք դ. Յովսէփեանի գործերուն ցուցակը: Զեր ուշագրութիւնը կը զրաւեն անուններ որոնք առաջին անգամ ըլլալով գրեթէ կը մատուցուին մեզի, տոհմերէ, գործերէ, անձերէ: Յետոյ ուրիշ ալ նկատողութիւն: - Այդ գործերը կերպնկալ արուեստի իրագործումներուն շարքին մէջ կը մտնեն: Տաճար մը, ոգի, խորհուրդ, գեղեցկութիւն և յոյզ ըլլալէ առաջ նիւթեղին մըն է, որոց կերպարաններու հանգէս մը, ու իբր այս մեզ կը դնէ պարտքերու գիմաց: Առնուազն ընդարձակ աշխարհ մը կայ անոր եաին, ժամանակին մէջ հետզհետէ կերպակփոխուող: Այդ ֆազերուն իրաքանչիրին կը պատախանէ մասնաւորուած զգալու զրութիւն մը, նոր բառով մը մշակոյթ մը: Բայց տիրականը այդ զրութեանց մէջ պայմանաւոր է քարին վրայ գործադրուած աշխատանքով մը: Զեռագիր մը տաճար մըն է, աւելի պգտիկ չափի վրայ: Մանրանկար մը՝ աշխարհ մը: Ու շարունակելով մտածումը կը զտնէք որ Սասաննան կերպասի կոորդ մը, ոսկերչական արուեստէն առարկայ մը, կարասիներէն, տէնօրարիք իրագործումնեն իսկ նմոյշներ մշակոյթէ պահեր են, աւերակները կանգուն կամ կործան խաչքարերը, գերեզմանական կոթողները, բուրքը, իրենց կարգին, անշուշտ ունին արուեստին հետ յարաբերանք, միւս կողմէն դիցազնապէպ մը, ընարական քերթուած մը, բերնէ բերան մեզի հասած մեղեղի մը, քանդակներ, նկար մը այդ յարաբերանքը կը հաստատեն աւելի յատակ թելադրանքներով (չնմ գործածեր օւենք բառը որ արուեստին մէջ բռնագրօս բան մը կը ստեղծէ):

Ահա թէ ուրկէ իմ դժուարութիւնը.

- Այս ամէնը համադրելու, այս ամենէն նայ արաւեսի և մօսկովի հոլովոյթ մը մտածեսիւր: Աւելին: Կրնայ ըլլալ որ վաթսունէ աւելի տարիներ նման նիւթերու վրայ իր սիրաը պարպու, միտքը մարզող աշխատաւորը, Գ. Յովսէփեան, որեւէ երկ-

րորդէ մը աւելի ուժով մտահետութեամբ մը ըլլայ ապրած այդ մշակոյթին հրապոյրը, հզօր ծգողութիւնը: Բայց այդ ամէնը, դուրսէն մարդու մը համար կը դառնայ մուայլ ննջում մը: Մտքին նիզը(\*), անոնց մէջ նոյնութիւններ, կանոններու ուրուազիծ մը ճշգելու, կը վերածուի ամուլ ցաւի մը, ինչպէս կը զգանք երբեմն մթին անտառէ մը ներս, կամ՝ հերձափշուր մարմարաստանի դիմաց, կուշտին, անհնեթեթին, խորապէս տղեղին ու անամնականին այնքան յայտարար տեսարանէ մը ծեր մէջ արթնցող արդար զգայութիւնները առաջնորդելու համար ուրիշներու որոնք մերն էին, են, այս անզամ այդ փայտէն ու այդ քարէն բխած բայց հանճարին միջամտութեամբը հսկայական յիշատակարաններու, շացուցիչ ապարաններու գեղագիտական խոռվին փոխակերպուած, հիմնովին մեր

(\*) Սիրաբի Տէր Ներսէսեան, վենետիկի Սիրիթարեան հայրերու ձեռագիրներէն խումբի մը վրայ (Ժթ.-Ժթ. գարերու պատկանդ) դորձարած է մեթոսի նմանող եղանակ մը ուսումնասիրութեան: Պատմել ձեռագիրն կերպարանքը (Ժուղթ, գիր, կազմ, կողք յիշատակարաններ, մեծութիւն, կեանքը), մանրանկարներուն բովանդակութիւնը փոխազրել մեր օրերու թուղթին, այսինքն մանրանկարը նկարազրել խօսիլ շարդէն, գիծէն, գոյնէն, ոգիէն: Այս ամէնը ի վերջոյ կը դառնայ յոզնութիւն եթէ ոչ տառապանք: Այս տառապանքը գինն է միութիւն, որինք, մշակոյթ տեսնելու եթէ ոչ փառախօսութեան, գէթ պարկեշտ յաւակնութեան մը: Արդ արուեստի մեծ ուղղութիւնները, գէթ մեր տեսածէն, հետև ցնելով, ամենէն շատ երկու սերունդի վրայ կը կերպարաննեն իրենք զիրենք: ու կը փոխարին, ճշշդ կեանքին նման, երեք հարիւր տարիներու վրայ, զանազան միջավայրերէ այդ հաւաքսւմներուն համար ճարել ուղուած ոսնմանութիւնները, աւելի ճիշդ բառով մը հանգիտութիւնն է հեղինակը մեր մոքին ոս անհանգստութեան: Գ. Յովսէփեան մանրանկարներուն ուսումնասիրելու իր եղանակը տուած է պատմանագիտական հառոյցներուն մէջ: Իր յայտարարութիւնը, այս արարքը նկատելու փրկութեան արարք մը միայն, նիւթը պատագայ արուեստի մը պատմութեան, կ'արժեկորեմ լայն պատրաստամութեամբ մը: Անտիպ իր դործը, Հայ մանրանկարչութիւնը, անշուշտ ունի խօսիւթք յաճախուուր երևոյթներէ: Սիրաբի Տ. Ներսէսեան 1947ին ուրիշ աշխատանքի մը մէջ (Համառու ուսումնասիրութիւն մը նայկական արուեստի եւ հայութակերթութեան) «կիզը կ'ընէ այդ մշակոյթին պատմութեան նախափորձերուն, իմ ձեռնհասութիւնը հոս ալ չի պաշտպաներ զիս»:

միտքէն ու զիղերէն փարատելով անտառներուն մոայլանքը եւ քարահանքին դեստիսի ծամածութիւնները, վայրագութիւնը:

Սրուեստներու պատմիչն գերազով հեշտանքը պիտի ըլլար խորանալ Գ. Յովսէի կեանով մթերուած նախանիւթէն ներս, ծղել անոնց վրայ փորձուած աշխատանքին կշիռը: Տեղը եկած է յայտներու որ արտաստաններէն ումանք կատարուած ին օտար լեզուներով (Գերմաններէն եւ Ռուսներէն) ու կը պատկանին բարձրորակ մանագիտութեան մը, չափազանց յարգի, քանի որ պետութիւններու գիտական, պատմագիտական եւ հնագիտական հիմնարկներու պաշտպանութիւնը կը վայելին: Մատնազիր եւ հնախոյզ: Ինչո՞ւ չէ, երբ գիտնքը որ գիրքէն առաջ է գիրը, թուղթէն առաջ՝ քարը:

Բայց ունի՞ զոյտութիւն, «այսպէս ասած», պատմութիւն հայ արուեստի եւ մօակոյրի անունով կրթանք մը, իր փաստերը արժեւորած, քաղաքացիութեան իրաւութիւնը տիրացած:

Թէ այս հարցումին, դժուար է պատասխանը, համակարծիք եմ ծեզի: Բայց կը փորձեմ հարցումը հայոց պատմութեան ալ վրայ: Ու պիտի գտնենք որ հոն ալ զեռաշխատանքը չէ արդիւնաբերուած:

Նորութի՞ւն,

— Հայ մօակոյրին պատմութիւնը:

Այնքան, որքան է թերեւս քիչիք մը աւելիով, հայ ազգային, այսինքն քաղաքական պատմութիւնը:

Գաղտնիք չը որ հայոց պատմութիւնը խանձարութիւն մէջ է տակաւին: Անցողակի խօսեցայ իորհրդային Հայաստանի մէջ կատարուած նուանումներէն (Մանանդեան, Սդոնց, նորագոյն դպրոցը որ հիները շարունակելու արարքը չէ վերածած տրտութեան, ինչպէս կը պատահի յանախ մանաւանդ գրական գիտնիվը յայտարարութիւնը, այս արարքը նկատելու փրկութեան արարք մը միայն, նիւթը պատագայ արուեստի մը պատմութեան, կ'արժեկորեմ լայն պատրաստամութեամբ մը: Անտիպ իր դործը, Հայ մանրանկարչութիւնը, անշուշտ ունի խօսիւթք յաճախուուր երևոյթներէ: Սիրաբի Տ. Ներսէսեան 1947ին ուրիշ աշխատանքի մը մէջ (Համառու ուսումնասիրութիւն մը նայկական արուեստի եւ հայութակերթութեան) «կիզը կ'ընէ այդ մշակոյթին պատմութեան նախափորձերուն, իմ ձեռնհասութիւնը հոս ալ չի պաշտպաներ զիս»:

— Այնքան դարձեալ, որքան կար սիկա արեւելահայ բանասիրական դպրոցին ընդհանուր ուղղութեան մէջ:

1700էն ասդին մեր մտաւորականու-

թիվը — այսօրուան իր իմաստէն աւելի շնչարձակ առումով — առաւելագոյն իր ծփը գործածեց ազգային զարքօնքին որ բաններորդ դարու կշռոյթով քիչ մը տըժոյն, բայց երկու դար առաջ ընդարձակ, տարօքէն լիցուն լուացք մըն էք : Կ'անցնիմ: Զարթօնքին շուրջ մեր կազմած սա մտապատճերը, այդ դարուն, հարկադրաբար թի, լըսելու համար հազիւ տեղ մը կը կրնար տալ հայ մշակոյք տարագով ընդգրիկի այնքան հարուստ, բայց այնքան ալ քիչ բացուած արարքներու, իրագործուներու, սեւուներու (արդէն 1900էն առաջ բառն իսկ հանդիպելի չէ, այդ մշակոյթին կեդրոններուն մէջ): Զարթօնքին բոլոր բանուները, գիտակցաբար թէ ոչ, — հարցը փ փոխուիր, — իրենց ուժերուն լաւագոյնը յատկացուցած էին հետազոտելու հայոց լիզուին պատմական հարազատութիւնը, կինարանութիւնը, աւելի թեթեւ կիրքերով մօտենալով հայոց պատմութեան, աշխարհագրութեան, հնախօսութեան պարզ պրցիսին: Հսկայական ճարտարապետը Ալիշան շատ լրջութեամբ, խանդավառութեամբ իր ալիքին լոյսը պիտի լինայէ իր պատմական կառոյցներուն ու Հայապատումին մէջ միայն վամ, այսինքն ոչ տիրական մղումով մը, հայոց պատմիչներուն վրայ պիտի ընէ կենապարական ամփոփոյըներ, երբ ոչ ոք իրմէ աւելի հանգամանաւոր կը ներկայանար հայոց գրականութիւնը պատմելու: Հայ մը շակոյթին հանդէալ սա այլամերժութեան մօտեցող կեցուածքը գուցէ պատճառ՝ որպէսի անոր մտայդացըը շատ ուշ թանձրանայ: Գ. Յովսէֆիեան 1880ին զայն գտաւ ազգագրական հետաքրքրութիւններու ծեւին տակ: Իր Փօրանեները, Խամայ ծուերը առոր փաստը կրուան: Բանասէրներն ու պատմիչները, մինչեւ 1900 անշուշտ ըրին արդինաւոր աշխատանք: Սսիկա արժեքիկ կամ ուրանալ թէ՝ չտեսութիւն, թէ՝ սրբազդութիւն: Բայց թող ներուի ինձի միւս կողմէն անվերապահ ցաւն ալ յայտնելու, այդ ճիզէն ներս հիմնական պակասի մը, — Արուեստի գդայարանքին:

Արուեստ, սակայն, սա տողերուն վրայ, ծերեքրուն ու արհամարհների մենաշնորհը չէ կարգ մը իմաստի ճարտարապետներուն: Զեմ ալ ակնարկէր անոր աղաւաղուած միւս թելադրանքին որ դժբախտութիւնը

պիտի կազմէր արեւմտահայ նորասկիզբ գրականութեան, Վենետիկին գէշ նաշակովը պատուաստուած պոլսեցիներուն անդրանիկ - գրական սերունդին: Սրուեստը խորունկ, պարզագոյն իրականութիւնն է, անկըշուկի, անտարագելի ապրումներու: Մահկո՞յքը: Բաղդաւոր, — աւելի յաւակնոտ այս բառն ալ Գ. Յովսէֆին հետը չէր բերած անշուշտ Գերմանիայէն ուր զառածումը ահաւոր էր անոր վարկին: Կը ըզգուշանամ պատմական շրջափոխութենէն: Նիմա աւելի մերմած են տարագին ետին մթերեալ թելադրանքներուն արժէքը, յարցը: Գումար մըն է մշակոյթը ու իրը այդ իր միութիւններուն կը մնայ ինքնինը պարտական: Ու կոտորակներն ալ կրնան միաւոր կազմել: Հայ մշակոյթի միութիւններէն ումանց տիրական մասնագէտն է Գ. Յովսէֆին: Զինքը գերազանցող չունինք մէկէ աւելի կալուածներու վրայ (դուք գիտէք որոնք): Անիկա Տաշեանին համապատիւ երախտիք է, ծեռագիրներու, յիշատակարաններու, նախանիւթերու իրեւու հաւաքարաններու, մեխանիկներու սուներու, տոհնմերու մենագրական վերարտադրումը, խստապահանջ կերպով մը — արքայական եղանակի մը մէջն որուն արդար է մերս բառը գործածել: Զեմ ի վիճակի, գնուապէս կշիռը գործադրելու ամբարուած նախանիւթին (քանի որ Յովսէֆինի գործին կէսէն աւելին չին իջած հրապարակ), բայց տպուածին համար որակէ ու քանակէ բազմազանութիւն, նորութիւն առաւել բան տպաւորիչ կը հանդիսանան: Տակաւին ունիմ խօսելիք

— Ինմահան ձգտումէն որ մարդու կեանքը կը տեսակաւորէ: Ու Յովսէֆին այդ հիմնականը տարազած է

— Պատմութիւն հայ մշակոյքի եւ արուեստի արտաքնապէս խոշոր, բայց ներքնապէս արդար յորդորջումով մը:

Մեր, այսինքն պարզ մահկանացուներուս հասկացողութեամբը, այս ձգտումը արտայայտութեան հետազոտումն է հայ սեղծագործ ոգուն: Ու տարակո՞յը, որ չուշանար երբ գէպերը, մանաւանդ մեր ազգային պատմութիւնը դնենք բննութեան սեղանին:

Հայ մշակո՞յը: Օ՞ն, անդը: Ու իր պա-

մարդի և նրա: Ու ասոնցմէ անդին հայ սեղծագործ ոգուն համագործումք:

— Մի աճապարէք: Զեզի ըսուած է որ Գ. Յովսէփի առարկայօրէն գործող, հաստատ գետնի վրայ յառաջացող, առանց ապացոյցի — այսինքն նիւթեղէն վկայութեան — իրողութիւնները ընդունող աշխատաւոր մըն էր, այսինքն ամէն արկածախնդրութեան հանդէպ ինքզինքը պաշտպանել ուզող մէկը: Ուշագրաւ է որ տեսութեան, վարկածին, անդրիբական հետեւութիւններուն նշմարները չափազանց քիչ ըլլան իր կառոյցներուն մէջ: Գ. Յովսէփի այս կերպ իմացական ախորժակներ երթեք չէ պարզած ոչ անշուշտ միայն անոր համար որ ինքզինքը գերմանական պատրաստութեամբ գիտուն մը կը դաւանի, այլ նիւթեղէնի անբաւ առատութենէն ալ հաւանաբար զգաստութեան կանչուած: Ինչ կարիք ենթադրութեան, երեւակայութեան, յերիւրանքի կամ նորոգ յօրինման նոյնիսկ, երբ համոզուած է որ իր նման տասը մարդոց ութուն տարիններն իսկ քիչ կուզան մեր պատերուն մեզի ծգածը ցացակագեւլու: Կը հասկնա՞ք այս փաստը: Միւս կողմէն Գ. Յովսէփի անդաման, իր մատներուն ապահովութեան չափովը, գիտէր հայոց պատմութեան — տպուած մասը, այսինքն մեր քոլոր մատենագիրներէն հրատարակուածը — ու ծեռագիր հայ մթերքին մէջ — ինք կը ճանչնայ գրերէ բոլոր հայ ծեռագիրները — երեւցած մեծ ու պլոտիկ, մէկ անզամ միայն յիշուած բոլոր անունները: Կը մըտածեմ Ալիշանին, իր յիշողութիւնը մօտեցնելու համար կշուի: Միխթարեան վարդապետը կը շարունակուի իջմիածնական վարդապետին մէջ, կրթանքներու ու կարողութեանց մերձաւոր հանգիտութեամբ մը: Գիտէր թէ հայագիտութեան, Գ. Յովսէփի անդամանին տարազովը՝ հայրենագիտութեան մէջ աստիճանները տարբերացման որու ի նպաստ կը խօսին: Ահա թէ ինչու չեմ վարանիր ժանր յուզումով դիմաւորել Յովսէփի անդամանի եւանդը որ փատնուած է այդ հայրենիքին գիտական գիտութեան, եթէ չը նեղուիր բառէն: Հայոց գրաւոր արտայայտութիւնը չունի ատոր համար ոչ մէկ անայց կողմ, անկիւն նոյնիսկ: Ու հայոց աշխարհին ամենէն բանաստեղծական մէկ մասը անոր կողմէ ենթարկուած է

մանրամաղ, ամբողջական սպառիչ ուսումնասիրութեան մը, ամբողջութեամբ մը տըրամադրելի միջոցներու, — մատ, ոտք, աչք, հոգի, գործիք (նկարելու): Անցեալին եւ ներկային սա մշտական փոխանցելիութիւնը, ուսումնամասիրութեան մէջ հիմնական ծրագրին ներկայութիւնը փոխադարձ պաշտպանութիւն մը կ'ընծայէն: Այս պաշտպանութիւնը գիտութեան, փաստին, տօնիւնին ապահովութեամբը միայն չերաշխաւորուիր: Անկիա մանաւանդ կը մանանի ներքին սրտառուէ հուրքէն: Ալիշանի պատկառու հիացումը, Սրուանձտեանցի փրղձկուն տարփանքը այդ հայրենիքէն՝ Յովսէփի անդամանին մէջ կը ստանան ցանկալի դաշնութիւն մը, ընտանութիւն մը, պարզ ու քաղցր հպարտութիւն մը, մեր օրերու մեր նահանջէն, սուգէն, կորուստներէն մեզ ազատագրել ծգտող: Յետո՞յ: Այսինքն յաւակնութիւնները՝ այս ամենուն վարդապետական, գեղագիտական, պատմա-իմաստափրական զրահանքներ ճարելու, որպէս զի պատրանքներ ստեղծէ մտածողի, դիտարանի:

— Ոչ իսկ փշրանք մը:

Մեր պապերուն գովքն իսկ անկիա վերածած է հանդարտ, տրտում երախտագիտութեան մը: Ու մեծ բան է ասիկա: Մեր օրերուն, շատ բիշերու պիտի ներէինը սա յաւակնութիւնները, հայոց մշակոյթը եւ բոպական տեսութիւններու մեթուոտի համադրելու: Գ. Յովսէփի անդաման աշխատանքին գոհացած է տալով պարզագոյն տարազը

Նիւթեր հայ արուեստի եւ մօակոյթի պատմութեան, զմայլելի համեստութեամբ մը, պէտք է կրկնել:

Շատ ու շատ՝ վիթխարի աշխատաւորը, սա պարկեշտութեան մղող պատմաները: Չեմ բացուիր: Կը կենամ ամենէն կարեւորին առջիւ,

— Գ. Յովսէփի անդամանին իմացական կագմութիւնը իրեն ծանր յուզումով դիմաւորել Յովսէփի անդամանի եւանդը որ փատնուած է այդ հայրենիքին գիտական գիտութեան, եթէ չը նեղուիր բառէն: Հայոց գրաւոր արտայայտութիւնը չունի ատոր համար ոչ մէկ անայց կողմ, անկիւն նոյնիսկ: Ու հայոց աշխարհին ամենէն բանաստեղծական մէկ մասը անոր կողմէ ենթարկուած է

ալ կան վկայաթուղթերը որոնց կը մօտենամ քիչ անդին :

Հիմա, ունեցէք սա ցուցակը, միծածաւը անոր գործէն առնուած, ընտրովի,

1. — Սասմայ Սոեր,

2. — Փշտանքներ (ժողովրդական բանահիւսութիւնից)

3. — Ռուսում - Զալ,

4. — Զագավանից ժողովը,

5. — Խոսրովիկ Թարգմանիչ,

6. — Ստեփանոս Սիւնեցու «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ» ՉՈՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆԻՑ» անտիպ :

7. — Մեծոփեցի, Օրմաննան, Նահապետնան, Դաւիթ Հարքացի եւ Պիտոյից զիրք,

8. — Էջմիածնի պատկերագրութիւնը Սրմեն կարողիկոսի ժամանակ, պատմութիւն Ցովհաննու Մայրագոմեցու, Էջմիածնի մեծ խորանի առեղազործ վարագոյրը, Սասմանան իերպասի կտոր, Եղիշէ Թադէոսեանի երիտեների ցուցակն առաջացու և առաջանանդէս, Ազապի հաստառութիւնը Հայոց Եկեղեցւոյ մէջ, Հին հայոց դրամներ, Հայկական ձեռագիրեներու ցուցակն ատլասը (Ստրիկովսքի), այսինքն բոլոր կարեւոր հանդէսներու մէջ լոյս տեսած զրութիւններէն ընտրուածներ որոնցմէ ոմանք այս տարի հատոր կազմեցին Դեպի Լոյս եւ Կեսով վերնագիրին տակ :

9. — Մխիթար Սասնեցի, Մխիթար Ալրիվանեցի .

10. — Հայ մանեանկարչութեան լիակատար Գարեգ (անտիպ),

11. — Նիւրեր հայ մշակոյրի եւ արուեսի պատմութեան (Եռահատոր)

12. — Խովրակեանի (Եռահատոր)

13. — Ազիզբեկեանի

14. — Զ. դարու հայ արուեսի լուսաբանութիւնը (Դ. պրակը՝ Նիւրեր եւ ուսումնասիրութիւներ)

15. — Արագածի կատարին, կեսներս ամենին դժբախս օրը,

16. — Հաւուց Թառի Ամենափրկիչը :

Ու հարցուցէք գուք ծեզ:

— Ո՞ւր է այս ամէնը իրարու ընծալող միութեան զիծը :

Սյա հարցականին բազմաթիւ են ազդակները, հետեւանքները: Ամենէն առաջ սա զանազանութիւնը արդար հեղինակ մընէ քեզ կասկածի մզու:

րէն ու ասոր զուգորդ ամուլ հաւաքապաւաւն: Կասկած՝ ամէն բանի նետամուս որով՝ ծանծաղ շատաբան մունետիկէն: Կասկած նոյնիսկ շառլարաննեն, զգիտցածէն խօսողէն, նետող - բռնողէն :

Ուրախ եմ ու հպարտ ըսելու համար որ ծեր կասկածները, թերեւս արդար, ծեր ներսը չէ գառնազոյն փորձառութիւններով զոյցած, անհարկի, անիմաստ են Գ. Յովսէ վեանի գործին դիմաց որուն միակ մեղքը թերեւս իր չափազանց նորութիւնն է, հընազիտական, պատմազիտական, գեղարուետական գետիններու վրայ ու կարգացուիլը՝ տպաւորապաշտ էջերու վրայ: Այսքան հմտութիւն ոչ մէկ տեղ կը վերածուի բետան հետաքրեաւրեան, աւելորդ բանավէնի, վարկածային փշողաբանութեան:

Կանխող զուլիսին մէջ, ԽՍՀԱԿԵԱՆՔ, Գ. Յովսէ վեանի ամենէն խնամեալ ու ամբողջական աշխատասիրութիւնը, ու իբր այդ, առ այժմ իր զլուխ - գործոցը (բանի որ լոյս չտեսած գիրքերու փառք մը չիմ կրնար ապառիկ չարծանազրել), փորձը ըրած եմ Գ. Յովսէ վեանի եթէ ոչ մեթոսը վերլուծելու, գէթ թելադրելու այն տիրական զիծը որով կը յատկանշուին իր անունը կրող բոլոր երկասիրութիւնները: Անհուն բաւիղին մէջէն, Արիանի թելին նման անցնող միշի ուղղութիւն մը որ մեր անհանգիստ, շուարուն հետաքրքրութիւնը կը պաշտպանէ զառածումէ: Հարստութեան, յորդութեան զգայութիւնները իրենց կարգին կը դառնան անլուտանգ, բանի որ հուսուրական, արկածախնդրական ոչ մէկ փափաք հատորները կ'ուռեցնէ: Այնքան շատ, այնքան տարրեր տարրերէ, այնքան հեռու շրջաններէ կտոր կտոր ճարուած սա խրճանկարային (Mosaïque) արդիւնքը քաջակարիչ չէ անշուշտ, ոչ ալ նուանող, ինչակա կ'ըլլան մեծ արուեստի որմանկարները, լիամիք նկարները: Բայց չի դադրիր դարէ մը, ոգիէ մը խօսելէ, նոյնիսկ վկայելէ: Մանրանկար մը երբեմն, յուզի է, թելադրիչ է լման պալատի թեւ մը ներկող նկարի աստիճան, մանաւանդ երբ առնէք նկատի ընդուռ մտքին տրամադրութիւնները: Այս կալուչ միտքին խանդավառուի խօշմուլ, պոռուսով, մեծղիսվ: Ան միւրը նուրբով, թեթեւով, վափառով:

Վերի ցուցակով նուանուած նիւթին,

ծգտուած ծգտումներուն, վատնուած սիրտին բաժինները առանձին առանձին վերլուծել

— կը նշանակէ հայ պատմութիւնը, արուեստը, հոգեբանութիւնը, ամբողջական զգայնութիւնը, միտքն ու սիրտը բերել ընտթեան լոյսին: Ինչ որ արեւելահայ Զարթօնքին մեծ գործաւորները նկրտեցան իրագործել, Գ. Յովսէփեան ընդունեց իբր համգանակ ու... աւելցուց ԽՄԸ: Անոր պատկանածը դժբախտաբար յստակ կերպով շրջագծելի իրականութիւն մը չէ: Զէր կրնար ըլլայ: Բայց է թանկազին, թերեւս աւելիով իսկ, որքան մեծ այդ զպրոցին իրագործումները եղան դարու մը հասակով: Ես չունիմ ժամանակ, ու ծեռնհասութիւնն ալ, այդ աւելին բացատրելու համար կշուի զարնելու ուրիշներէ կատարուածը: Ու ներեցէք ինծի որ մնամ զգոյշ, վերի ամփոփ ցուցակէն այն միութիւններուն վրայ ուր Գ. Յովսէփեան, իրմով առաջին անգամ սեւուած փշրանքներուն տեղեկաբերն է դարձած, վատնելէ վերջ, որոնք գտնելու համար ծանր, սպաննող սպառում հայոց պատմութեան հնախօսութեան, կերպընկալ արուեստի այնքան բազմազան, ընդարձակ հարցերը լուսաւորել ծգտող հարցերը: Ոչ որի մօտ, մեր բանասէրներէն՝ արուեստի նիւթերու շուրջ սա յուզի տագնապը: Համաձայն էք ինծի: Բայց դարձեալ ոչ որի մօտ, մեր բանասէրներէն տաքուկ, սրտամօտ հաւատաւորութիւն մը այդ արուեստին արթէքն, մանաւանդ դերէն: Դերու-

թեան շրջանի բանուորներուն նկարագիրը կ'ըլլայ աւելորդ, նոյնիսկ խորանարդեալ հպարտութիւն: Գ. Յովսէփեան մեր նախնիքը գոհացնելու համար չէր որ ծեռնարկ կեց իր գործին (Սլիշան): Ոչ ալ Ռաֆֆիին նման ունէր աւելի արդիական, ծանր մոտ հոգութիւններ, մեր ներկայ տագնապանքը դիմաւորել ծգտող: Գիտուն մըն էր, բայց ոչ աստեղային: Իւմանիստ մըն էր, բայց ոչ անցելապաշտ: Գրագէտ մըն էր, բայց ոչ սնապարծ փառասէր մը, կամ կատակ մարգարէ, գալիքներով խենթեցած: Այս վերագրումները կը դադրին գրական այսինքն նարուած ըլլալէ, երբ անդրադառնանք անոր օրերուն: Գտաք զայն, վաթսունէ աւելի տարիներու վրայ, եկեղեցականի իր կոչումին հաւատարիմ: Գտաք զայն հոն ուր ամենէն աւելի դժուար կ'երեւան մեր եկեղեցականները երբ մասնաւոր կիրով մը չեն մղուած այդ տեղուանքը (Վրուանձտեանց): Ու կ'ունենանք տարօրինակը: Այսինքն գործը որ կը խօսի բարձրագոյն նետարքքութեանց ինչպէս նախնական հոգիներուն: Իրերանցիկ, անձնանալէ, խորանակէ աւելի լայնցող, ընդհանրացող սա եղանակին (գրելու) բարիբը թերեւս նուազ կիրով մը գնահատուի մասնագիտացած զիտունէն կամ պատմիչէն, ու չհասնի միջին ընթերցողին որ առատութեան դիմաց շատ շուտ յոզնող արարած մըն է, մանաւանդ երբ այդ առատութիւնը նիւթեղէնին գետինէն կը ճարուի, գործօնութեան քիչ բաժինով մը:

Հեղինակին՝ «Արեւելահայ Բանափրութիւնը եւ էջմանձին» գործէն:

Յ. ՕՇԱԿԱՆ

Այսօր ևս, երբ լուսաւորչի հոգին մեր եկեղեցու վերապայծառութեան կրաւէր է կարգում, մենք ուրիշ ճանապարհ չունինք ընտրելու, բայց եթէ կրօնական, հոգեւոր վերածնութեան հանապարհն է, դրէին խօսքը՝ «Եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյն կարելի է և ազգերին ուղղել, կրօնն է ճշմարիտ կեանքի աղբիրը, ուրեմն և կրօնական վերածնութիւնը մի նոր և ճշմարիտ կեանքի սկիզբ: Մեր ներկայ կեանքը լի է վերքերով: Մեր կեանքը լի է հիւանդ երեւոյթներով, որոնք իրենց կումբից ամենածանր հետեւանքներ են յառաջերում: Հազեւոր են այդ վերքերը, հոգեւոր դէնքերով էլ պէտք է զոքա ապաքինուին:

ԴԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

# “ՄԻ’ ԵՐԿԱՆՉԻՐ, ԲԱՅՑ ՄԻԱՅՆ ՀԱՒԱՏԱ՛”

Ա.

Այս խօսքերն ուղղեց Տէրը ժողովը՝  
զապես Յայրոսին (Մարկ. Ե. 36), որ եկել  
էր խնդրելու Նորան, իւր տունը գնալու եւ  
մահամերձ դստերը բժշկելու: Միջանկեալ  
դէպեր ու շացրել էին երթը եւ ահա մար-  
դիկ են գալիս տնից. յայտնելու, թէ աղջիկը  
մոռաւ, այլեւս պէտք չկայ Վարդապետին  
ներութիւն տալու: Ցիսուս ուղղում է նո-  
րան վերոյիշեալ խօսքերը եւ գնում է  
բժշկելու:

Հաւատոյ զօրութեան այս միտքը  
կրկնուած է աւետարանների մէջ այլ եւ  
այլ առիթներով. տեռատես կնոջ (Մատթ.  
Թ. 22), երկու կոյրերի (Մատթ. Թ. 29),  
քանանացի կնոջ դստեր (Մատթ. ԺԵ 28)  
բժշկութեան առիթներով: Հաւատոյ զօրու-  
թիւնը մեծ է, լիններն իսկ շարժելու չափ  
(Մատթ. ԺԵ. 19), հաւատով կատարուած  
աղօթքը լսելի է ըստ ամենայնի (Մատթ.  
ԽԵ. 22), երկմտութիւնը, թերահաւատու-  
թիւնը բացասական, ինչպէս Պետրոսի ըն-  
կողմիլը ծովի մէջ (Մարկ. ԺԴ. 31):

Մենք մեր հաւատացեաններին, մտա-  
ւրականներին եւ նոյն իսկ «անհաւատնե-  
րին» կ’առաջարկէինք կարդալ այդ հաս-  
տուածները, կարդալ ոչ արտաքին քառերի  
հասկացողութեամբ, այլ մտքի, էութեան:  
Մարդկային նորին բարդ է, բազմակողմանի  
նորա ըմբռնումների, ապրումների ծեւերն  
ու կերպերը. նոցանից իւրաքանչւրը իւր  
արտայալութեան լեզուն եւ առանձնա-  
լատկութիւններն ունի: Այլ է բանաստեղ-  
ծութեան լեզուն եւ այլ փիլիսոփայութեան,  
այլ է նկարչութեան միջոցներն ու արտա-  
յալութեան ծեւերը եւ այլ նարտարապե-  
տութեան, երաժշտութեան: Օրինակով խօ-  
սննք: Բանաստեղծը կնոջ աչքերը նմա-  
նեցնում է ծովի խորութեան, երկնքի մար-  
րութեան, կապոյտին, որ իւրաքս սխոլ է  
եւ անհամապատասխան իրականութեան:  
Մեր հայրերը հայ տաճարների զմբէթները  
անուանել են «երկնանման խորան», գոթա-  
կան նարտարապետութեան աշտարակները

արուեստագէտի աչքում հոգիների թռիչքն  
է, սլացումը դէպի երկնայինը, վերացականն  
ու բնազմանցականը, որ իւրապէս ոչ միայն  
նիշդ չէ, այլ եւ անհեթեթ է: Ով երաժշտու-  
թիւնից հասկացողութիւն չունի, նորա մէջ  
ոչ լուսնի ծագումը կը տեսնի, ոչ ծովի ա-  
լիքների ծփանքը խաղաղ: Նուրք, լինական  
անօթին, որ գողում է, կարծես, երք ծեռք  
ես տալիս, եւ հնչում զանգակի նման, եթէ  
կամենանք դարբնի մուրմով ցանկացած ծե-  
ւը տալ, կը փշուի, կը փոշիանայ: Այսպէս  
էլ կրօնական ապրումները, որ բարձրա-  
գոյնն է ու նշանակալիցը, նուրքը հոգեկան  
ապրումների մէջ, իւր արտայայտութեան  
ուրոյն լեզուն ու եղանակն ունի, հրաշա-  
պատում, պատկերաւոր, ըստ եւեւոյին ոչ  
իրական, բայց ըստ եւորեան ամենամեծ երե-  
մասութիւններ: Ա՞հ, մի՛ մօտենաք նորան  
դարբնի կոշտութեամբ, այդ ազնիւ եւ նուրք  
անօթին, որ հաւատ է կոչւում:

Բ.

Առանց հաւատոյ չկայ բժշկութիւն,  
բարոյական բժեկուրիւն, ոչ հիւանդ ան-  
հատի, ոչ հիւանդ ազգի եւ ոչ հիւանդ մարդ-  
կութեան համար: Այս ահաւոր, տիեզերա-  
կործան պատերազմը մարդկութեան հի-  
ւանդութեան հետեւանք կարելի է համա-  
րել, Աստուծոյ պաշտաման փոխարէն,  
նիւթի պաշտաման անցած: Առանց հաւա-  
տի կեանքը դատարկութիւն է, յուսահա-  
տութիւն եւ մահ: Նա ծակ կարաս է, ա-  
ռանց կարող լինելու բովանդակութիւն  
պահել: Ինչո՞ւ եմ ապրում. այս հարցին  
միայն հաւատոյ լեզուով կարելի է պատա-  
խանել, հաւատոյ տարբեր, բայց ըստ էու-  
թեան, միակ լեզուով: Ապրելու համար  
պէտք է հաւատանք կեանքի էութեան եւ  
նորա նպատակին: Նա մեր ծգտումն է, մեր  
տենչը, դէպի բարձրագոյնը, մեր համոզումն  
է, թէ ի զուր չենք ապրում, թէ պիտի կէս  
մանապարհին չմնանք, այլ պիտի հաս-  
նենք լուսոյ փարոսին, նոյն իսկ մեր ալե-  
կոծ կեանքի փոթորիկներից յևոյ: Հաւա-

որ անհատին, ուղղութեան եւ մարդկութեան դէպի յափառականութիւն է տանում: Ով չի հաւատում յափառականութեան, նա մեռած է արդէն, մեռած է ոչ միայն մարմնով, այլ այն հոգեւոր եւ երանաւէտ կեանքի համար, որ բարոյական կատարելութեան ծզում է կոչում, անսահման տարածութեան հորիզոնների վերայ, երկնքի եւ երկրի մերժեցումը, սիրոյ համբոյը փոխադարձաբար:

Մեր հին ծեռազդիների մէջ անյայտ մի հեղինակի բանաստեղծութիւն ունինք, նոյն իսկ ժողովրդական բանահիւսութեան անցած, գուցէ եւ ժողովրդականից գրաւորին: Մենք հրատարակել ենք այն մօտաւորապէս 45 տարի առաջ հջմբածնի «Արարատ» ամսագրի մէջ, առանց կրկին անդրադառնալու ասիթն ունենալու, ուստի եւ մանրամատնութիւնները թուել են յիշողութիւնից եւ միայն ընդհանուր բովանդակութիւնը մնացել: Երկնքի եւ երկրի վէճն է այն:

Երկինքը պարձենում է մի առ մի թը-ւելով իւր առաւելութիւններն ու գեղեցկութիւնները. այնտեղ են արեգակը, լուսինը, անհամար աստղերը, առաքեալների եւ սուրբերի դասերը, հրեշտակները: Այստեղ է ի վերջոյ Աստուծոյ աթոռը: Երկիրն էլ պատշաճ պատասխաններով իւր գեղեցկութիւններն է յիշում. իւր ծոցից են բուսնում երփներանգ եւ անուշահոտ ծաղիկները, դալարագեղ եւ ակնապարար մարգագետինները, պտղատու ծառերն ու խորհրդաւոր անտառները, իւրն են լեռներն ու ծորերը, զովարար աղբիւններն ու կարկաչուն վտակները, գետակներն ու գետերը, որոնք իրենց շուրջը կենդանութիւն են սըփում, ծովերն ու ովկիանոսները...: Առաքեալներն ու սուրբերն էլ երկրի ծնունդ են եւ միայն իրենց գործով եւ սրբութեամբ երկինք բարձրացել եւ հրեշտակներին խառնւել: Աստուծոյ աթոռը, ճշմարիտ է, երկնքումն է, բայց պատուանդանը երկրի վերայ հաստատուած. վերջապէս, եթէ Աստուծ երկնքումն է, նորա Որդին երկիր իջաւ, մարդկանց մէջ ապրեց, որպէս զի նրանց երկնքի ճանապարհը ցոյց տայ:

Վէճը վերջանում է հաշտութեամբ, փոխադարձաբար իրար առաւելութիւններն ու գեղեցկութիւնները ընդունելով: Երկինքը խոնարհում է դէպի երկիրը, եւ երկիրը

բարձրանում դէպի երկինք իւր լիների սպիտակափառ զագաթներով զրկում են իրար եւ սիրոյ համբոյը տալիս (հորիզոնի գծերով):

Սհա պատկերաւոր կերպով կեանքի էութիւնն ու իմաստը, կատարելութեան, հոգու եւ հոգեւորի անմահութեան ուղին, անհատների, ազգերի եւ մարդկութեան համար, երկիրը դէպի երկինք բարձրացնել եւ խար կապել: Հաւատով լցուած անձնաւորութիւններն են, որ աստուածամերձ նեղուում, ներշնչւում իրենց այդպիսի կոչման եւ առաքելութեան մէջ: Դրանք մնծ կրօնների հիմնադիրներն են, մարգարէներն ու առաքեալները: Տիեզերապարփակ բանաստեղներն ու արուեստագէտները, մնծ քարոզիչները, որ ոտքերը զետնի վերայ, բայց հաւատով եւ սիրով լցուած, սաւառնել են երկնայինի ոլորտներում, իրենց յետեւից տանելով բազմութիւնները: Դրանք մնծ գիտնականներն են, որոնք անսահման աշխատութեամբ թափանցել են անցեալ դարերի խորը, այնտեղից մարդկութեան փորձառութիւնից լոյս եւ ջերմութիւն բերելու նոր սերունդների համար: Այդպէս են մնծ փիլիսոփաններն ու ընագէտները, որոնք խորասուզուելով տիեզերական առեղջրածների եւ բնութեան երեւոյթների վերլուծութեան մէջ, մերձեցել են անսահման ափերին եւ ժամանակի թաւալման խորհուրդներին, սբանչացել նրանց զեղեցկութեան եւ իմաստուն կարգաւորութեամբ, եւ վերանալով, ծունկ չոքել Աստուծոյ փառքի եւ մնծութեան առաջ, երկրորդ Ս. Գիրը տալով, որ բնութեան մնծ գիրքն է, հանրամարդկային նշանակութեամբ: Սհա հաւատոյ այլ եւ այլ երեւոյթները մարդկանց հոգինների մէջ, հաւատոյ անարին մնծ պատերազմը պատմութեան մէջ:

Գ.

Այսօր Թարգմանչաց, Հայ լեզուի, զրականութեան, արուեստի եւ մշակոյթի մնծ վաստակաւուների յիշատակն ենք կատարում, որոնք նման գեր են կատարել Հայ ժողովրդի նկատմամբ, մեր մնծ երախտաւորների եւ լուսաւորիչների յիշատակը: Անցել են հազարաւոր տարիներ, բայց նորա չեն մեռնում, կենդանի են եւ կենդանի պի-

ամ մասն, որովհետեւ ապրել են հաւատով, գործել անմահութեան եւ անմահացնելու գաղափարով:

Ինչո՞ւ էր Ս. Մեսրոպը երկրէ երկիր ընկել, ինչո՞ւ էր այս եւ այն դռները ծեծում, որպէսզի իւր եւ իւր ազգի համար անմահութեան դուռը բացուի: Ինչո՞ւ էր Ս. Մահալը տանջում, տքնում, գիշերուայ լրյու ցերեկի հետ խառնում, Ս. Գիրը թարգմանելով, որովհետեւ հաւատում էր անմահութեան գաղափարին իւր եւ իւր ազգի համար: Ինչո՞ւ բարեսէր Վռամշապուհը իւր գանձի դռները բացած օգնութեան էր համում Հայ զրի զիւտի յաջողութեան, դպրոցների բացման, որովհետեւ հաւատում էր անմահական գանձի գոյութեան եւ լուսոյ թագաւորութեան մշտընքնաւորութեան, աւելի գօրաւոր՝ ազգի պահանութեան եւ ապագայի համար, քան արդէն մեղքուած իւր թագաւորութիւնը: Թարգմանչաց հոյլը դեգիրում է օտար երկիրների լուսաւորութեան կեզրոները, որպէս զի հայրենի երկրում էլ լուսոյ ջահեր եւ զերմութեան հնոցներ վառել կարողանան, որոնք անմար են եւ մշտնքնական, անմար պահելով նոյնը ժողովուրդի եւ հոգու մէջ:

Այս նոյն հաւատով են գործել, աշխատել, աղօթել Նարեկացիներն ու Շնորհալիները, Որոտնեցիներն ու Տաթեւացիները, եւ նոյն գաղափարի համար բազմաթիւ գործողները, որոնց դէմքերը նկարուած են Հայ պատմութեան երկնակամարի վերայ, լուսաւոր աստղերի նման:

Բայց անմահ են ոչ միայն մեծ հոգիները, այլ եւ իւրաքանչիւր հոգի, որ հաւատում է իւր կոչմանը՝ համեստ շրջանակի մէջ անգամ: Կենդանարար աղբիւրներն ու կարկաչուն վտակները, գետակներն ու զետերը, որոնք հոսում են իրենց հովիտներով, եւ առատութիւն ու կենդանութիւն պարգեւում իրենց ափերին, կաթիլներից են բաղկացած: Ապա, ուրեմն, ամէնքն իրենց տեղն ունին, ըստ չափու եւ ըստ կարողութեան: Ժողովուրդն է կենդանի ծառի արմատն ու բունը, որ ծաղիկներ եւ պտուղ է տալիս:

Դ.

Հաւատա՛, Հայ ժողովուրդ, հաւատա՛ քո անցեալին, քո պատմութեան, քո հայ-

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ԶԵՐԱԳՐԱՑ

Հեղինակը. — Բարեկիշատակ Գարեգին Կաթողիկոս Յովակիփեան բախտաւոր եղած է առիթը ունենալով տեսնելու և քննելու աւելի քան երկու տասնեակ հաղարներու հասնող հայերէն հին ձեռագիրներու մեծագոյն մասը: Անիկա վաթսուն տարի շարունակ վազած է մեր նախնեաց մշակոյթի այդ թանկագին նշանաբներուն ետևէն: Իր սէրը հանդէպ ձեռագիրներու, և իր կամքը գուրս բերելու անոնց փոշոտած ծալքերէն մեր անցեալի փառքերուն ցանկալի լըրուագները, կանգ չեն առած որևէ գժուած: Որ ցցուած է իր ճամբարուն վրայ: Իր պատկառաղջու անձնաւորութեան և լուրջ գիտնականի տաղանդին առջեւ գիւրութեամբ բացուած են ձեռագրական այն գանձատունները: Որոնք տարբեր տիպի մարդոց առջեւ իրաւամբ պիտի մային փակուած պարտէզներ:

Գարեգին Կաթողիկոս, կանոնաւոր և յարատեւ աշխատող գիտնական, իր բաղմամեայ հետազօտութեանց ընթացքին, հաւաքած է ի միջի այլոց նաև հայերէն ձեռագիրներու լիշատակարաններ: Իրմէ առաջ և իրեն ժամանակակցաբար գտնուած են ուրիշներ ալ որ ձեռք զարկած են այդ գործին, բայց գժբախտաբար մեծ բան մը չեն կրցած ընծայել հայ բանասիրութեան: Այդ կարգի աշխատաւորներու մէջ իր

ըերի Աստծուն, նրանց անմահ եւ կենդանի հոգուն, եւ դու չե՞ս մեռնի: Տե՛ս, կոյրերը բժշկում են հաւատով, անդամալոյժները քայլում, մեռելներն իսկ յարութիւն առնում: Հաւատա՛, թէ պիտի ապրիս, եւ այդ հաւատով գործիր, աշխատի՛ր, տրնի՛ր, յուսա՛... եւ դու չե՞ս մեռնի: Լեզուի, կրօնի, գրականութեան, արուեստի, մշակոյթի պահպանութիւնն ու պաշտամունքը գիտակցական, կենդանութեան աղբիւրն է, եւ հիւանդութեան, մահ պատճառող հիւանդութեան, դեղն ու դարմանը:

«Մի երկնչիր, բայց միայն հաւատա՛»:  
գԱՐԵԳԻՆ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ

պատուոյ տեղն ունի Ղետոնդ Վարդապետ  
Փիրղալէմեան, որ ջանք չէ խնայած հաւ-  
աքելու մեր ձեռագիրներուն յիշատակաւ-  
րանները և ի լոյս հանելու զանոնք: Բայց  
հազիւ փոքրիկ հատոր մը կրցած է հրա-  
տարակել, որովհետև պակսած է անիրաւ-  
մարոնան: Իր զամբանին թեմէն դէպի  
Խրիմեան Հայրիկ իր կտակային ճիշին —  
զերկցոց վաստակ ի լոյս հան ի լոյս — ,  
Սլոնի հովերը միայն ունկնդիր եղած են,  
դժբախտաբար: Գարեգին Կաթողիկոսն ալ  
հազիւ իր կեանքի վերջալոյսին գտաւ Տա-  
տուրեան աղնիւ ամոլը, որ բազմավաստակ  
հեղինակին հայթայթեց միջոցը իր բազմա-  
թիւ տարիներու քրտինքին պտուղը վայե-  
լելու իր աչքերը այս աշխարհին դէմ  
վերջնականօրէն չփակած:

Լուսահոգի հայրապետին կոթողական  
այդ գործին առաջին հատորն է որ լոյս կը  
տեսնէ, մինչդեռ նման երեք հատորներ ևս  
պէտք է գան ամբողջացնելու իր բազմամ-  
եայ տքնութեանց հոյակապ յուշարձանը:

Գարեգին Կաթողիկոս, գիտակից իր  
մեծ գործի բարձր արժէքին, ըրաւ հոգե-  
կան հզօր ճիգեր, որպէսզի իր աչքերը չը  
փակուին նախ քան իր երկարամեայ եր-  
կունքներուն արդիւնաւորումը, որպէսզի  
իր ձեռքերը շօշափեն այն թանկազին գան-  
ձարանը, որուն ճարտարագործման համար  
իր ժիր ժատները այնքան յովնութիւններ  
էին կրած: Եւ սակայն հակառակ իր բուռն  
փափաքին բաժնուեցաւ իր գործէն առանց  
զայն բոլորովին աւարտած ըլլալու:

Գործը. — Յիշատակարանք Զեռագրաց  
տիտղոսով մեզի ներկայացող հատորը կը  
բաղկանայ աւելի քան հազար երկու հար-  
իւր յիսուն սիւնակներէ: Այն կը պարու-  
նակէ չորս հարիւր եօթանասուն և երկու  
յիշատակարաններ, մեծ ու պատիկ, տա-  
րածուած ութ ու կէս դարերու երկարաձիգ  
միջոցի մը վրայ, և դասաւորուած ժամա-  
նակագրական կարգով:

Յիշատակարաններու շարքին կը գլու-  
նըւին նաեւ այլապէս արժէքաւոր պատմա-  
կան և մատենագրական հատուածներ: Ա-  
հաւասարիկ փունջ մը անոնցմէ: 1. — Պատ-  
մութիւն Սրբոյ Նշանին նունէի, Ահարոն  
Վանանդեցի, էջ 9: 2. — Նշանագիր Կար-  
գաց Բանից, Եղինկի երեց, էջ 19: 3. —  
Գիւտ Նշխարաց Սրբոցն Հռիփսիմեանց, էջ

29: 4. — Պատմութիւն Յահաննու Մայրա-  
գոմիցւոյ, էջ 31: 5. — Խրատք Վարուց  
Յովհաննու Մայրավանեցւոյ, էջ 37: 6. —  
Պատմութիւն Ս. Կենսաբերին և Ս. Նշ-  
նին, էջ 169: 7. — Հանդէս Բանի Վան-  
երաննեալ առնն Աստուծոյ Սարկաւազին  
կենաց և Մահուան, էջ 335: 8. — Հարց-  
մունք Վրաց Եպիսկոպոսի ի Հայոց Վար-  
դապետէ Սարկաւազէն, էջ 343: 9. — Յի-  
շատակ սուրբ Հայրապետացն Գրիգորիս-  
եանցն և Պետրոսեանցն, էջ 417: 10. —  
Ժամանակապրութիւն Խճջաթ-ԲՅԼՇ, Քրիս-  
տոսի թուականով, էջ 523-531: 11. —  
Պատմութիւն Վարուց Ներսեսի Եպիսկոպոսի  
Երգոց Սազմոսի Քննողի, էջ 541: 12. —  
Լամբրոնի Եշխաններուն ձագումը, էջ 551:  
Յիշատակարաններու այսպիսի ստուար  
հաւաքում մը կ'ենթազրէ բազմապիսի  
գժուարութիւններ, որոնք կընան հասկնալի  
ըլլալ անոնց միայն որ զբաղած են նման  
աշխատանքներով:

Այս Հաւաքածոյին ուշագրաւ և ար-  
ժէքաւոր մէկ մասը կը կազմին այն բազ-  
մաթիւ ծանօթութիւնները, որոնք կցուած  
են յիշատակարաններուն, զիւրացնելու հա-  
մար անոնց հասկացողութիւնը, վիր հանե-  
լու անոնց արժէքը և օժանդակելու անդ-  
րագոյն հետազօտութեանց:

Առանձնապէս պէտք է յիշել Ահանա-  
նուններու Ցանկը, որ մօտաւորապէս հա-  
րիւր յիսուն սիւնակներ կը զրաւէ: Ասիկա  
պատրաստուած է ամենայն մանրամասնու-  
թեամբ և մեծ խղճմութեամբ, որպէսզի  
ըլլայ ըստ կարելոյն ճշգրիտ և լիակատար:  
Անցողակի ըսենք որ եթէ իւրաքանչիւր  
սիւնակի վերև յիշուած ըլլար տրուած ա-  
նունը, ցանկը աւելի դիւրութեամբ պիտի  
օգտագործուէր:

Այս հաստափոր հատորին պատրաստու-  
թիւնը և հրատարակութիւնը ինքնին հա-  
մազօր է մեծագործութեան մը, և մտա-  
ծել որ ատիկա տակաւին միայն մէկ չոր-  
ըրդին է հրատարակելի երկին: Այսպիսի  
հակայական գործ մը ապահովաբար կոչուած  
է անմահացնելու իր հեղինակին անունը:

Գործակիցը. — Գարեգին Կաթողիկոս  
կրնայ գարձեալ բախտաւոր համարուիլ որ  
իրեն օժանդակ աշխատակից մը ունեցաւ  
յանձին Ցիար Սիմոն Սիմոնեանի, որ լուրջ  
յարատեռութեամբ ըրաւ իր կարելին Վեհա-

փառի ցուցմունքներուն համաձայն պատրաստելու այս հատորը՝ իր աշխատանքի բաժինը մեծ է այս գործին մէջ և յոյժ զանազանի ։ Առանց իր ժրաշան նուիրումին շատ կատածելի է որ ներկայ հատորը այսպիսի խնամեալ ձեռվ կարենայինք ու նեալ այսօր մեր սեղաններուն վրայ։

Հիմա, երբ յաւէտ սղբացեալ մեծանուն Հեղինակը մեկնած է այս աշխարհէն, թիրս լոխն բայց անդառնալի կտակով մը, որ իր գործակիցը նոյն եռանդով հետեւ մեր գործակիցը նոյն եռանդով ալ հրատարակումին, Ցիար Սիմոնեան և Անթիլիասի Պատուարժան Միաբանութիւնը կը սիրենք յուսալ որ պիտի ընեն իրենց կարելի լաւազգոնք, վիրկելու համար հայ մշակոյթի պատմութեան այս թանկագին ատաղձները և հրճուեցնելու հոգին անոր, որ այդ մշակոյթին բոցավառ ջահը պատցուց երկրէ երկիր վաթսուն տարի շարունակ, և ի վերջոյ իր կեանքը սպառեց Անթիլիասի Դրաբեկանքը մշակութային կեդրոն մը դարձնելու իր վսեմ տեսիլքին մէջ։

Ցիար Ս. Սիմոնեան իրաւունք ունի ակնկալելու հայ ժողովուրդի բոլոր գիտակից տարրերէն որ ընծային իրենց բարոյական և նիւթական լիաբուռն օժանդակութիւնը, կառուցանելու համար գրական այս փառապանծ և անխորտակելի յուշարձանը, իրեւ յաւերժական կոթող անզուգական դարեգին կաթողիկոս Ցովոէփեանի անմահական յիշատակին։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ



## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՒ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ռ Ն Ե Ր

Երեւան, 27 Յունի 1952

Գեր. Տ. Եղիշէ Ս. Արքեպա. Տերեւեան

Պատրիարքական Տեղապահ

Ս. Երուսաղէմի

Նորին Մրբուրիս Պարեզին Ա. Կիլիկիոյ Կարողիկոսին մահը ի խոր խոցեց զմեզ, մեր Միաբանութիւնը եւ հաւատացեալ ժողովուրդը։ Հանգուցեալին կորուսը անփոխարինելի է հայ ժողովուրդին համար։ Կիլիկիոյ Արքուը կը կորսնցնէ իր պայծառ ասզը, Հայ Եկեղեցին իր հաւատարիմ եւ նուիրեալ ծառան, հայ ժողովուրդն ու Հայրենիքը իրենց հայրենաւե ու սիրելի զաւակը եւ հայ մահոյը իր մեծ մօակը։

Աղօքենք ի արէ որ յաւէ անալօս մեայ լիւատակը հանգուցեալ Հայրապետին, մեր Կարողիկոսարաններու, Պատրիարքաններու եւ առաջնորդական թեմերու բոլոր ներկայացուցիչներու հոգիներուն մէջ, հաւատարիմ մնալու միասնական Հայ Եկեղեցւոյ խորհուրդներուն, դաւանուրեան, ազգային Միուրեան եւ Եկեղեցեաց անկախութեան սկզբունքներուն եւ գաղափարներուն, որոնք մեզի եկած են մեր երանեալ Ս. Հայրապետեւեն եւ նախնիքներեն, եւ որոնց հաւատարիմ մնացած ըլլալու ընուհին և որ կը տարունակենք մնալ իրեւ ազդ եւ Եկեղեցի։

Այսու կը համանգենք մատուցանել Ս. Պատարաց եւ կատարել հոգինանգստեան պատօն ի հանգիս իր պատուական եւ յաւէ անմուաց հոգւոյն։ Խճչէս նաև պատան դամբանականով վեր հանել իր բազմեւես արծանիքները, անզամ մը եւս ի յուռ եւ ի զիսուրին մերազն հաւատացեալ ժողովուրդին։

ԳԵՈՐԳ Զ.

Կարողիկոս Ամենային Հայոց

Երևանի, 28 Յուլիս 1952

Նորին Ս. Օծուրիս Տ. Տ. Գեղր Զ.

Կարողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Սահանք Ձերդ Ս. Օծուրեան նեռազիրը:  
Ս. Յակոբեանց բովանդակ Միաբանութիւնը  
եւ Յորդանանի հայ զաղուրը դառնազինս  
կ'ողբայ մահը Գարեգին Կարողիկոսի: Եկեղեցին  
եւ ազգը յանձնինս հանգուցեալ Վեհափառին կ'ունենան անդամաննելի կորուս  
մը, անոր որ մեր մշակոյրի մեծ եւ նուիրեալ մշակենեւն մին կը մնար:

Համաձայն Ձերդ Մրգութեան հրանագին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Հոգեհանգստեան հանդիսաւոր պատրապ, Նորին Ս. Օծուրեան հոգույն ի հանգիստ: Դեր. Տեղապահ Մրգազանը անմիշապիս Պէյրուր մեկնեցաւ, մասնակցելու յուղարկաւորութեան:

Կ'աղօթենք որ ամենասովորած Տէրը  
պահէ Հայաստանեաց Ս. Եկեղեցին, զՄայր  
Արքուն Էջմիածին, եւ Ձերդ Մրգութեան  
պարզեւէ Երկար եւ արդինաւաս տարիներ:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԷՄՇԱՋԵԱՆ  
Վասն Պատրիարքական Տեղապահի  
Ս. Երևանակմի

Պէյրուր, 1 Յուլիս 1952

Դեր. Տ. Առւելն Եպո. Քեմիանեան  
Վասն Պատրիարքական Տեղապահի  
Ս. Արքունոյ  
Երևանակմի

Հանոյին ունինք Տեղեկացնելու Ձեզ Կարողիկոսական Տեղակալի ընտրութիւնը յանձնինս Խաղ Արքեպիսկոպոսի:

ՁՈՒՌԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Ամենապես Միաբանական Ընդհ. Ժողովի

Երևանի, 2 Յուլիս 1952

Դեր. Տ. Խաղ Արքեպո. Ազարանեան  
Հայոց Կարողիկոսաւորան

ԱՅԲԻԼԻԱ

Կարողիկոսական Տեղապահի Ձեր ընտրեան առքիւ, Ս. Յակոբեանց Միաբանութիւնը կը ներկայացնէ իր շերմ ընուհաւորութիւնները Ձերդ Գեղաւուրնութեան եւ կ'աղօթէ Ամենազօրին որ պարզեւէ Ձեզ զօրութիւն եւ յաջողութիւն Ձեր նոր պատասխանաւորութեանց մէջ:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԷՄՇԱՋԵԱՆ  
Վասն Պատր. Տեղապահի Ս. Արքունոյ

Հանեցեալ ցաւակցական հեռազիրը դրկուած է Պ. Այրէս:

Երևանի, 11 Օգոստ 1952  
Արքին Գործոց Նախարարութիւն

Պուենոս Ալեքս

Հանեցեկ մեր յարգալիր ցաւակցութիւնները հաղորդել Նորին Վ. Ասմուրին Նախագահ Բերոնին, իր ազնուափայլ Տիկնոց ամբարմանելի կորուսան առքիւ, որու օհնեալ յիշաւակը տեւապէս պիտի յարգուի Հայամայնին կողմանէ: Հոգեհանգստան մասնուր Ս. Պատրապ մատուցինք մեր Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ ի հանգիստ ի հոգուոյն:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍ ՏէՐՏէՐԵԱՆ  
Տեղապահ Ս. Արքունոյ

ԵԿԵՂԵՑՈՒԹԵԱՆ ԳՐԱՄՈՒՆՈՒՐ

● Կիր. 22 Յունիս. — Տօն Կարուղիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածին: Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Պատարագեց Տ. Միւռուն Վ. Վ. Կրժիկեան Հոգուութիւնը կատարած գերբ մեր աղային ու կեկվեցական կեանքերէն, ներս Ապատուակ կենուագրականը նորոգ հանգուցեալ Տ. Տ. Գարեգինի կաթողիկոսի Մեծի Տաճար կուրիկոյը Հոգուութիւնը մեր ընկերութիւնը կանգուցեալ Վեհափառի մեր ընկերութիւնը ի հանդիսաւոր Ս. Պատարագը Մեծ գործերը Ապա, նախազահութեամբ Գեր. Տ. Մուրէն Արքեպոս Մանասնակի կատարաւութիւնը հանդիսաւոր կատարուեցաւ հոգեհանգստան հանդիսաւոր պաշտամունքը հանգուցեալ Վեհափառութիւնը ի հանդիսաւոր Ս. Պատարագին հայապատէան սրբավայրեւու մէջ ևս կատարուեցան հոգեհանգստան արարողութիւնները:

● Կիր. 29 Յունիս. — Բարեկենդան Ս. Լուսաւորչի պահոց: Ս. Պատարագը, Ս. Յարութեան Տաճարի Բ. Գողզպթայի մեր վերնայարկ մատրան մէջ մատոյց՝ Հոգ. Տ. Կիւրեղ Արք. Պարիկիսան:

● Ուր. 4 Յուլիս. — Երեկոյեան ժամերգութենէն ետք, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մեծավայրեւու կերպով կատարուեցաւ Ս. Դիքոր Լուսաւորչի նախատօնը: Հանդիսապետն էր Գեր. Տ. Մուրէն Արքաղան:

● Ծր. 5 Յուլիս. — Մրցոյ Հօրն մերոյ Գրիգոր Լուսաւորչին (Փիս Խշաւաց): Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, իր անդրանիկ պատարագը մա-

ույլ Հոդ. Տ. Գէորգ Արզ. Նազարեան, որ քա-  
շառական օրերէ ի վեր կը մնար Ո. Յարութեան  
Տաճարին մէջ:

• Կիր. 6 Յուլիս. — Ա. Պատարագը՝ Ա. Յա-  
րութեանց Մայր Տաճարին մէջ մատոյց՝ Հոդ. Տ.  
Պիտոն Վեդ. Կրժիկեան, Վարժիչն ու ուսուցիչն  
Նըրնձայ Գէորգ Արզ. Նազարեանին:

• ԲՀ. 9 Յուլիս. — Երեկոյեան Ժամերգու-  
թիւնն ու վաղուան տօնին հանդիսաւոր Նախա-  
ռան պաշտուեցաւ Ա. Յակորեանց Մայր Տաճա-  
րին մէջ, Նախագահութեամբ Գեր. Տ. Նորայր Եպս.  
Խոշիքանի:

• ԵՀ. 10 Յուլիս. — Մրցա Թարգմանչաց Վար-  
դապետացն մերց, Նախակայ եւ Մերապայ: Հանդի-  
ւառ Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յակոր-  
եանց Մայր Տաճարին մէջ: Ըստ սովորութեան  
այսօ Ա. Պատարագը կը մատուցանէ Ա. Աթոռոյու  
Մրցա Թարգմանչաց Վարժարանի Հազելնորհ Տե-  
սուլը: Առաջին Ա. Պատարագը մատոյց նորընտիր  
Տեսուէ Հոդ. Տ. Կիրերը Արզ. Գարիկեան:

Օրուան տօնին ու խարջուրդին շուրջ քարո-  
ղց Հոդ. Տ. Հայկազուն Վեդ. Արքահամեան, որ  
անզրադառնալով գրոց գիւտի և Ա. Թարգմանիչ-  
ներու գործին, պարզեց անոնց հետագայ մեր  
կեանքին վրայ ձգածնչանակութիւնն ու արժէքը:

• ԵՐ. 12 Յուլիս. — Երեկոյեան Ժամերգու-  
թիւնն ու վաղուան տօնին Նախատօնակը պաշ-  
տուեցաւ Ա. Յակորեանց Մայր Տաճարին մէջ:  
Հանդիսապետն էր Գեր. Տ. Սուրբէն Եպս. Քէմհաճ-  
եան:

• Կիր. 13 Յուլիս. — Գիւտ Տիմ. Ա. Ասուա-  
ծածին: Առաւտօեան Ժամը Ցին, Միարանութիւնը՝  
Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեանի գիւտաւորու-  
թեամբ, իշաւ Գեթսեմանի Հայոց պարտէզը ու  
քանի մը վայրկեաններ վերջ՝ Ա. Ասուածածնայ  
Տաճարը: Ա. Պատարագը՝ Ա. Կոյսի Գերեզմանին  
վրայ մատոյց՝ Հոդ. Տ. Հայկազուն Վեդ. Արքա-  
համեան:

• Ուր. 18 Յուլիս. — Երեկոյեան Ժամերգու-  
թիւնն ու վաղուան տօնին Նախատօնը պաշտուե-  
ցաւ Ա. Յակորեանց Մայր Տաճարին մէջ, Նախա-  
տօնաթեամբ Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեանի:

• Եր. 19 Յուլիս. — Մրցա Երեսաան Առաքե-  
յացն Քրիստոն եւ Պօղասի Երեսաաներորդ Առաքելոց: Ա. Պատարագը՝ Ա. Պողոս - Պետրոս վերնայարկ  
մատրան մէջ ի Ա. Յակոր մատոյց՝ Հոդ. Տ. Պարզե.  
Վեդ. Վրթանէսեան:

• Կիր. 20 Յուլիս. — Բարեկենդան Վարդապայի  
Պահոց: Ա. Պատարագը՝ Ա. Յարութեան Տաճարի  
Բ. Գողգոթայի մեր վերնայարկ մատրան մէջ մա-  
տոյց՝ Հոդ. Տ. Միւռոն Վեդ. Կրժիկեան:

• Ուր. 25 Յուլիս. — Երեկոյեան Ժամերգու-  
թիւնէն Եպք. Ա. Յակորեանց Մայր Տաճարին Կիր  
Ա. Էջմիածնայ մատրան մէջ Կատարուեցաւ վաղ-  
ուան տօնին Նախատօնակը, Գեր. Տ. Սուրբէն Եպս.  
Քէմհաճեանի հանդիսապետութեամբ:

• Եր. 26 Յուլիս. — Տօն Տապամակին: Ա. Պա-  
տարագը՝ Ա. Էջմիածնայ մատրան մէջ մատոյց՝  
Հոդ. Տ. Յակոր Վեդ. Վարդանեան, Յես միջորէի  
Ա. Յակորեանց Մայր Տաճարին մէջ կատարուե-  
ցաւ Վարդապատի հանդիսաւոր Նախատօնը, Գեր.  
Տեղապահ Ա. Հօր գլխաւորութեամբ: Իսկ իրիկ-  
ուան, Ա. Յակորեանց Մայր Տաճարին մէջ զար-  
ձեաւ, Կատարուեցան Եկեսցէի և Հումեանց ա-  
րարողութիւնները, որոնց կը Նախագահէր Գեր.  
Տ. Սուրբէն Եպս. Քէմհաճեան:

• Կիր. 27 Յուլիս. — Վ. Աթավ. Ա. Ա. Տօն Ալլա-  
կերպիրեան Տեան: Հանդիսաւոր Ա. Պատարագը՝  
Ա. Յակորեանց Մայր Տաճարին մէջ մատոյց՝ Գեր.  
Տ. Սուրբէն Եպս. Քէմհաճեան, իսկ զպրաց դասը,  
Գեր. Տ. Սուրբէն Արքապս, Մանասեանի Եկեսպա-  
րութեամբ, Կ'երգէր Եկմահեանի զախաւորած  
բազմաձայն առող պատարագը: Որուան քարո-  
ղին էր պատարագի Սրբազնը, որ խօսեցաւ  
Եետեալ բնաբանով, «Համբարձին զախ իւր-  
եանց և ոչ ոք տեսին, բայց միայն զթիուու»:

• ԲՀ. 28 Յուլիս. — Յիւտակ Մեներօց: Ա. Պա-  
տարագը՝ Ա. Յակորեանց Մայր Տաճարին Ա. Գըլ-  
իսաղրի մատրան մէջ մատոյց՝ Հոդ. Տ. Զաւէն  
Արզ. Զինչինեան: Ապա, Կատարուեցաւ օրուան  
յատուկ հոգեւանգստեան կարգը, որ կրնաւեցաւ  
Երանաշնորհ Տ. Կիրերը Բ. Ա. Պատրիարք Հօր  
շիրմին, ինչպէս նաև հին կրատան և Չամ-թաղի  
հողագամբաններուն վրայ:

• Ուր. 1 Օգոստ. — Երեկոյեան Ժամերգու-  
թիւնն ու վաղուան տօնին հանդիսաւոր Նախա-  
տօնակը պաշտուեցաւ Ա. Յակորեանց Մայր Տա-  
ճարին մէջ: Հանդիսապետն էր Գեր. Տ. Նորայր  
Ս. Եպս. Պողարեան:

• Եր. 2 Օգոստ. — Ա. Թայեսոփ Արք. մեր  
Եսնիխայ կրասին: Ա. Պատարագը մատուցուե-  
ցաւ ի Ա. Գլխաղիր: Պատարագից Հոդ. Տ. Օշ-  
կան Արեղայ Մինասեան:

• Կիր. 3 Օգոստ. — Ա. Պատարագը՝ Ա. Յա-  
րութեան Տաճարի Բ. Գողգոթայի մեր վերնայարկ  
մատրան մէջ մատոյց՝ Հոդ. Տ. Կիրեր Արեղայ  
Գարիկեան:

• Կիր. 17 Օգոստ. — Ա. Պատարագը մատուց-  
ուեցաւ ի Ա. Հընչուակապետ: Պատարագից Հոդ.  
Տ. Պարզե Վեդ. Վրթանէսեան, Յաւարտ Ա. Պա-  
տարագի, Գեր. Տ. Նորայր Սրբազնի հանդիսա-  
պետութեամբ առեղի ունեցաւ հիաղողորնէքի  
արարողութիւնը:

• Կիր. 24 Օգոստ. — Բարեկենդան Առեր Առուա-  
ծածին պահոց: Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա.  
Պարութեան Տաճարի մեր Բ. Գողգոթայի վեր-  
ջարակ մատրան մէջ, Պատարագին էր Հոդ. Տ.  
Նորայր մատրան մէջ, Պատարագին էր Հոդ. Տ.  
Զաւէն Արեղայ Զինչինեան:

ՀՈՎԵԿԱՆԳԱՏԵՐՆ Ա. ՊԱՏԻՇՎԱՅՐԸ

ՎԱԵՄ. ՏԻԿ. ՆՈՒԱՐԴ ԿԻՒԼՈՒՆԿԵԼԻՆ

\* Եր. 9 Գոռառոս. — Այսօր մատուցուեցաւ  
հոգինանզստեան Ա. Պատարագ Ա. Յակովիեանց  
Մայր Տաճարի Ա. Գլխազդրի մատրան մէջ, Ա. Ա-  
թոռոյ մեծ բարերար Վահմ. Գալուստ Պէջ Կիւլ-  
պէնիեանի տիկնոջ, Ազն. Տիկնոջ Նուրբջ Կիւլ-  
պէնիեանի մահուան քառասունքին առթիւ. Պա-  
տարագեց Հոգ. Տ. Պարզե Վըր. Վրժանէսեան:  
«Տէր Ողորմեաւէն առաջ, Դեր. Տ. Սուրբն եպս.  
Քիմհանեան խօսեցաւ Վահմ. Տէր Կ Տիկին Կիւլ-  
պէնիեան ամսլին կեանքին և բարեսիրական  
գործունէութեանց շուրջ, վերբերելով Տիկ. Նը-  
ւարդ Կիւլպէնիեանի նշարագրին ազնիւ զծիրը,  
Գեր. Որբազանը խնդրեց Աստուծմէ որ նման  
ազգանուէր ու եկեղեցակը հոգիներ յարու-  
ցանէ ազգին մէջ: Յաւարտ Ա. Պատարագի կա-  
տարուեցաւ հոգինանզստեան արարողութիւն:  
Այս նախագահէր Դեր. Տ. Սուրբն Ա. Եպս. Քէմ-  
հանեան:

ԵՐԱՆԱԿԵՐՈՐԴ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԽԱՅՉԱՆ

● Կիր. 10 Օգոստոս. — Մեծի Տանն կիւիկիս  
կաթողիկոս Տ. Տ. Դարերին Ա. ի մահուան քա-  
ռասաւնքին առթիւ, Ս. Յակոբը անց Մայր Տաճարի  
Աւագ Խօսանին վրայ կատարուեցաւ եպիսկոպո-  
սական Ս. Պատրարք՝ Պատարագեց Գեր. Տ. Նո-  
րայր Եպա. Պողաբեան: Գեր. Արքազանը քարո-  
զեց, զրուտատելով Երանեալնորհ Հայրապետին  
դրական, դիտական, եկեղեցական ու հայրենա-  
սիրական արժանիքները մեր ծաղովուրդի կեան-  
քէն Ներս. Հազեհանգտեան արարողութեան  
Նախագահեց Գեր. Տեղապահ Արքազան Հայրը:  
Ս. Քաղաքիս Բալը միւս հայտատիկան Ալբ-  
րայլարերու մէջ ևս կատարուեցաւ հոգիւան-  
դըստեան պաշտօն:

Digitized by srujanika@gmail.com

• ԲՀ. 23 Յունիս. — կ. ա. ժամը 8.30ին,  
Դեր. Տ. Սուրեն Ա. Ապո. Քէմիանեան, լնկիքը ակ-  
ցութեամբ Հազ. Վարդպապետաց, բացումը կատա-  
րեց Ա. Թ. Վարդարանի Անդամության համար.

— Կ. Վ. Ժամկե 3-30ին, Կեր. Տ. Առուբէն Ա. Արքեպօս. Մանաւեան, օգային գծով մեկնեցաւ Վշիրութ, Ներկայ Կանուելու Ն. Ս. Օ. Տ. Զ. սեպին Առաջ.

• 72. 25 Յունիս. — Կ. ա. ժամը 10 ին, ի  
դիմաց կեր. Տեղապահ Ա. Հօր. գել ը

Ս. Եպօ. Քէմնածեան և Հոդ. Տ. Հայրիկ Գրիգոր Ալանեան, Ներկայ գտնուեցան հերմակ Հայրեան St. Anne եկեղեցոյ մէջ, տեղւոյ թանաւական Ընդհ. Հիւպատոս M. René Neuville-ի ղարկաւորութեան:

• Պ. 2 Յուլիս. — Կ. Վ. Ժամը Եին, Քամականէն օպային ճամբրով քաղաքու ժամանեց Ա. Ա. թռուսոյ Միաբան. Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պատման. Հոգ. Հայրը Քամակոս զրկուած. էր վարչական կարգ ըստ գործերու կարգագրութեան համար:

● Ուր. 4 Յառլիս. — Կ. վ. ժամը 6ին, ի դեպք Գեր. Տեղապահ Ս. Հօր, Գեր. Տ. Առաքէն եղան, Քէմանեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրի Վ. Պղ. Առանեանսի, Հոգ. Տ. Հայրասեր Վրդ. Պարամեանի և Տիւար կ, Հինգլեանի, ընդպատճեալով տրուած հրաւերին, ներկայ գտնուեցան Մայզեալ նահանգաց անկախութեան 175րդ տարինիցից առթիւ քաղաքին Ամերիկեան Ընդհանուր Հիւապատուարանին մէջ սարքուած ընդունելութեան:

● 92. 15 Յուլիս. — Կ. գ. ժամը 7ին, Կեր.  
եղապահ Ա. Հայրը և Կեր. Տ. Ռուբէն Ա. Արք.  
անասեան վերադարձան Անթիլիասէն ուր զա-  
ած էին յատկապէս Ներկայ գոնուելու Հզիցոյ-  
. Տ. Գարեգին Կաթողիկոսի վերջին օժման և  
աղման արարողութեանց մասնակիութեան:

• бг. 17 8 азтб. — ү. м. ժամը 11.30ին:  
Եր. Տեղապահ Ս. Հայրը ընդունեց այցելութիւնը  
և հիքական Ընդհանուր Հիւապատուին որ իրեն  
ըրկայացուց նորընտիր Փախչէ Հիւապատու:

● № 21 Յուլիս. — Կ. ա. ժամել 9ին, ի զից  
Կերպ. Տեղապահ Ս. Հոռ, Հոգ. Տագ. Տայըթիկ Վըզ,  
Լանեան Ներկայ Գոնուեցաւ Ֆրանչչիսկի ան-  
ոնաւորներու Եկեղեցւոյն մէջ կատարուած զե-  
րանական մաղթանքին, Պելճիքայի ազգային  
նին առթիւ.

— Կ. ա. ժամը 10ին, Գեղը. Տեղապահ Ս. Հայրը  
ընդունեց այցելութեւնը Ֆրանսական նորընտիր  
Ընդհանուր Հիւպատառուն:

— Կ. վ. ժամը Հին, Գեր, Տեղապահ Ա. Հայրը:  
Կերպակութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վըր. Ասլան-  
ի և Տիար Կարպիս Հինգլեանի, Ներկայ զբա-  
ցան Պելճքական Ընդհանուր Հիւպատոսա-  
րին մէջ սարքուած ընդուռելութեան, Պելճ-  
ի ազգային տօնին առթիւ:

● 72. 23 Տռւլիս. — կ. ա. ժամը 10ին, Գեղ.  
ապահ Ս. Հայրը, Ընկերակցութեամբ Հօգ. Տ.  
ըիկ Վ. Պատանեանի և Տիքար Կարպիս Հին-  
ին, Ներկայ գտնուեցան Հապէշ Հիւպատոսա-  
ին Կողմէ Ալ-Զահրա պանդոկին մէջ տրուեծ

աղոնելութեան, Եթովպիոյ Հայէկ Սելասիմ Ա. յանք ծննդեան տարեղարձին առթիւ:

• Եշ. 31 Օգոստ. — Կ. վ. ժամը 3ին, Գեր. Հայրը վանական զործերով մեկնեաւ իսրայէլ վերադարձաւ ԴՀ. 5 Օգոստ. Կ. վ. ժամը 3ին:

• Եշ. 4 Օգոստ. — Կ. վ. ժամը 4ին, Հոգ. Տ. կազակացւն Վրզ. Արքահամեան օդային ճամբով նեցինեցաւ Պէյրութ, Ա. Աթոռոյոյ Ժառանգաւորաց ժամբանին յառաջիկայ զպրոցական տարեանին համար նոր աշակերտներ հաւաքելու, իրավարագարձաւ ԲՀ. 28.8.52, Կ. վ. ժամը 7ին:

• Կ. Գ. 5 Օգոստ. — Կ. վ. ժամը 5ին, Ամերիկաց Առաջնորդ Ա. Աթոռոյոյ միաբան Գեր. Տ. անձիքան Արքեպոս, Ներսոյեան օդային ճամբով Պէյրութին ժամանեց քաղաքու և մեկնեցաւ Ար. 8 առջատ. Կ. ա. ժամը 9ին:

• Եշ. 12 Օգոստ. — Կ. ա. ժամը 11.30ին, Գեր. Լայնեպահ Ա. Հայրը, Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Պէյրիայի Վրզ. Ալանեանի և Տիար Կարպիս Հինդմիկանի, փոխայցելութիւն տուաւ Գրանսական ընդուրմատիր Ընդհանուր Հիւպատոսին, Հիւպատորանանի շնչքին մէջ:

• Եշ. 14 Օգոստ. — Կ. վ. ժամը 3ին, Գեր. Տ. պէյրութին Եպս. Քէմհանեան և Հոգ. Տ. Միւռոն Վրզ. Պէյրիայի կալուածական զործերով նոր նրուսամ (ԱՀ (իսրայէլ) մեկնեցաւ Վերադարձանի դահլիճին մէջ:

• Եշ. 15 Օգոստ. — Կ. վ. ժամը 4.30ին, Գեր. Լայնեպահ Ա. Հայրը Ընդունեց այցելութիւնը Հաւաչքից Եպիկոպոսին, պատրիարքարանի դահլիճին մէջ:

• Եշ. 20 Օգոստ. — Կ. վ. ժամը 4ին, Տեղու և յօթ թունաց Պատրիարքարանին Լուսաբարապետ ըլի, Արքանատրիթ Թաթէոս Թէլէթաքիսի յուղարաւու կարուստեան մեր կողմէ ներկայ գտնուցան, ի համ զիմաց Գեր. Տեղապահ Ա. Հօր, Գեր. Տ. Սուրէն պո. Եպս. Քէմհանեան, Հոգ. Տ. Հայրիկ Վրզ. Ալանեան եան, Հոգ. Տ. Հայկասեր Վրզ. Պայրամեան և որ. Հոգ. Տ. Կիրեղ Արզ. Գարիկնեան:

• Եր. 23 Օգոստ. — Կ. վ. ժամը 3ին, Հոգ. Տ. Տ. Կիրեղ Արեղայ Գարիկնեան նոր նրուսալէմի մեկնեցաւ պատարագելու:

• Եշ. 25 Օգոստ. — Կ. վ. ժամը 3ին, Գեր. Տ. Տեղապահ Ա. Հայրը, Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Միւռոն Վրզ. Կիրիկեանի և Տիար Կարպիս Հինդմանի կալուածական զործերով մեկնեցաւ նոր նրուսալէմ և վերադարձաւ Եշ. 28 Օգոստ. 1952, Կ. վ. ժամը 3ին:

• Եր. 30 Օգոստ. — Կ. ա. ժամը 10.15-էն մէկ սկզբանի, Գեր. Տեղապահ Ա. Հայրը, Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրզ. Ալանեանի և Տիար Կարպիս Հինդմեանի, Գուրապան Պայրամի առթիւ, թոր. Քարհաւորական այցելութիւններ տուաւ քաղաքին Մութասարբը ինքնութասարբըին, Աստիկանապետին, Քաղաքական և լիբանանեան Բնդէ. Հիւպատոսին:

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Աթոռէն Ներս

Թէկ. Ա. Քաղաքին հորիզոնին վրայ մութամպեր չեն փարատած տակաւին, ու տնտեսական մեր տաղնազը կը շարունակուի, սակայն և այսպէս զպրոցական և առնասարակ մշակութային կեանքը Ա. Աթոռէն ներս և Յորդանանի հայաբնակ կեղործներուն մէջ կը շարունակուի անխափան: Ու մէկ ճիզ ու զոհողութիւն կը ինայդուի մատար սերունդի հոգեւոր և բարոյական գաստիարակութեան զործը կանոնաւորապէս յառաջ տանելու համար:

Նոյն կանոնաւորութեամբ յառաջ կը տարուի նաև Ա. Աթոռոյոյ զոյզ վարժարաններու մարդական կեանքն ալ:

## ԳԱՇԱՀԱՆԴԵՍ Ա. ՔԱՐԴՄԱՆՁԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Կիր. 13 Յուլիս 1952-ին, Ժառանգաւորաց Վարժարանի մարզագալաշտին վրայ տեղի ունեցաւ Ա. Թ. Վրժ. ի տարեկան զաշտահանգէսը: Կը նախագահէր Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն, մերազն ժողովրդեան, օտար համայնքներու կրօնապետներու և բարձրաստիճան զննուորականներու, Յաջորդագարար տեղի ունեցան զանազան մարզանքներ, վաղքեր, երկար և բարձր սոսում, զրոշարչաւ, պարանաձգութիւն, լախտախաղ, զուարձախաղեր և բուրգեր: Աշակերտութիւնը բաժնուած էր Երեք խումբերու, որոնք Կառաջնորդութիւն խօրապետներէ: Ամբողջ աշակերտութիւնը կը հետեւէր խաղերուն խանդավառութեամբ և օրինակելի կարգապահութեամբ:

Մասնաւոր յիշատակութեան արժանի են Արծուիկներու խումբը, հակառակ պայմաններուն աննպաստ Ըլլալուն, տեսչութիւնը կարող եղած էր համազգեստաւորել աւելի քան հարիւր աշակերտութիւներ:

## Ա Ա Վ Ե Ր Զ Ի Հ Ա Ն Դ Է Ս Ա. ՎԱՆԿԱՊԱՐՏՔՅԱ ԲԱԺՆԻՆ

Եաբաթ 12 Յուլիս 1952 թ. մ.-ի ժամը 4-ին, տեղի ունեցաւ Ա. Թ. Վ. ի Մանկապարտէզի բաժնին ամալիերի հանդէսը, Ժառանգաւորաց Վարժարանի բակին մէջ, հինաւուրց մայրիի շուքին ներքիւ, նախագահութեամբ Գեր. Տ. Նարայը Ա. Եպս. Պօղարեանի, ի ներկայութեան Ա. Յակոբոսի հոծ բազութեան: Ցաղողութեամբ կատարուեցան երգեր, արտասանութիւններ, մեներգներ, պարեր, և լն, որոնք յայտաբար նշաններն էին Տեսչութեան ու Մանկապարտէզի ուսուցչական կազմին տարուան մը տքնածան աշխատանքներն դառնաւակութեամբ Կ'արձանագրենք այսուեղ թէ Վարժարանին Մանկապարտէզի բաժնին այս տարի 52 չըշահաւարտներ Կ'ունենայ: Հանդէսը փակուեցաւ Գեր. Տ. Նարային հագահ Նար մաղթան քներովն ու օրինութեամբ:

## ԱՄԱԳԵՐ ԶԻ ՀԱՆԴԻՍ

Ս. Թ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԲԱԺՆԻՆ

Կիր. 20 Յուլիս 1952 թ. Մ. ժամը 4ին, ե. Հ.  
Բարեսիրական Միութեան սրահին մէջ տեղի ու-  
նեցաւ Ա. Թ. Վարժ. ի ամագերքի հանդեպ, Նախա-  
զառութեամբ Կիր. Տ. Եղիշէ Արքեպօս, Տէրաքր-  
եանի Հանդէսը հատարուեցաց մեծ շուքով և ի  
ներկայութեան Մ. Ցակորեանց Միաբանութեան  
և ժողովուրդի խուռան բազմութեան վարագոյրի  
բացումին՝ երգուեցաւ յանձնայս Արք զարգա-  
րեցին Տնօրինաբարը Թարգմանչաց շարականը,  
յորմենետէ տեղի ունեցան արտասանութիւններ,  
երգեր, և արամախօսութիւն մը Յ. Օշականի  
«ԱՅՆ ՈՐԾՈՒԽՆ» նորընտիր Հոգ. Տեսուչը, կար-  
գաց տարեկան տեղեկագիրը: Ստորև կը զնենք  
զայն ամբողջութեամբ: Արտի խորունկ զուռենա-  
կութեամբ մը Կ'արձանագրենք այստեղ թէ, այս  
տարի ևս Ա. Թ. Վարժարանը ազգային ու կրօ-  
նական ոգիով լեցուն ու ինքնազիտակից 33 ըն-  
թացաւարտներ կը նուիրէ աղդին:

Տեղեկագրի ընթերցումէն վերջ տեղի ունե-  
ցաւ վկայականաց բաշխումը Զեռամբ Կիր. Տե-  
ղապահ Սրբազն Հօր, «ը իր փակման խօսքին  
մէջ ի միջի այսոց ըստը. — «Սիրելի ընթացա-  
ւարտ սան ու սանուելիներ, 2 եղմէ շատերուն  
համար և թերիս ըստ ինքեան ալ: այս վկայա-  
կանները մեծ արժեք մը չեն ներկայացներ յա-  
րաբերաբար ուրիշ վկայականներու: Բայց այս  
թուղթերը սկիզբն են այն մեծ գործին որ սկսած  
էք: Այս պահուս միտքս կորպայ իտալացի այն  
իեանագնացը որ կը մտազրէ Ալպեան լեռներուն  
գագաթը բարձրանալ: Բայց իր հայրենիքին ի  
պաշտպանութիւն հարկագրուած կ'ըլլայ պատե-  
րազմի երթալ: Հան կը կորսնցնէ իր մէկ սրուն-  
քը: Սակայն չի կորսնցներ իր յայսը: Տարիներ  
ետք, փայտէ սրունքով մը կը բարձրանայ լեռան  
դագաթը, ու իր փայտէ սրունքը ցցելով իտա-  
լիայի կ'ըսէ. — Ես փայտէ ոտքով ալ կրնամ գա-  
գաթը բարձրանալ, բայ է որ ուղեմ: Ես Զեղի,  
Սիրելի աշակերտներ, յաջողութեան գագաթներ  
բարձրանալու կարգութիւն ու յարատեռութիւն  
կը մաղթեմ»:

●●●

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

1951-1952 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Գերազնորհ Տեղապահ Սրբազն Հայր,  
Կիր. Սրբազններ, Հոգ. Հայրեր  
և Յարգելի հանդիսականներ.

Խոնարհաբար կուգամ ներկայացնել Սրբոց  
Թարգմանչաց Վարժարանի տարուան մը կեան-  
քին մեր տեղեկագիրը: Խորունկ զոհունակու-  
թեամբ կը ներկայացնեմ այս տեղեկագիրը անոր  
համար որ հակառակ երուսաղէմի աղետին ու  
մեջ ըջապատող մանաւանդ տնտեսական աննը-

պաստ պայմաններուն, մեր վարժարանը ինչպէ-  
ս ախտող՝ նոյնայէս աղէտին ներկայ չըրրորդ տա-  
րին՝ կը փակէ նշանակելի արդիւնքներով:

1951 Հոկտեմբեր 1-ին կը վերաբացուէր Ա-  
թարգմանչաց վարժարանը 510 երկուսն աշակե-  
ներով որոնցմէ 260-ը հետեւեցան Մանկապարտէ-  
զի, իսկ 250-ը նախակրթարանի դասընթացիննե-  
րուն: Այս թիւին վրայ առարւայ Ընթացքին  
հետզհետէ աւելցան 40 նոր վորքիկներ, որոց  
վարժարանիս բովանդակ աշակերտութեան թիւ  
ներկայ տարեփակին կը յանդի 550-ի:

Մանկապարտէզի աշակերտները ըստ նախը-  
թացի բաժնուած էին հինգ դասարաններու, իսկ  
նախակրթարանը վեց դասարաններու:

Պատօնելութիւն եւ ուսուցչական կազմ. — Տարե-  
սկից բէն մինչև Մարտ, վարժարանին տեխնական  
պաշտօնը վարեց աշակերտութեան և ուսուցչա-  
կան կազմի լայն համակրանքը վայելող և մեջի  
շատ սիրելի հոգ. Տ. Սերովը կ'ըս. Մանուկիանը  
սակայն հագեցնորհ Հայրութերք Զերդ Սրբազնու-  
թեան և Պատուարժ ան Տնօրինք Ֆալուլէն Նշանակ-  
ուած Ըլլալով նույիրակ Ս. Աթոռոյ Հարաւային  
Ամերիկայի: յաւ ի սիրտ պիտի ըսեմ որ դրոցընէ  
ներս իր ետի կը ճգէր զգալի բաց ըլլ, այդ բացը  
ոցնել վեր էր մեր ուժերէն և սակայն Զերդ Սրբ-  
ազնութեան հրամանին ընդառաջելու մեր որ-  
դիական պարտքը կը ստիպէր մեջի մեր ուժերէն  
վեր յանձնառութեան մը: կը մաղթեմ որ յուազի  
մեջ ունինանք մեր սիրելի Հայր Սերովընէ:  
ու մեր վարժարանը անգամ մը ևս վայելէ անօ-  
խնամքն ու սէրը:

Գալով ուսուցչական կազմին, Մանկապար-  
տէզը ունեցաւ հինգ ուսուցչականներ, որոնք մեր  
վորքիկներու լաւագոյն դաստիարակութեան հո-  
մար ըրին իրենց կարելին գինաւորութեամբ  
բարձրամեալ Մանկապարտէզպանուէի Օր. Տիգրա-  
նունի նալպանտեանի: Մանկապարտէզի ուսուց-  
չական կազմին համար ընդհանուրն ունին զնա-  
հատանքի և չնորհակալութեան պարտք, և ի  
մասնաւորի Օր. Տիգրանունի: Հայր Սերովընէ:  
իր փորձառու, խղճամիտ ու ազնիւ աշխատա-  
քով գիտցած է լաւագոյն զիխաւորել ու կազ-  
մակերպել Մանկապարտէզի դաստիարակչական  
գործը:

Նախակրթարանի ուսուցչական կազմը կը բաղկա-  
նալ վեց եկեղեցական և ութը աշխարհական ու-  
սուցիչ (5) ուսուցչունիներէ (3). Անոնց շանա-  
կիրութիւնն ու խղճամիտ աշխատանքը մեծա-  
պէս նպաստեց մեր վարժարանի բարձրք գոր-  
ծունեութեան: Ու այս առթիւ անոնց նկատմամբ  
ևս ունիմ միայն զնահատանքի ու չերմ չնորհա-  
կալութեան խօսքեր:

Կրթական մակուրպակ եւ օգի. — Անվարան կրնամ  
վկայել Սրբազն Հայր որ Թարգմանչաց վարժա-  
րանի աշակերտը երբեկցէ չի կրնար զաւանանել  
մեր եկեղեցական ու Ազգային օգիին, չնորհին:

պղային բարոյական և հոգեկան այն առողջ շատարակութեան որ կը ջամբռուի այդ յարկէն արքու, ու մանաւանդ շնորհիւ բարոյական հոգեկան անտեսական այն սիրելի հովանաւոր հմայքին թ Արքոց Յակոբեանց Միաբանութեանն է հանդի այ վարժարանին, ինչպէս նախորդ տարի նորուն այս տարի ևս ոչ մէկ տկարացում ունեցած այս ուղղութեամբ, ու տուինք ինչ որ արքին էր պատրաստելու համար մեր վարժարանի տղաքը օրաբէս ազգասէր, կրօնասէր ու մաքրութեան նկարագրով հայր, Առոր համար մեր ժողովրդի քաղաքական - եկեղեցական պատմութիւնը, կրօնքը ուսուցուեցան անթերի, ու ատիւ ոչ միայն վարժարանիս աշակերտութեան այլ նաև կարելի չափով անկէ զուրս դնուող մեր նախկին աշակերտութերուն, մասնաւրապէս անոնց որոնք անդամներ են վարժարանիս նրջանաւարտից Միութեան, կազմակերպիս զասախօսութիւններ, վիճաբանական զեղարքութական հանդիսութիւններ և այլն, Կրօնական նախանձախնդրութեամբ Ս. Զատիկի տօնին մանաւոր ըշջաբերականով հրաւիրեցինք երկրորդական ստար վարժարաններու հարիւրի մօս աշակերտուները կատարելու իրենց կրօնական պարուսուութիւնները, մասնաւրապէս Ս. Հազրդութեան իրենց մասնակցութեամբ, և ուրախ նէք որ մեր Կոչին պատասխաննեց անոնց բացաձակ մեծ ամասնութիւնը:

Իսկ դպրոցին կրթական մակարդակը ինչպէս մըս, այս տարի ևս զուգընթաց էր ստար նախկին բարանաներու կրթական մակարդակին, այնպէս որ մեր վարժարաններ ելուզ ըշջանաւարտ մը առանց ընկըրեկումի կրնայ հետեւ իւ ստար երկրորդական վարժարաններու Ա. զասարանին, իսկ ուշիմ ըշջանաւարտութիւններ նոյնիսէ Բ. զասարանին: Այս տարի կը զասաւանդուէին նոր լեզուներ, Հայերէն (Քրարար և Աշխարհաբար), Անգլերէն, Ֆրանսերէն և Արաբերէն, Լեզուական նիւղին մէջ միակ թերթութիւնը որ ունեցանք Արաբերէնի տկար ուսուցումն է եղած, ինչպէս միշտ նոյնպէս այս տարի: Վերջին երեք ամիսներուն միայն բարձրագոյն երեք զասարաններու Արաբերէնի ուսուցչին փոփոխութեամբ զիտուեցան որ նոր ուսուցչուցին Օր. Շուշան Պապիկին գհացուցիչ արգիւնք յառաջ բերաւ, Ցառաջիկայ տարուան համար, բարձրագոյն զասարաններու Արաբերէնի ուսուցչման համար պիտի ունենք Կարող ուսուցչիչ մը, իսկ Մաթէմաթիք ու Գիտական զամեր զասաւանդուեցան անթերի նախանձախնդրութեամբ:

Մեր զարոցի Ազգային, Կրթական, բարոյական և աւագոյն աշխատանքին համար, Միաբան Հայր, ունիմ նաև վկայութիւնը ստար վարժարաններու տնօրէններուն: Մեր բոլոր տղաքը զիւթէ առանց բացառութեան Արքոց Թարգմանչաց Վարժարանը աւարտելէ ետք, ստար երկրորդական վարժարաններու մէջ յայտնաբերած են չանասէր ոգի, բարոյական բարձր նկարագիր: Աղջային ու կրօնական ամսուր կեցուածք, և այս

ձևով անոնք Ո. Աթոռին, Զերդ Գերապատուութեան և բովանդակ Միաբանութեան միջն ու զնաբերութիւնները իրենց նկատմամբ ի թերեւնն հանած:

Մարզական կեամբ. — Անոնք որ ներկայ եղանացի կիրակի ժառանգաւորաց վարժարանի գաշտին՝ մեր տարբեկան մարզականդէսին: Իրենց հայութեան աւելարդ պիտի ըլլար այս ամելեկաղբին մէջ մեր մարզական շարժումին համար արձանագրութիւք գնահատական խօսքերը: Միաբան Հայր, մեր պաշտամանդէսը կատարուեցաւ ի ներկայութեան Միաբանութեան, ստար կրօնական և կառավարական ներկայացուցիչներու և ժողովրդի շատ խուռն բազմութեան մը: Անոնք բոլորը միաբերան ունեցան միայն զնահատանքի արտայայտութիւն: մարզիկներու յայտնաբերած ոգին, ճիգին, կարգապահութեան ու մարզական արդիւնքին յիշունանդրուն մէկ մարզահանդէսին արգիւնքը եղաւ շատ խանդավառի: ու ասիկա նորիւ այլ մարզին մէջ թափուած աշխատանքին, Զորս տարիներու մարզական կեամբ բարձրագոյնն է, հակառակ քաղաքին յիրենց անունդի պակասութեան: Մարզական զործը յանձնուած է վարժարանի ուսուութիւնն Պ. կաթոլիկ սեպանի արքունիք ի նոր համար զնահատանքի և շնորհակալութեան խօսք:

Ակադեմիական շահման. — Տարեշրջանի վերջին ամիսներուն ձեռնարկեցինք վերակազմել վարժարանիս սկառուտական խումբը: Տղոց բաժինը կ'ընթանայ զանգաղի կարգ մը թէքնիք պատճառներու որոնք յառաջիկայ տարեսկիզերին պիտի ըլլան հարթուած: Ակսած ենք սակայն զասախօսութիւններուն և սկառուտական արշաւները որոնց կը հետեւ ին եռանդով մեր սահերը:

Բալկորուիին նորութիւն մը եղաւ Արենուային և Արծովիկային խումբերու կազմակերպումը աղջկանց բաժնին համար: Այժմ մեր խումբը քաղաքիս միակն է և ամենէն ստուարը, բազկացած 80 Արծուիկուերէ և Արենուային թէքին Այս գործին մէջ իրենց օժանդակութիւնը բերին նաև, Ա. Թ. Երշանաւարտից Միութեան կարգ մը անդամութիւնները, որոնցմէ Օր. Աղնիւ եաղուաբեան նշանակուած է իրեւ պատասխանատու զիմանը խումբին: Շնօրհակալութիւնը թէ իրեն և թէ իրազական օժանդակ օրիորդներուն:

Ա. Թ. Երշանաւարտից Միութեան. — Մեր աշխատանքներու կարգին կարգէ յիշատակել նաև զիւթենք, անոր համար որ անոնք կը գործն զարդարանէններս, տեսչի անմիջական հսկողութեան

տակ ու այնպէս սերտիւ միաձուլուած վարժարանի ընդհանուր զրութեան հետ, որ կարծես Ըլլան վարժարանի եօթերորդ զասարանը՝ Եռամսեայ կանոնաւոր ժամանակացոյցներով անոնք ամէն կիրակի կ'ունենան զասախօսական, վիճարանական, գեղարուեստական, արշաւային հաւաքոյթներ, այնպէս առիթ ընծայելով մեր շըրջանաւարտ սաներուն ինքնինքնին միշտ զգալու զպրցէն ու անոր ազգային ու կրօնաչունչ ոգբիէն ներս Անոնք նոյն ատեն (թէկ փոքր չափով մը) կ'աշխատին օժանդակել աղքատ ուսանողներու զրենական պիտոյից, անշուշտ իրենց կարելիս թեան սահմաններուն մէջ: Անհրաժշտ է որ տեսչութեան կողմէ յատուեկ ուշագրութեան նուրիսի այս կազմակերպութեան, որովհետեւ լայն կարելիութիւններ կան այս կազմակերպութիւնը օգտագործելու ի շահ մեր վարժարանի ոգեկանին, բարյականին և լընդհանուրն մեր ազգային-քրօնական ազգեցութեան տեականացման մեր վարժարանէն դուրս զանուող երիտասարդութեան մէջ:

**Տնօտական.** — Նուազ խանդականի է մեր վարժարանի տնտեսական կացութեան վերաբերող այս զուսիս: Մեր աշակերտութեան հազիւ վճարովի է. քանի մը բացառութիւններէ զատ մնացեալները բացարակ մեծամասնութեամբ վի կամ վի նուռազեցուած սակերով, ու այդ ալ կը գտնձենք հազարումէկ զժուարութիւններով և ըսի-ըսաւներով: Կարելի է առարկել մերազնէց չքաւորութիւնը, և Ս. բաղաքիս օրէ օր անող տնտեսական զժարախութիւնը, և սակայն կարելի է մատնանշել պարագաներ ուր մարդիկ հակամէտ են աւելի օգտուիլ քան իրենց տարեթոշակներու կանոնաւոր վճարումներով օգնել այս փառաւոր Հաստատութեան որմէ այնքան լայնօրէն կ'օգտուին իրենց զաւակները: Մեր հաւաքած տարեկան ամբողջ վճարումները հազիւ կրնան փակել վարժարանին երկու ամիսներու ժամբքը միայն: Մեզի համար խղճի նըսիրական պարտք կը սեպենք մեր կարօտ ուսանողներու ձրի դաստիարակութիւնը, և սակայն կը սպասենք որ նիթապէս ինքնարան մեր ազգային կամ ազգի օժանդակութեան ու պատրաստակամ չափերով օժանդակել մեր կրթական գործին: Գիտցէք որ այդ օժանդակութիւնը ձեզմէ, ձեզի է որ կը վերադառնայ նոյնութեամբ օգտագործելով միայն ու միայն Զեր զաւակներու ժամանական ազգային կարգավորութեան, բարյական, Փիզիքական բարեկեցութեան:

Դուրսէն մեր ստացած նպաստները չնչին բան էն արնար, ամիս մը առաջ միայն մասնաւոր զիմումի մը վրայ այդ գումարը բարձրացուցինք թ. Տ. 20ի: Դարձեալ ստացած ենք 50 ձեռք նոր զենու և բաժնած մանկապարտէզի փոքրիկների կամներու Միութիւնը մեր բազմաթիւ կարօտ ստանողներէն ստանձնած է 10 աշակերտներու տարեթոշակներուն ու զրենական պիտոյից ժամ-

քը: Անոնց բոլորին կը յայտնենք մեր չնորակալութիւնները:

իսկ մեր տարեկան պազարէն ունեցանք 100 տինարի մուտք մը:

Այս չնչին մուտքերէն գուրս սակայն մեր վարժարանը ունի ելքի խոշոր պիտանէ մը տարեկան մատ 2000 տինարի, (Պաղեստինեան պատերազմի ընթացքին ուումբերէ, և վարժարանէն ներս բանակող զինուորներէն աւերածած են մեծ մասը վարժարանի հաներուն և մանկավարժական պիտոյքներուն որոնք հետզհետէ կը նորոգուին) որ ամբողջութեամբ կը ծանրանայ Ս. Յակոբանց Միաբանութեան ուսաւին: Ու մենք Սրբազն այս հանդիմանայ առաջարկութեան մէջ ամենէն ընկառւած կացութեան ու մէկ բան կը խնայէք չի նուազեցնելու համար մեր լոյսի հաստատութեան,

Երուալզէմահաճայութիւնը հիացումով միայն կրնայ զիտել թէ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը ինչ գուրզուրոտ սէր ու խնամք ունեցած է իրենց զաւակներու դաստիարակութեան ու այս մեծ դասաստան նկատմամբ, անոր հաստատութենէն մինչև այսօր, ու իրաւ ալ մեր վարժարանի բոլոր այցելուները կը մեկնին անկի խոր գոնունակութեամբ՝ ի տես անոր փառայիշ չէնքին, մաքրութեան, կարգապահութեան, դասաւանդութեանց կանոնաւորութեան, շամրուած ոգիին, ուսման բարձր մակարզակին, ևլ:

Ուրախի եմ յայտնելու նաև Սրբազն հայր, որ մեր աշակերտները ի թերե չեն հանած Սրբոց Յակոբեանց Միաբանութեան այս սէրն ու զնամերութիւնը, սրովհետու մեր վարժարանէն զորութ ալ զոնուած ըլլան անոնք օտար թէ Հայ վարժարաններու, պաշտօնատուններու և կեանքի զանազան սպազրէզներուն մէջ, անոնք իլլատակուած են զավեսուվ ու գրաւած բացարկի դիրքեր:

Այժմ Զերդ Սրբազնութեան կը ներկայացնեմ մեր վարժարանին թիւով 33 ընթացաւարտ սաները որոնք կուգան աւելնալ վարժարանէն մէկ նամակարիւրաւոր ընթացաւարտներու փաղանդին:

Անոնցմէ հետեւեալ 13ը կը վկայուին վարժարանի Պատուույ վկայականով: —

1. Աննա Գևորգիան
2. Հայկանու Տիրաւուեան
3. Հովհաննէս Կառավարեան
4. Մարի Տ. Մարքուսեան
5. Մելիքն Եղիսեան
6. Սարենիկ Պատիկեան
7. Վեհանու Ռուբակեան
8. Գևարի Գարյանեան
9. Խաչիկ Տիգայիլիսեան
10. Հայկազ Ազատեան
11. Ցարութիւն Յակոբեան
12. Ցարութիւն Զագրեան
13. Սարգսի Շնորհաւեան

իսկ միացեալ 20ը կը ստանան աւարտական վկայականներ:

կը խնդրեմ Սրբազան Հայր, «ո՞ անսնց վը-  
պականներու բաշխումին հետ օրէնէք նաև զի-  
նիք: սրբէսզի Զեր օրէնութեանց ընդմէջէն  
անսնց զանան արգասարեր ու պտղաբեր, ըլլա-  
ռ համար հագարտանքի առիթ զիբենք կերտող  
և լցոնող մեր սիրելի Ս. Աթոռին և Մրոց  
քարգմանչաց Վարժարանի դաստիարակ-  
իչան մեծ աշխատանքին:

Փակելէ առաջ իմ տեղեկագիրը կը յայտնեմ  
յնորհակալութիւններս վարժարանիս յարգելի  
ուսուցչական կազմին, որ նույիրումով, սրբավ  
և զոհազութիւններու գինով զօրավիթ կանգնե-  
ցա Ս. Թարգմանչաց Վարժարանի դաստիարակ-  
իչան մեծ աշխատանքին:

Ի վերջոյ չնորհակալութեան խոչոր բաժին  
յունիմ Զեր Սրբազնութեան նկատմամբ, բոլոր  
այս քաջալեր օժանդակութեանց համար որ երը  
և ից չի լւացաք մեր նկատմամբ, Պաշտօննե-  
րու իրագործումը յաճախ նիւթական շատ մը  
պղախներէ անդին արդիւնք են տրամադրու-  
թեանց, հոգեկան վիճակներու, ու դուք Սրբազան  
Հայր, ըրիք Զեր կարիւին ի հաշիւ այդ տրամա-  
դրութեան, հոգեկան արդիւնաբար վիճակներուն,  
ընթացք տալով մեր բոլոր խնդրանքներուն, ու  
ամէն անգամ մեզ զիմաւորելով Զեր հայրական  
բարի ժպիտովն ու հոգիին ազնուութեամբը: «Ո՞  
մեզի համար բարձր է ամէն գնահատանքէ: Ու  
թոյ տուէք Սրբազան Հայր, ըսելու որ ատով  
իսկ Զերն է ինչ որ կը դտնէք մեր տեղեկագրէն  
իրեւ լաւ ու բարի — Զեզմէ Զեզի վերա-  
դարձուած:

Իսկ եթէ կան թերիներ հաճնցէք զանոնք  
վերագրել մեր անձին տկարութեան որուն հա-  
մար եղէք ներողամիտ:

Կիրեղ ԱԱԾ ԴԱԲԻԿԵԱՆ  
ՏԵՍՈՒՅ Ս. Թ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

Երևանի,  
20 Յուլիս 1952



### ՆՈՐ ՊԱՇՏՈՆԱԿ

Ս. Աթոռէն ներս, Յուլիս ամսոյ ընթացքին,  
հետեւել վարչական փոխիսութիւնները կատար-  
ուած են: —

Սրբոց Յակոբեանց Միարանութեան Տարե-  
կան Ընդհանուր ժողովոյ վիճակաւ  
դադարեալ անզամներուն տեղ ընտրեց Հոգ. Տ.  
Միւռան Վրդ. Կրամակեանը և վերընտրեց Հոգ. Տ.  
Հայկաղուն Վրդ. Արրանշամեանը և Հոգ. Տ. Պար-  
զի Վրդ. Վրթանէսեանը:

Ս. Աթոռույթ Միարաններէն Հոգ. Տ. Աթոռիքէ  
Վրդ. Մանուկեան, Նշանակուած ըլլալոյ Ամե-  
նայն Հայոց Վիճ. Հայրապետի Պատուիրակ եւ-  
րոպայի թեմին, և առաջնորդ Բարիզի և Երշա-  
կացից. Ո. Աթոռոյս Պատ. Տնօրէն ժողովը իր  
փոխարէն ժառանգաւորաց Վարժարանի և Ըն-  
ձայարանի տեսուի կարգեց Հոգ. Տ. Հայկաղուն  
Վրդ. Արրանշամեանը:

Դարձեալ Հոգ. Տ. Աթոռիքէ Վրդ. Մանուկեանի  
տեղ. Ո. Աթոռոյս Սրբոց Թարգմանչաց Վարժա-  
րանի տեսու ընտրուեցաւ Հոգ. Տ. Կիւրեզ Արդ.  
Գարբիկեան:

Ս. Աթոռոյս Տպարանի տեսու Նշանակուե-  
ցաւ Հոգ. Տ. Զաւէն Արդ. Զինշնեան:

Ո. Ասուուածածնայ Տաճարին, Ո. Փրկի Վա-  
նուց և Կիւրեզինկեան Մատենադարանի տեսու

Նշանակուեցաւ Հոգ. Տ. Անուշաւան Արդ. Զըդ-

շանեան:

Ս. Հրեշտակապետաց Վանուց առժամեայ  
տեսու Նշանակուեցաւ Հոգ. Տ. Վարուժան Արդ.

Դապարանաեան որ նոյն տահն պիտի վարէ նաև

Ս. Աթոռի շորատան տեսչութիւնը:

Լիայոց մնք որ վերոյիշեալ բոլոր Հոգ. Հայ-  
րերը իրենց նոր պաշտօնները պիտի կատարեն  
անթերի խնձորութեամբ ի փառս Ս. Աթոռին և  
մեր ժողովուրդին:

Ցաշողութիւն կը մաղթենք իրենց:

### ՆՈՐԻՐԱԾՈՒՈՒԹԻՒՆ

Լուսանի հոգեւոր հովի Հոգ. Տ. Պատ. Վ. Ի. Թու-  
մայեանի նախանձենութեամբ, Լուսանարանի Տեր և  
Ցիկին եղուադ և Շաւանիկ Պէնիկան ամոքք, իրենց  
ամասարեան 25-ամեայ արձար յաքեւանի տօնախմ-  
բութեան առիքով, օրինակելի և գեղեցիկ զայտարար  
ունեցած են արդիգելավ Ս. Աթոռոյս ժառանգաւորաց  
Վարժարանի սան մը:

Մի՛ն այս առքի իր որտակին շնորհակալութիւն-  
ներ կը յայտն ազգակա եւ դպրանուե ամուխ, եւ  
մարք ու Տէր եկառ եւ եղանիկ տարինեւ պար-  
զեւէ, հասցենալ գիրենք իրենց առամանեայ յօրեւ-  
եանի օճախաւորեամ, եւ այս կրութեան ի նորոս  
իրենց տաւ մէկի փախարեն հազարապահի վարձ-  
նառոյ լիլա:

Ժառ. Վարժարանին ժամին եւ խոյցածայն փա-  
րիկն Սողոմոն Էջենեանը յետ այս պիտի կայուի  
Պէնիկան Սան:



սեղ սեղ  
Ք Բ Ք Բ  
մ մ

Երկու ամիսներ առաջ ցաւով կը լսէինք բերերէն մահը Ս. Արօռոյս մեծ մեջ բարերար Գալուս Կիւլպէնկեանի եղբօր՝ Գառնիկ Կիւլպէնկեանի, որ տեղի ունեցած ցածր էր Փարիզի մեջ:

Խոկ 2 Յուլիս 1952 ին, Գեր. Տեղապահ Մրգարան Հօր դրկուած նեռագիր պիտի կը գուժեր մահը Վասեմ. Գալուս Կիւլպէնկեանի Տիկնոց՝ Տիկ. Նուարդ Կիւլպէնկեանի:

Այս կրկնապես տիսուր առիրներով, 4 Յուլիս 1952 ին, Ս. Յակոբեանց անց Մայր Տաճարին մեջ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր Ս. Պատարաց: ազ: Խոկ Կիր. 6 Յուլիսին Միաբանութեան սեղանատան մեջ տեղի ունեցաւ հոգենաւ: ու:

Ողբացեալ Տիկնոց մահեն շաբար մը առաջ, հեռագիր մը եկած էր խնդրել բելու որ Տեր եւ Տիկ. Կիւլպէնկեաններու ամուսնութեան 50րդ տարւոյ յորբելեանը անը տօնուի: Սակայն բազդին մեկ խաղովք, հանգուցեալին մահը տեղի կ'ունենար:

Տիկ. Նուարդ դուստրն էր Էսաեան Վրժ. ինմանդիր եւ ազգային բարերարաց Յովին. Էսաեանի: Եր նախակրուտիւնը ստացած էր ծննդավայրին մեջ, փորձառու ու ու ուսուցիչներու խնամքին ներեւի: Ննունի իր սուր իմացականութեան եւ ազիւ զիւ նկարագրին, յարգան կը ներենչէր ամենուրեվ եւ ամենուն:

Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներէն շատեր կը յիշեն հանգուցեալ բեալ Տիկնոց այցելուրիւնը Ս. Արօռ, եւ բարեպատճիկ եւ զերմ վերաբերմունքը ազգակառածն այս Հասատութեան նկատմամբ: Եր մահուան տիսուր առիրով մխիրա արական յուս մըն է այս, մեզ բոլորս սփոփող:

Մի՛ն, յանուն Գեր. Տեղապահ Մրգարան Հօր եւ բովանդակ Ս. Յակոբեանց ան Միաբանութեան, իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Կիւլպէնկեան Գերդաստանի սպաւոր պարագաներուն, խնդրելով Տիրոց օրհնութիւնը եւ պահպանութիւնը Կիւլպէնկեան Տաճ բոլոր ի կենդանութեան եղող անդամներուն վրայ:

Տերը բող լուսաւորէ հանգուցեալներու հոգին:



Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem

Editor - Father Zaven Chinchinian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

## ՄԱՍԻՆ ՏԱԿ ԵՆ

Բանասէր - Հայկաբան - Պատմաբան՝ հանգուցեալ

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԻԿԵԱՆԻ

## **ԲԱՌԳԻՐՔ ՍԵՐԱՍՏԱՀԱՅ ԳԱԻԱՌԱԼԵԶՈՒԻ**

Երկասիրութիւնը, պսակեալ իզմիրեանց Գրական Մրցանական

Ա. — Զայնաբանութիւն եւ Զայնախօսութիւն Սերաստահայ քարբառի.  
 Բ. — Բառզիրք Սերաստահայ Գաւառալեզուի. Գ. — Ժողովրդական առածք,  
 հանելուկներ, վիճակ, բաղդասելումներ, ըուսասելումներ, բառախաղեր,  
 աղօքներ, մանիներ, տաղեր, պարերգներ, օրերգներ, անէքրոններ, առակ-  
 ներ, նէֆիաքներ, տեղական անուններ, ցանկ՝ յատուկ անուններու եւ Սե-  
 րաստահայ մականուններու եւայն, եւայն:



## **Յ. ՕՃԱԿԱՆԻ**

## **ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ**

Ե. ՀԱՏՈՐ

“ԻՐԱՊԱՇՏՆԵՐԸ,,

(Մուլք, Արփիար Արփիարեան, Լեռն Բաւալեան, Գրիգոր Զօհրապ,  
 Հրանդ, Տիգրան Կամարական, Արշակ Զապանեան, Սիպիլ,  
 Հրանդ Սաստուր, եւ Վերջաբան մը):



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

## ՀՐԱԽԱՏՐԱԳԻՐ ԷՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան իրաւասու անդամներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ Ընկերութեան լթ. Տարեկան Ընդհանուր ժողովին, որ պիտի գումարուի Շաբաթ օր. 22 նոյեմբեր 1952, առաւօտեան ժամը 9.30ին, Միութեան Կեղրոնական Դրասենեակին մէջ, 295 Fifth Ave., New York N. Y.

Միեւնոյն ատեն կը ծանուցուի թէ, վերոյիշեալ թուականին օրինական մնացած մասնութիւն զգոյանալու պարագային, ներկայս պիտի նկատուի իրք երկրորդ հրատէ եւ ըստ այնմ ժողովը պիտի գումարուի 1952 Դեկտեմբեր 6 ին եւ 7 ին, Շաբաթ եւ կիրակի օրերը, ժամը 9.30ին, Essex Houseի մէջ, 160 Central Park South, New York.

Օ.Ր.Ա.Կ.Օ.Ր.Գ.

1. Ընդհանուր Տեղեկագիր 1951 Տարեշրջանի:
2. Ընդհանուր Հաշուեստութիւն 1951 Տարեշրջանի:
3. Ընտրութիւն Կեդր. Վարչ. ժողովի վիճակաւ դադարեալ անդամներու տեղ:
4. Վաւերացում բարեփոխսեալ Հիմնական Կանոնագրի:
5. Զեկուցում Միութեան Դպրոցաշինութեան ծեռնարկին մասին:
6. Առաջարկներ եւ Թեւադրութիւններ:
7. Ուղերձներ:

Նիւ Երեմ, 11 Օգոստ. 1952

Ի դիմաց ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ  
ԱՏԵՆԱԴՊԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ

Մ. Մ. ՅՈՎՈՒՔԻԵՍ Ա. ԳԱՐԱԿԻԶՅԱՆ

ՀԱՅԱ ՏԵՍՈՒԻ Ձ

Սամազու համար դիմել

Հեղինակին

Հետեւալ հասցեու. —

Righth. Rev.

Father Barkev Vartanessian

c/o Armenian Patriarchate,

P. O. Box 4001, Old City  
Jerusalem, Via Amman (Jordan).

ՊԱՐԳԵԼ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ

ԵՂԻՃԵ ՊԱՏՄԱԳԻՐ

Ե

ՎԱՐԴԱՆԱՑ ՊԱՏԵՐԱՋՄԸ

(1500-աւեա ՅՈՐԵԼԵԱՆԻ ԱՌԵՒ)

Էջ՝ 224 • Գիր. 300 գիլս



ՏՊԱՐԱՆ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՒԵԱՆՑ  
ԵՐՈՒՍԱԼԵՄ

1951